ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ

91·99
-28

ՊԵՏՀՐԱՏ

19 NOV 2011

ՀՍՍՌ Арм.ССР

Ով Դատասխան Գյոթեյին
Լուսմտածո՛, այս աշխարհում յերբ
Չեն լինի Վոգու տերեր ու քորտեր-
Կհնչե կրկին բազմաբեղուն բերք,
Յեվ կրկի՛ն, կրկի՛ն ուղիներում մեր
Յերգի Դիցուհին մեզ կառաջնորդե:

Յեղիշե Չարենց

Յեղիշե Չարենց



Յելնում է Նոր Յերեւան...



Ուր չկան փերեր, չկան ծորփեր...

Գիրք ճանապարհի

Պոեմներ և բանաստեղծություններ

Պետական Հրատարակչություն
Յերեվան MCMXXXIII

16.07.2013

Բոլոր տիտղոսաթերթերը, ծաղիկը.
սուպեր շապիկը, Ֆորզացը յեվ
հեղինակի պորտրեն նկարիչ
ՀԱԿՈԲ ԿՈՋՈՅԱՆԻ

Գիրքս նվիրում եմ իմ դստեր
ԱՐՓԵՆԻԿ ՉԱՐԵՆՑԻՆ

ԱԿՐՈՍՏԻՔՈՍ

Արեգա՛կ, ովկիան զորության,
Րոպե առ րոպե քո հրով
Փայփայի՛ր, տուր զորություն
Եյակի՛ն այս յերգի ու սիրո.
Նա դեռ փո՛քր է այնքան ու թույլ,
Իր սիրտը — դեռ սափոր է մաքուր, —
Կազդուրվի՛ թող նա քո հրով։

Չլինի՛ թող որ աշխարհում,
Արեգա՛կ, վոր յես չերգեմ
Րախճալյան, ռամիկ այս դարում,
Եյությամբ քո լցված, հերկեց,
Նվիրված պայքարին այս ու քեզ
Ցարդ չեղած տաղեր ու յերգեր։ —

1933. V. 18.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՌՈՒՂԻՆԵՐՈՎ

ՊՈԵՄՆԵՐ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ



ԱՌՆԱՆՔ — բարբառենք նզովք մենք նախ
Մսրամելիքին, Թագավորին։
Դառնանք — բարբառենք նզովք ապա
Ձենով-Օհանին, իշխանին նենգ։
Դառնանք — բարբառենք նզովք ապա
Ա՛յլ իշխաններին բոլոր այն մեր,
Վոր բերին մեզ մահ, ու մուժ, ու նեռ։

Փառք փառաբանենք ապա մենք մեր
Առյուծ-Մհերին, դյուցազնին քաջ,
Դավիթին՝ նրա վորդուն դյուցազն,
Մհերին՝ նրա վորդուն անմահ, —
Վողջ ժողովրդին ապա Սասնա,
Վոր լուրթ լեռներում մի որ բազմած
Հորինեց պայծառ զրույցը այս —
Յեվ անցավ անհետ, դարձավ յերազ: —

Սկսենք ապա հանգով ճարտար
Սասունցի Դավթի զրույցն արդար,
Վոր հնալու չե հավիտյան- հար
Զրույց իմաստուն և վոսկեբառ: —

Ա

Մհերը՝ զարմով արևադուն՝
Քառասուն տարի իշխեց Սասուն,
Իբրև այր արդար և դյուցազուն: —
Նա պատերազմներ մղեց բազում
Թշնամիների հանդեպ հզոր,
Վոր խուժում եյին անբավ ուժով
Տիրելու բարձրիկ յերկրին Սասուն, —
Բայց մարտերում այդ հզորազոր
Հաղթում եր նա միշտ իր սրով սուր: —
Վորպես այր ռամիկ ու դյուցազուն՝
Նա հուր ձի ուներ, կայծակե սուր,
Բայց ուժը նրա, վոր չեր կասում,

Ժողովուրդն եր իր բազմաբազում:
Յեվ անպարտ եր նա իր սրով սուր
Յեվ ժողովրդով ռամիկ ու սուրբ: —

Բ

Մհերի որով յերկրում Սասուն
Ապրում եր ռամիկ մի ժողովուրդ,
Չուներ իշխաններ նա դեռ հմուտ,
Իշխաններ դժնի, ու չար, ու մութ,
Յեվ ապրում եր իր լեռներում լուրթ
Վաստակով իր պարզ, քրտինքով սուրբ:
Առյուծ-Մհերին, դյուցազնին մեր
Նա ինքն եր իրեն իշխան կարգել —
Յեվ ապրում եր իր լեռներում դեռ
Նա կյանքով ազատ ու անարգել: —

Գ

Ո՜, ռամիկ կյանքի անգո պատկեր,
Դարերում հեռու, ու հին, ու ծեր,
Յերբ մարդկությունը ապրում եր դեռ
Վաստակով արդար, ու սուրբ, ու վեհ:
Ո՜, վաղընջական արշալույսներ,
Մանուկ մարդկության որեր լուսե,
Յերբ լուրթ լեռներում դեռ չեր բուսել
Դժնի բռնության ընձյուղը սև,
Յերբ իշխում եյին աշխարհում դեռ
Ռամիկ ու արդար դյուցազուններ...

Դ

Իշխեց նա այսպես, դյուցազնը մեր
Քառասուն տարի։ — Յեվ ահա ծեր
Մազերին նրա, գլխին հուրհեր
Իջավ մառախուղ, ցրտին ձմեռ։ —
Դարձավ նա զառամ ու ալեհեր,
Յեվ կամաց-կամաց դյուցազնին ծեր
Սկսեց պատել, ինչպես գիշեր,
Վիշտ անբուժելի ու մահաբեր։ —
Զուներ նա ժառանգ աշխարհում դեռ —
Յեվ մտորում եր դյուցազնը ծեր։

Ե

Մտորում եր նա, դյուցազնը ծեր,
Վոր մնալու յեն յերկրին անտեր, —
Բարձրաբերձ լեռներ, հարուստ հանդեր,
Յեվ վոսոխի ու չարի հանդեպ
Ռամիկ ժողովուրդ՝ անկար, անգետ։ —
Մտածում եր նա, դյուցազնը սուրբ,
Վոր անցնելու յե իր փառքը զուր,
Վոր իր յերկնահեց յերկիրն հզոր
Դառնալու յե վաղն հազար ու բյուր
Թշնամիների ավար ու կուր։ —
Յեվ այսպես՝ հասած ծերության դուռ՝
Մտորում եր նա սրտով տխուր,
Յեվ իր հետ մեկտեղ, թախիծով հուր,
Ժողովուրդն եր վողջ մտորում լուռ։ —

Զ

Կարող ե սակայն պատահել, վոր՝
Վորքան ել լինի ապագան մութ՝
Մնա անժառանգ ու անսերունդ
Յերկիր մի ամբողջ ու ժողովուրդ։ —
Կարող ե լինել, վոր յերկրում լուրթ,
Վորքան ել խավարն իջնի տխուր,
Զրացվի հանկարծ հրաշքով հուր
Գալիքի համար փրկության դուռ։ —
Յեվ ահա — մի վառ ու պայծառ որ —
Հրաշքով անհաս ու զորավոր —
Առյուծ-Մհերին մեր ալեոր
Ծնվեց մի մանկիկ արևավոր։ —

Է

Ծնվեց մի մանկիկ արևավոր
Առյուծ-Մհերին իբրև ժառանգ,
Դավիթ անվանեց ծերը նրան,
Փառք տվեց ապա բախտին իրա,
Վոր հուշն իր ել հար յերկրի վրա
Պիտի առկայծի ու հուրհուրա։ —
Յեվ նայելով իր մանուկ Դավթին՝
Նա պայծառացավ սրտով կրկին,
Նա ինքն եր կարծես յեկել յերկիր
Հրաշքով մի սուրբ ու անհնար, —
Նա ինքն եր կարծես յեկել աշխարհ
Ու հուր-հավիտյան պիտի մնար…

Ը

Գիտեր նա արդեն, դյուցազնը ծեր,
Վոր դյուցազուն է Դավիթն հուրհեր,
Վոր յերկրին իր լուրթ, ու բարձր, ու վեհ
Վորքան ել ահ գա, վորքան ավեր —
Կելնե Սասունցի Դավիթը վեր,
Իբրև նոր դյուցազն ու նոր Մհեր։
Գիտեր, վոր արդեն յերկրին Սասուն,
Իր ժողովրդին ռամիկ ու սուրբ
Թեկուզ փորձանքներ լինեն բազում,
Վորքան ել տևեն նոքա յերկար —
Ահա Դավիթը իր դյուցազուն,
Իր ժողովրդի բազուկը սուրբ՝
Յեվ արդար, և՛ վեհ, և՛ աներկբա…
Ցնծաց նա սրտով իր աներեր,
Այդ ինքն էր կարծես ծնվել յերեկ,
Խոր խավարի մեջ տեսել ցերեկ.
Փարվեց կարոտով վորդուն նորեկ —
Խանդով խնդագին գրկեց նրան, —
Փակեց նա ապա աչքերը սեգ —
Յեվ ինքն ել, կինն ել ընկան — մեռան…

Թ

Յերբ մեռավ այսպես Մհերը ծեր,
Թողնելով մանկանն իր նորածին —
Սասմա իշխաններն յեկան — ասին,

Թե մերն է հիմա Մհերի ձին,
Յեվ տեր կանգնեցին ու տիրեցին
Մհերի ամբողջ ունեցածին։ —
Յեկան իշխաններն ու խլեցին
Մհերի հողերն ու նրա ձին,
Մհերի զորքերը ցրեցին
Յեվ կալվածները բաժանեցին։ —
Յեվ տիրանալով յերկրին այսպես՝
Ձենով-Օհանին բերին հանդես,
Վոր իբրև հմուտ ու հեռատես
Այր հավատարիմ, իշխան ու մեծ —
Կառավարե և իշխե իրենց։—

Ժ

Ձենով-Օհանը դարձավ իշխան…
Յեվ Օհանը յերբ իշխան դարձավ —
Առյուծ-Մհերի զենքերն հրցայտ,
Նժույգներն այն հուր, սուրը կայծակ —
Հավաքեց, լցրեց մի քարանձավ։
Մոռացած նրա փառքը պայծառ՝
Թաքցրեց նրա զենքերն հրցայտ,
Առյուծ-Մհերի սուրը կայծակ
Յեվ զորությունը նրա անծայր։ —
Հավաքեց ապա, տիրեց իսկույն
Առյուծ-Մհերի անբավ վոսկուն,
Սրտում ահ հազար, հազար սոսկում՝
Աչքերը չռեց նրա վոսկուն։ —

Մոռացած նրա համբավը հավետ՝
Նրա վաստակած վոսկուն ցավեց,
Իբրև վոռոխից աշխարհավեր
Միակ փրկություն ու ապավեն։ —
Իսկ գյուղացին Դավթին, մանկանն հուրհեր
Նա հոլլիվ կարդեց սարերում մեր,
Վոր խաշն արածե ամառ-ձմեռ,
Իսկ գիշերները քնի մի ծեր,
Մի այրի կնոջ խուղում, վոր էլ
Մոռանա հավետ, վոր գյուղացուն
Իր հայրը ուներ կայծակե սուր,
Հուր նժույգ ուներ, զրահներ հուր, —
Զրկելով նրան այսպես մի որ
Զենքերից իր քաջ, գյուղացուն հոր։—

ԺԱ

Ո՛, Առյուծ-Մհե՛ր, ռամի՛կ արդար,
Փրկության պատնե՛շ չարից չարկամ,
Ձեռք ժողովրդի, ուժ տիրական,
Անհատնելի ու անեզրական...
Մինչև բարձրանար վերջին անգամ
Գյուղացուն Դավիթն իր քնից վեր —
Ձենով-Օհանը, իշխանն այն նեռ
Դեռ վորքա՜ն պիտի քրտինք քամեր,
Յեվ ինքնությունն ու հուր գանձը մեր
Տա՛ր զարկիչներին աշխարհավեր...

ԺԲ

Մարամելիքը, արքան այն նեռ,
Յերբ լսեց մի որ յերկրում իր ջեռ,
Վոր չկա Սասնում Առյուծ-Մհեր,
Վոր իշխաններն են արդեն տիրել
Լեռներին Սասմա ու դարձել տեր —
Յեկավ, պաշարեց հովիտ ու լեռ,
Վորպես չար խորշակ, կամ ժանտ ձմեռ։ —
Օհանը մի որ բարձրացավ վեր —
Պաշարված տեսավ յերկիրն հայոց,
Տեսավ զրահներ, ու հուր, ու բոց,
Սարսափեց, սարսեց եյությամբ վողջ,
Յեվ գնաց հույցի աղեղորմ
Փրկություն՝ չարից այն անողոք։ —

ԺԳ

Գնաց մեր Օհանն, ահով-դողով
Արքայի առջև այն անողոք
Գլուխ խոնարհեց ազգով-ցեղով,
«Բո՛նն է» — աղերսեց — «Յերկիր ու հող» —
Ընծայեց նրան վոսկի շողշող,
Գերության հանձնեց Սասունը վողջ։ —
«Լա՛վ» — համաձայնեց Մելիքն ահեղ, —
«Ձեր կյանքը» — ասաց — «Կխնայեմ,
«Միայն թե թող դա քո յերկնահեռ
«Ժողովուրդն ամբողջ, մանուկ ու ծեր,
«Յեվ անցնի տակով իմ թրի կեռ,
«Վոր Սասմա յերկրում վո՛չ մի մարդ էլ
«Չշարժի իմ դեմ զրահ ու զենք։»

7/3-54

ԺԴ

Ձենով-Օհանը, իշխանն այն նենգ,
Գլուխ խոնարհեց Մելիքին նեռ,
Արձակեց ապա հրաման գոռ,
Վոր ժողովուրդը Սասմա ամբողջ
Գա, անցնի նրա փայլատակող
Արնահոտ, դաժան Թրի տակով: —
Յեվ ժողովուրդը Սասմա անկոր՝
Խեղճացած, խոնարհ ու գլխիկոր,
Անցավ Օհանի դժնի կամքով
Մսրամելիքի Թրի տակով: —
Մելիքը, շողշող զրահ հագին,
Կանգնեց՝ ահռելի ու ահագին,
Յեվ ժողովուրդը, մանուկ ու կին,
Անցավ պողպատե Թրի տակից:
Բայց հերթը հասավ յերբ Դավիթին՝
Զմռռեցավ նա չարի Թրին,
«Չեմ անցնի» — ասաց կամքով անկոր —
«Մսրամելիքի Թրի տակով:»

ԺԵ

Վոլորեց աչքերը արնակոխ
Մսրամելիքը Դավթի վրա,
Մտրակեց ապա նժույգն իրա,
Մտրակեց, քշեց Դավթի վրա,
Վոր սմբակներով հրահրան
Վոտնակոխ անի, ճզմի նրան: —
Բայց մանուկ Դավիթն անփույթ, ուրախ,

Իբրև խաղ մանկան մի հրածին,
Բռնեց Մելիքի ձիու սանձից,
Յետ գնաց, ահռեց Մելիքի ձին,
Յեվ մնաց Մելիքն այն չարածին
Կախված ահարեկ ձիու սանձից:
Մռընչաց Մելիքն ահով անծիր,
Իր կայծակնափայլ սուրը քաշեց,
Վոր հարվածով մի, զարկով մի շեղ
Դյուցազուն Դավթին միջից կիսե:
Մոտ յեկավ սակայն նրան մի ծեր,
Մի ռամիկ արդար, այր ալեհեր,
«Ներիր» — բարբառեց — «Մանուկ ե դեռ.
«Վողջ Սասունն ե քեզ գլուխ թեքել,
«Ո՛, Մսրամելիք, ինչո՞ւ չես եղ
«Վախենում վորբից մի կաթնակեր:»
Նայեց Մելիքը ռամիկ ծերին,
Իր սրին նայեց, իր զորքերին,
Նայեց սասունցի իշխաններին
Յեվ ժողովրդին՝ դարձած գերի, —
Յետ յեկավ, նայեց ապա Դավթին,
«Ներում եմ» — ասաց ժողովրդին, —
«Բայց թե փորձանք գա մի որ գլխիս —
«Սրանից կգա, այս ծուռ Դավթից:»
Ասաց, մտրակեց իր նժույգ ձին,
Հավաքեց ապա զորքերն անծիր,
Հեռացավ, գնաց Սասմա յերկրից,
Մարդիկ ուղարկեց ապա կրկին,
Վոր Սասմա ամբողջ հարկը փրկիչ
Հավաքեն, տանեն Մսրա յերկիր: —

ԺԶ

Յեվ չեկան Բադին ու Կոզբադին,
Ցնծացին հասան մի որ Սասուն,
Հետները բերին պարկեր բազում,
Վոր Սասմա ամբողջ գանձերը ձույլ
Հավաքեն, տանեն։ — Խանդով քեռ
Ձենով-Ոհանը, իշխանն այդ մեծ,
Հարկահաններին դիմավորեց։ —
Գնաց նա ապա, անհուն հորից
Հանեց Մհերի գանձը խորին,
Յեվ զարմանա՜լի շռայլորեն
Սկսեց չափել, ինչպես ցորեն,
Առյուծ-Մհերի գանձը, վոր ել
Մսրամելիքի ձեռքը զորեղ
Հավիտյան իշխել, թագավորել։ —
Չկար Մհերի զորքը հո ել,
Վոր ճզմեր նրանց ու տրորեր։ —

ԺԷ

Այդ ժամին մանուկ Դավիթն հուրհեր
Այն պառավ կնոջ աղքատ արտում,
Թռչունների դեմ ցցած մարտի,
Ձեռին մի կանաչ, բարակ բարդի,
Խաղում եր զվարթ ու թռչկոտում։ —
Պառավը կանչեց մանուկ Դավթին.
«Ո՜վ Դավիթ» — կանչեց — «Քաջի՛ վորդի,
«Դու ի՞նչ ես ուզում իմ խեղճ արտից.
«Ինչքա՞ն տրորես վոսկեհատիկ

«Հասկերը այրու կտավատի.
«Ձե՞ս տեսնում՝ Բադին ու Կոզբադին
«Տանում են քո հոր արդար վոսկին.
«Ուժ, զորություն ե տված բազկիդ,
«Գնա՛, ո՜վ Դավիթ, գնա՛ հանի
«Չտանեն քո հոր արդար վոսկին։»
«Բայց ո՞վ ե տալիս վոսկին իմ հոր
«Բադուն, Կոզբադուն» — զարմանքով խոր
Հարցրեց Դավիթ-դյուցազնը նոր։ —
«Ձենով-Ոհա՛նն ե տալիս քո հոր
«Գանձերը չարին՝ չարի սովոր» —
Բարբառեց պառավն հառաչքով խոր։
Յեվ գնաց մանուկ Դավիթը, վոր
Տերություն անի գանձերին հոր։ —

ԺԸ

Գնաց նա, տեսավ՝ սենյակում հին
Կանգնել են Բադին ու Կոզբադին,
Իսկ Ձենով-Ոհանը մահատիպ
Չափում ե վոսկին վոսկեհատիկ,
Պարկերը հենած հողե պատին,
Ինչպես բեռ հնձած կտավատի։ —
Դավիթը տեսավ, նայեց Բադուն,
Դարձավ, լուռ նայեց նա Կոզբադուն,
Մոտեցավ ապա նա Ոհանին
Յեվ չափը խլեց նա ցորյանի,
Ասաց. — «Թող վոր ես չափեմ, Բադի՛,
«Մհերի վոսկին վոսկեհատիկ։»
Ասաց, պարկերի վոսկին թափեց,

Դատարկ ամանով օդը չափեց,
Շրջեց այն ապա նա պարկի մեջ—
Յեվ ծիծաղելով ասաց.—«Այս մեկ։»
Զայրացավ, դժնեց Կողբացին նենգ,
«Դե՛ն տարեք»—կանչեց—«Դավիթին խենթ,
«Մսրամելիքի հարկը տվե՛ք,
«Չե՞ք ուզում յեթե՝ գնանք ասենք—
«Գա, հիմքից քանդե Սասունն անտեր,
«Անապատ դառնան Սասմա հանդեր։»
Զայրացավ անչափ Դավիթն այստեղ,
Բարկությունն անհուն եվ չզսպեց,
Յետ դարձավ—ձեռքի պղինձը մեծ
Կողբացու ճակատ գլխին խփեց։—
Ձայն տվեց ապա նա Ոհանին,
«Ո՛վ Ձենով»—կանչեց—«Գնա քնի.
«Մսրամելիքը յոթգլխանի
«Ինչ վոր կարող է՝ թող գա՝ անի։»

ԺԹ

Գնացին Բաղին ու Կողբացին,
Մսրամելիքին գանգատ արին,
Պախարակեցին Դավթին արի,
Գովեցին, իբրև Սասմա բարիք,
Ձենով-Ոհանի վարքը բարի։—
Մսրամելիքը, արքան այն նեռ,
Զայրացավ, ինչպես դաժան ձմեռ,
Արձակեց ապա հրաման գոռ,
Վոր գա, հավաքվի անհաշիվ զորք.—
Հազար, հինգ հարյուր մանուկ նորել,

Հազար, հինգ հարյուր ռազմիկ զորեղ,
Հազար, հինգ հարյուր այր սևահեր,
Հազար, հինգ հարյուր այր ալեհեր,—
Վոր գնա Սասմա յերկրին տիրե,
Վոր Սասմա քաղաքը ավիրե,
Վոր ժողովրդին ամբողջ գերե,
Տեղահան անե, Մսըր բերե։—

Ի

Մսրամելիքի զորքերն յեկան,
Բռնեցին Սասմա սարերը վողջ,
Լցրին շռնդյուն, ու թինդ, ու կոչ,
Ձիերի խրխինջ ու խրխնջոց,
Յեվ Սասմա չքնաղ աշխարհն ամբողջ
Բռնեց աղաղակ, ու ծուխ, ու բոց։—
Ձենով-Ոհանը, իշխանն հայոց
Բարձրացավ, տեսավ մի առավոտ
Մսրամելիքի զորքերն այն հոծ,
Տեսավ արշավանք մի մահահոտ
Յեվ սիրտը նրա լցվեց ահով։—
Գնաց նա ապա Դավիթի մոտ
Ասաց.—«Ո՛վ Դավիթ, մանո՛ւկ դիվոտ,
Բերել եմ ահա քեզ մահվան բոթ։
«Ո՛վ Դավիթ»,—կանչեց—«Դավի՛թ»—ասաց.—
«Սասմա ավերման ժամը հասավ.
«Յեկել է զորքով բազմահազար
«Մսրամելիքը, արքան գազան.
«Գնա՛նք, ո՛վ Դավիթ, գնա՛նք»—ասաց.
«Իրեն տանք հարկը իրա ուզած.

«Գնանք, ո՜վ Դավիթ, վոսկի տանենք,
«Փրկություն հայցենք արքայից նենգ,
«Վոր վրեժն իր չար նա չհանե,
«Սասմա յերկիրը չկործանե։»
Յեվ ասաց Դավիթը Ոհանին.
«Ո՜վ Ձենով» — ասաց — «Գնա քնի.
«Առավոտ, առած աղեղ ու նետ,
«Ի՛նքս կգնամ — կռիվ կանեմ։»

ԻԱ

Առավոտ յելավ Դավիթը վեր,
Վերցրեց-առավ աղեղ ու նետ,
Վոր գնա՝ Մսրա արքայի հետ
Մղի պատերազմ մի չարաղետ, —
Վոր ուժը նրա հորդած, ինչ գետ,
Դարձընի, քշի մեր յերկրից յետ։ —
Բայց տեսավ նրան այրին այն խեղճ,
«Ո՜վ Դավիթ» — ձայնեց — «Այդ ու՞ր» — կանչեց։
Դավիթը ասաց. — «Գնում եմ յես
«Մսրամելիքին կռվեմ հանդես,
«Մեր յերկրի համար կռիվ անեմ,
«Մսրամելիքին Սասնից հանեմ։»
Պառավը ասաց. — «Դավի՛թ ռամիկ,
«Ինչքա՜ն ես անմիտ ու միամիտ,
«Փուչ գլխիդ ունես լերան քամի.
«Մարդ ե՞լ կգնա դարանամիտ
«Մսրամելիքի հետ հարամի
«Նետով-աղեղով կռի՞վ կանի։»
«Բա ե՞նչպես անեմ» — Դավիթն ասաց.

«Վո՜չ զրահ ունեմ, վո՜չ զենք հազար։»
«Բա ինչպես անե՞ս» — պառավն ասաց. —
«Բա չե՞ս իմանում, Դավի՛թ անճար.
«Մհերը ուներ զենքեր անչափ,
«Մհերը ուներ նժույգ պայծառ,
«Մհերը ուներ և սուր-կայծակ։»
Դավիթը կխտեց հոնքերն, ասաց. —
«Բա ու՞ր են իմ հոր զենքերն — ասաց. —
«Հե՜յ, խևո՛ւկ Դավիթ» — պառավն ասաց.
«Ձենով Ոհանի՛ն գնա ասա.
«Ինչքան վոր զենքեր քո հերն ուներ,
«Ինչքան վոր զրահ Մհերն ուներ —
«Ձենով Ոհա՛նն է տարել-պահել.
«Գնա՛, յե՛տ խլիր, Դավի՛թ հուրհեր։»
Ասաց, խրատեց պառավն արթուն
Դյուցազուն Դավթին, ինչպես վորդուն.
«Հավատ չընծայես ուրիշ մարդու.
«Թե սիրով չտա — ուժո՛վ առ դու։»

ԻԲ

Գնաց Դավիթը սրտով տրտում,
Գնաց այն Ձենով-Ոհանի տուն,
Թակեց, թնդացրեց յերդիկ ու դուռ,
«Ո՜վ Ոհան» — կանչեց — «Յե՛կ-արի դո՛ւրս,
«Առյուծ-Մհերի զենքերը տո՛ւր,
«Վոր կռիվ գնամ զենքերով հուր։»
Ոհանը, սարսած, յելավ գավիթ.
«Ի՞նչ զենքեր» — ասաց — «Խևո՛ւկ Դավիթ,
«Դու մանուկ եյիր մի միամիտ,

«Վո՜րտեղից փչեց գլխիդ քամին։»
Դավիթը ասաց.— «Ձենով-Օհան,
«Մհերը ուներ վոսկե վահան,
«Մհերը ուներ զենքեր հրցայտ,
«Մհերը ուներ նժույգ պայծառ,
«Մհերը ուներ և՛ սուր-կայծակ։
«Բե՛ր, հանձնի՛ր զենքեր ու զրահներ,
«Յեթե վոչ» — ասաց — «Ուժով կառնեմ։»
Օհանը, ահով լցված հազար,
Հարցըրեց — «Դավիթ, քեզ ո՞վ ասաց։»
Դավիթը ասաց.— «Պառավն այն մեր.
«Յե՛լ, Ձենո՛վ-Օհան, զենքերը բե՛ր,
«Գնամ, մեն-մենակ կռիվ անեմ,
«Մսրամելիքին Սասնից հանեմ։»

ԻԳ

Տեսավ՝ ճար չկա Օհանը նենգ,
Հավաքեց, բերեց զրահ ու զենք,
Բերեց Մհերի զենքերն հրցայտ,
Նժույգը բերեց նրա պայծառ,
Յեվ սուրը բերեց նրա կայծակ։—
Յեվ Դավիթը յերբ նժույգն հեծավ,
Յերբ հագավ իր հոր զրահն արծաթ,
Յերբ բռնեց ձեռքին սուրը կայծակ—
Դարձավ — Դավիթի հեռքից ասավ.
«Ափսո՜ս, Մհերի հրեղեն ձի՛,
«Զրահնե՛ր անգին, գանձե՛ր անծիր,
«Ափսո՜ս Մհերի ձիու սանձին...»
Դավիթը լսեց և յետ դարձավ,

«Ո՞վ Ձենով-Օհան, Օհա՛ն» — ասավ,
«Պապանձվի՛» — ասավ — «քո չար լեզուն.
«Բա մանուկ Դավթին չե՞ս ափսոսում...»
Օհանը ահից խոսքը փոխեց.
«Ափսո՜ս մեր մանուկ Դավիթ» — ասեց,
Աչքերից առատ արցունք հոսեց,
Իբրև թե խղճաց ու ափսոսեց։—
Դյուցազուն Դավիթն էլ չխոսեց,
Առյուծ-Մհերի անունն հիշեց,
Յե՛տ դարձավ ապա և ձին քշեց...

ԻԴ

Դյուցազուն Դավիթն հուր-ձին քշեց—
Մսրամելիքի բանակն հասավ.
Յերբ բանակն հասավ, նայեց — տեսավ՝
Փռել է, բռնած հովիտ ու սար,
Մսրամելիքի զորքը հազար։—
Դյուցազուն Դավիթն յերբ այս տեսավ՝
Մտածեց, մանուկ մտքում ասավ.
«Թե հիմա այսպես քշեմ-գնամ,
«Ցորյանի նման հնձեմ նրանց —
«Պիտի մտածեն, թե մենք քնած,
«Դավիթը գող-գող յեկավ գնաց։»
Ձայն տվեց ուստի Դավիթը քաջ.
«Վե՛ր կացեք, յելե՛ք, զորքե՛ր քնած,
«Վոր չասեք հետո, թե մենք քնած՝
«Դավիթը գող-գող յեկավ գնաց։»
Արթնացավ իսկույն բանակն ամբողջ,
Թնդյուն, շառաչյուն, շխինդ ու կոչ,

Ձիերի խրխինջ ու խրխնջոց,
Զենքերի շաչյուն, ու հուր, ու բոց...
Հավաքեց Դավիթն իր ուժը վողջ,
Մրրիկի նման հուր-ձին թողեց,
Կայծակներ թռան քարից, հողից,
Արեգակն անգամ գույնը փոխեց,
Յերբ սուրն արձակեց հրե շողեր։ —
Շարժելով այսպես իր սուրն հրե,
Սկսեց հնձել, ինչպես ցորեն,
Մսրամելիքի զորքը զորեղ,
Վոր Սասմա վրա քանի՜ որ եր
Յեկել եր, նստել, ինչպես մորեխ։ —
Ահեղ եր Դավիթն ու ահավոր,
Իբրև այր արդար, ռամիկ զինվոր,
Իբրև անսասան գյուղացուն, վոր
Կռվում եր սրով իր անպարտ հոր։ —
Յերբ տեսավ նրա ցասումն այդ խոր
Մսրամելիքի զորքը բոլոր,
Դեմ յելավ նրան մի ալևոր
Մսրա աշխարհից յեկած զինվոր։ —
«Դավի՛թ» — բարբառեց զինվորը ծեր —
«Ինչո՞ւ յես մեր դեմ կռվի յելել,
«Մսրամե՛լիքն ե, արքան այն նեռ,
«Մեզ քշել, բանի Սասուն բերել.
«Ո՜վ Դավիթ» — կանչեց — «Ո՜վ միամիտ,
«Գյուղացո՛ւն Դավիթ՝ մեզ պես ռամիկ,
«Մսրամելի՛քն ե քո թշնամին,
«Գյուղացո՛ւն ես՝ գնա՛ դարանամիտ
«Մսրամելիքի՛ց վրեժդ հանի։»

«Լա՛վ» — պատասխանեց Դավիթը մեր.
«Իսկ ո՞ւր ե հիմա Մելիքը նեռ։»
«Այնտե՛ղ ե» — ասաց զինվորը ծեր.
«Վրանում այն մեծ քնած ե դեռ,
«Ծուխ ե բարձրանում այնտեղից վեր —
«Այնտե՛ղ ե հիմա Մելիքը նեռ։»

ԻԵ

Լսեց — արձակեց Դավիթն իր ձին,
Ել չանսաց հուր ձին իրա սանձին,
Ինչպես գերանդին ցորյան հնձի՝
Մրրկվեց այդպես թափով անծիր,
Յել գնաց, կանգնեց այն առանձին
Վրանի առջև, վորի միջից,
Ինչպես հնոցից, թափով ամբողջ,
Ծո՜ւխ եր բարձրանում, ու հո՜ւր, ու բո՜ց։ —
«Ո՜վ Մելիք» — կանչեց ձայնով անդող
Գյուղացուն Դավիթն անհուն խանդով.
«Ո՜վ Մելիք» — կանչեց — «Քնելդ թո՛ղ,
«Յե՛լ, կռիվ մղենք, զարկե՛նք հերթով,
«Ինչքա՞ն ես տեսնենք արդյոք դու քաջ,
«Վոր ժողովրդիդ՝ ահից կորած՝
«Քշել ես, բերել Սասմա վրա։»
Մելիքը լսեց ձայնը նրա,
Վեր կացավ, նստեց մի պահ մռայլ,
Նայեց նա հպարտ իրա զորքին,
Մոտ կանչեց ապա մանուկ Դավթին,
Հսկա բերանը ապա բացեց,
Գյուղացուն Դավթի վրա փչեց,

Վոր նրան, ինչպես չնչին տաշեղ,
Թռցնե, Սասմա դաշտից քշե։ —
Բայց կանգնած մնաց Դավիթն հուրհեր
Իր տեղում անշարժ ու աներեր։ —

ԻԴ

Վեր թռավ տեղից Մելիքն ահեղ
Սարսափից կորած ու խելահեղ,
Բայց զսպեց իրեն, շունչը պահեց,
Ժպտալով ապա Դավթին նայեց,
«Ներս արի» — ասաց — «Դավիթ ջահել,
«Նստենք միասին, մարդավայել
«Խոսք-զրույց անենք, ապա կրկին
«Յելնենք միասին, կարգով կարգին
«Ձի-նժույգ նստած, զրահ առած՝
«Մեր ուժը փորձենք զորքի առաջ։»
Ո՜, մանուկ Դավիթ դու միամիտ,
Առյուծ-Մհերի վորդի ռամիկ,
Քո գլխում ինչքա՜ն խաղա քամի, —
Ահեղ փորձության, մահու ժամին
Վորքա՜ն հավատաս անգետ կամիլ
Ամեն մի վոսոխ ու թշնամի
Մսրամելիքի ու Ոհանի...
Ահա Մելիքը, արքան այն նեռ,
Քեզ նենգ ժպիտով կանչում ե ներս,
Վոր դավով խարդախ ու արնանենգ,
Քեզանից, Դավիթ, իր վոխն հանե։ —
Յեվ ռամիկ Դավիթն, արդար ու մեղմ,
Հավատաց չարին ու մտավ ներս,

Յեվ ընկավ, խարված դավով այն նենգ,
Մելիքի փորած անդունդի մեջ...

ԻԵ

Ընկավ մեր Դավիթն անդունդի մեջ.
Շուրջը — մթություն, ու մուժ, ու մեգ,
Իսկ վերից Մելիքը արնանենգ,
Սարսելով ահից իր խելագար,
Քաշեց մի հսկա, վիթխարի քար։ —
Դավիթը մնաց փոսում խավար,
Անպաշտպան, մենակ, իսկ դուսը չար
Մսրամելիքը, արքան դաժան,
Քրքջում եր ահեղ ու ժանտաժանտ։ —
Յեվ Սասմա վրա իջավ այնժամ
Խորշակ դառնաղետ, մահ տարաժամ։ —
Յեվ Դավիթն, ընկած խավարում քար,
Ոգնություն կանչեց յերկար, յերկար,
Յեվ զուր ե ասում զրույցը հար,
Թե պահուն այդ սև, այդ ժամին չար,
Ոգնության յեկավ խորհուրդով վառ
Ձենով-Ոհանը, իշխանն այն մառ։ —
Նա չեկավ, Ձենով իշխանն հայոց.
Սեվ սրտում՝ սարսափ ու ահ մահու՝
Նա Մելիքին եր նվաստ նայում
Յեվ ժողովրդին հրամայում —
Հավաքեն, տանեն նրա համար
Քառասուն կաղ կին՝ կորեկ աղան,
Քառասուն այլ կին, վոր ուղտ բառնան,
Քառասուն աղջիկ՝ նման գարնան՝

Գնան՝ Մելիքին վարձակ դառնան։ —
Հավաքեց ապա ահով անսանձ
Ոհանը անբավ վոսկի ու գանձ,
Մսրամելիքի մոտը գնաց,
Թախանձեց, խնդրեց վիզը ծռած,
Վոր գերի գրի հավիտյան-հար
Յերկիրը Սասմա և դարեդար
Թե իր և թե վորդ Մսրա համար
Գա, վոսկի տանի, անհատնում հարկ։ —
Մելիքը լսեց, չարկամ խնդաց,
Մռընչաց — ձայնից հողը թնդաց,
Արձակեց ապա հրաման գոռ,
Վոր ժողովուրդը Սասմա ամբողջ,
Հավաքի, բառնա հարկը փրկիչ
Յեվ գերի գնա Մսրա յերկիր։ —
Ձենով-Ոհանը լսեց, գնաց
Յեվ ժողովրդին՝ ահից կորած՝
Հայտնեց Մելիքի հրամանն այս։ —
Յեվ սուգ բարձրացավ, տրտունջ ու լաց
Աշխարհում հայոց, — և վորբացած
Սասմա աշխարհի ձայնը գնաց,
Հասավ ականջին Դավթի գյուղացն,
Վոր խավար ու խուլ հորում կորած
Ժայթքում եր աչքից կրակ ու կայծ։ —
Սթափվեց, հիշեց Դավիթն այնժամ
Առյուծ-Մհերի փառքը պայծառ,
Հիշեց կայծակե սուրը հրցայտ,
Հավաքեց ամբողջ իր ուժն անծայր,

Խփեց — շողշողաց սուրը կայծակ —
Յեվ քարը կտրեց — միջով անցավ…

ԻԸ

Դուրս յեկավ հորից Դավիթն այնժամ,
«Ո՜վ Մելիք» — կանչեց — «Արքա դաժան,
«Յելել եմ, բերել քեզ մահու ժամ։»
Կանչեց նա ապա ձայնով ահեղ.
«Յե՛լ, հանդես արի, ո՛վ արքա նենգ,
«Զի՛ նստիր, կապի՛ր զրահ ու զենք,
«Վոր վերջին անգամ դեմ-հանդեպ մենք,
«Ո՜վ Մելիք, մահու կռիվ անենք։»
Դեմ յելավ դաժան արքան նրան,
Ժպտաց շողուքորթ, նայեց վրան,
Զենքերին նայեց այն հուրհուրան,
Նժույգին նայեց նրա կրակ,
«Յե՛կ, նստի՛ր» — ասաց ժպիտով նենգ.
«Յե՛կ, նստի՛ր, սիրով զրույց անենք,
«Թե կամիս հետո՝ առած թուր-տեգ,
«Ո՜վ Դավիթ, մահու կռիվ անենք։»
«Վո՛չ» — պատասխանեց Դավիթը մեր.
«Սասունցի Դավթին չե՛ս խաբի եղ.
«Յե՛լ, Մսրամելի՛ք, զենքերդ բե՛ր,
«Կանգնի՛ր անխարդախ ու անվեհեր, —
«Քեզ մա՛հ եմ բերել, ո՛վ արքա նեՌ։»
Բարձրացավ Մելիքն իր տեղից վեր,
Զրահներ հագավ, առավ զենքեր,
Զի-նժույգ նստեց և կանգնեց մեր
Դավիթի հանդեպ, ինչպես մի լեռ։ —

«Դավի՛թ» — բարբառեց Մելիքը նեռ, —
«Ո՞ւմն է առաջին հարվածն արդյոք։»
«Ի՛մն է» — դյուցազուն Դավիթը մեր
Պատասխան տվեց այն նեռ-մարդունː —

ԻԹ

Յեվ կանգնեց Դավիթը նրա դեմ
Անսասան, անահ, դեմքով վսեմ,
Հայացքով պայծառ, ժպիտով սեգ.
Բոցավառ, ինչպես պայծառ արեգ։
Մսրամելիքը իր ձին քշեց,
Հեռացավ, յեկավ, և ապա շեղ
Հարվածով դժնի, թափով ուժեղ
Հարվածեց Դավթին, վոր նրա սեգ,
Բարձրաբերձ կուրծքը միջից կիսե։ —
Յերբ զարկեց Մելիքն հարվածն ուժեղ,
«Հո՞ղ դարձավ Դավիթ» — դարձավ ասեց.
«Այստե՛ղ եմ» — կանչեց Դավիթը սեգ,
Յեվ ահով լցվեց Մելիքը սև։ —
Նա յերկրորդ անգամ իր ձին քշեց,
Յեկավ, հարվածեց հարվածով շեղ.
«Հո՞ղ դարձավ Դավիթ» — ելի ասեց, —
«Այստե՛ղ եմ» — կանչեց Դավիթը սեգ։ —
Յեվ յերրորդ անգամ իր ձին քշեց
Մսրամելիքը, արքան այն սև,
Յեկավ, հարվածեց գուրզով ուժեղ.
«Այս անգամ մեռա՛վ Դավիթն» — ասեց.
«Այստե՛ղ եմ» — կանչեց Դավիթը սեգ.
«Կանգնի՛ր, ո՛վ Մելիք, ո՛վ արքա սև, —

«Յե՛ս պիտի հիմա իմ ձին քշեմ։»
Յերբ կանգնեց Մելիքը նրա դեմ,
«Դավի՛թ» — բարբառեց — «Ռամի՛կ զորեղ,
«Թո՛ղ, մանուկ Դավիթ, խոր հոր փորեմ,
«Մտնեմ նրա մեջ, գլխիս քաշեմ
«Քառասուն կաշի, քառասուն քար —
«Յեվ ապա արի, քո զարկը զարկ։»
«Լա՛վ» — ասաց Դավիթն արքային չար.
«Թող փորեն խոր հոր, քաշեն թող քար, —
«Չի՛ փրկի, Մելի՛ք, քեզ վո՛չ մի ճար
«Սասունցի Դավթի զարկից արդար։»

Լ

Բերին, փորեցին մի հոր խավար
Մսրամելիքի, նեռի համար.
Յեվ մտավ Մելիքը դողահար
Իր համար փորած հորը խավար,
Յեվ բերին ապա, քաշեցին մառ
Քառասուն կաշի, քառասուն քար։
Յեվ քշեց Դավիթն ապա իր ձին,
Վոր խփի հարվածն իր առաջին,
Մոտ վազեց սակայն մի պառավ կին,
Մսրամելիքի մայրն էր՝ հագին
Մսրա զգեստներ՝ մետաքս անգին.
Յեկավ, փաթաթվեց Դավթի վոտքին.
«Ի՛նձ բաշխիր» — ասաց — «Զարկդ առաջին։»
«Լա՛վ» — ասաց Դավիթը պառավին.
«Յես քե՛զ եմ բաշխում զարկս առաջին։»
Յեվ յերկրորդ անգամ քշեց իր ձին

Դավիթն շտապով, սակայն կրկին
Յեկավ, փաթաթվեց նրա վոտքին
Մի ուրիշ — տարեց, գեղեցիկ կին.
Մսրամելիքի քույրն եր՝ հագին
Զգեստներ չքնաղ ու թանկագին.
Յեկավ, փաթաթվեց Դավթի վոտքին.
«Դավի՛թ» — բարբառեց — «Դյուցա՛զն անգին,
«Ի՛նձ բաշխիր յերկրորդ զարկդ կրկին։»
«Լա՛վ» — ասաց Դավիթն — «Ո՛վ չքնաղ կին,
«Քե՛զ եմ շնորհում զարկս կրկին։»
Յեվ յերրորդ անգամ իր ձին քշեց,
Վոչ-վոքի խնդիրք ել չլսեց,
Առյուծ-Մհերի անունն հիշեց,
Յեկավ, կայծակե սուրը խփեց,
Զարկեց հարվածով, զարկով վսեմ —
Քառասուն կաշին միջից կիսեց։ —
Կտրեց քառասուն կարծր կաշին,
Քարերը կտրեց ջրաղացի,
Ճայթեց զորությամբ մի անհաշիվ, —
Դեմքն արեգական բռնեց փոշին։
Յերբ փոշին մի քիչ բարձրացավ վեր —
«Այստե՛ղ եմ» — կանչեց Մելիքը նեռ.
«Սասունցի՛ Դավիթ, չե՛մ մեռել դեռ։»
Զարմացավ Դավիթն, ապա ասեց.
«Ո՛վ Մսրամելիք, թա՛փ տուր դու քեզ։»
Մելիքը նրա ձայնը լսեց,
Թափ տվեց իրեն, արյունն հոսեց,
Մեջտեղից յեղավ նա յերկու կես, —
Անցավ, խորտակվեց Մելիքն այսպես...

ԼԱ

Այսպես ե ասում զրույցը մեզ,
Սասունցի Դավթի զրույցն արդար,
Ասում ե ապա զրույցն այդ վառ,
Վոր մեռավ այսպես յերբ նեռը չար —
Դավիթը նրա զորքին դիմեց.
«Գնացե՛ք» — ասաց — «Ձեր յերկրում կեզ
«Ապրեցե՛ք ազատ, ապրուստով վես,
«Յեվ հանգիստ թողեք մեր տունն ու մեզ։»
Ասում ե ապա զրույցը մեզ,
Վոր Դավիթն հետո դաշտից քշեց
Ջենով-Ոհանին, իշխանին նենգ,
Հավաքեց ապա զրահ ու զենք,
Յեվ դարձավ ռամիկ յերկիրն ուժեղ,
Յեվ հնչեց կրկին ամենուրեք
Սասմա լեռներում ծիծաղ ու յերգ...
Ասում ե ապա զրույցը մեզ,
Վոր Սասմա յերկրում ապրեց այսպես
Կյանք զարմանալի, արդար ու վես,
Մինչև մահացավ Դավիթն հրկեզ
Յեվ ժառանգ թողեց յերկրի վրա
Մհերին՝ վորդուն իր հուրհուրան,
Բայց դժնի ուժեր տարան նրան,
Փակեցին Սասմա անհուն լերան
Քարայրում մթին, վոր այնտեղ նա
Հավիտյան, ընդմիշտ գերված մնա...

— Ո՛, դյուցազն Մհեր, ռամիկ դու այր,
Առյուծ-Մհերի շավիղ պայծառ,

Դյուցազո՛ւն վերջին, ռազմիկ արդար,
Ձեռք ժողովրդի սանձարար, —
Ուժեր կործանիչ, և՛ մութ, և՛ չար
Բարայրում այն մութ, մխզում խավար
Փակեցին ահով քո դեմքը վառ,
Յեվ գալիք քենից սարսափահար՝
Հայտարարեցին քեզ նեռ ու չար,
Վոր չլինես մի որ՝ նրանց համար
Չբերես անկում, ու մուժ, ու մահ...

ԼԲ

Հուշ դարձավ այսպես, կյանքից գնաց
Սասունցի Դավթի զարմը դյուցազն,
Յեվ տիրեց անհուն աղետ ու լաց
Լեռներին Սասմա, աշխարհին բարձր,
Յեվ ժողովրդին ռամիկ ու պարզ։ —
Հուշ դարձավ այսպես, դարձավ յերազ
Առյուծ-Մհերի զարմը զորեղ,
Յեվ դարեր ապա ու տարիներ
Լեռներում Սասմա, աշխարհում մեր,
Վոր վոչ մի դյուցազն ել չսերեց —
Ձենով-Օհանի զարմը տիրեց...
Տիրեց Օհանի սերունդը մառ
Բազում տարիներ, — ու դարեդար
Հայրենի յերկրում ժլատ ու չար,
Անդուլ կեղեքող — ձեռքով շռայլ
Ցրեց մեր յերկրի գանձը անծայր
Յեվ ինքնությունը մեր վոսկեսար։ —
Յեվ յեկան ապա ու շարեշար

Տիրեցին յերկրին իշխաններ չար,
Տերեր հայրենի ու զանազան,
Ազատանիներ՝ վարքով գազան,
Յեվ նեռ-արքաներ հազարհազար։
Յեվ ժողովրդի գլխին ազատ,
Իբրև հովանի մի սրբազան,
Կախվեց տերերի ժանիքը ժանտ —
Յե՛վ խարույկ, և՛ խաչ, և՛ խարազան...
Այսպես Օհանի սերունդը մառ
Տիրեց աշխարհում յերկա՜ր, յերկա՜ր,
Մինչև որն յեկավ — և դեմքով վառ
Յելավ քարայրից Մհերն արդար,
Յեվ բերեց զարմին Օհանի չար
Անկում վերջնական և մահ անճառ։ —
Ո՜, անմահ Մհեր, քանի՜ դու դար
Պիտի մնայիր այրում խավար,
Մինչև աշխարհում քո որը գար
Յեվ յելնեյիր դու արևավառ —
Համայն աշխարհի զարմերին չար
Բերելու անկում և մահ արդար։ —

ԼԳ

Յեվ մենք աշխարհում հավիտյան-հար,
Վորքան վերհիշենք զրույցն այս վառ,
Սասունցի Դավթի զրույցն արդար, —
Սերունդե-սերունդ ու դարեդար —

Դառնանք — բարբառենք նզովք մենք նախ
Մարամելիքին, Թագավորին, —

Դառնանք — բարբառենք նզովք ապա
Ձենով-Օհանին, իշխանին նենգ, —
Դառնանք — բարբառենք նզովք ապա
Ա՛յլ իշխաններին բոլոր այն մեր,
Վոր բերին մեզ մահ, ու մուժ, ու նեռ: —

Փառք փառաբանենք ապա մենք մեր
Առյուծ-Մհերին, դյուցազնին քաջ,
Դավիթին՝ նրա վորդուն դյուցազն,
Մհերին՝ նրա վորդուն անմահ, —
Վո՜ղջ ժողովրդին ապա Սասմա,
Վոր լուրթ լեռներում մի՜որ բազմած
Հորինեց պայծառ զրույցը այս —
Ցեվ անցավ անհետ, դարձավ յերազ...

1933. IV. 6.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՎ



ԱՏՄՈՒԹՅԱՆ քառուղիներով մենք քայլել
ենք յերկար՝
Անզեն, ցաքուցրիվ, անգաղափար,
Հին դարերից մինչև այս հանճարեղ
ներկան,
Վոր հուրհուրատում է մեր դեմ գալիքնափայլ:
Այն անգո առավոտից, յերբ լեգենդական
Իր խարույկն է վառել մեր անգո նախահայրը,

Այս Մասիսի հանդեպ, այս անիրական
Արարատյան դաշտում, — վորպես գրույց ան-
ծայր մի
Տարածվել է ուղին մեր անպատմելի,
Անծայրածիր ձգվել դարերով ձիգ,
Յեվ գնում է այսօր ու յերկարվում ելի
Դեպի ի՜նչ անհայտ ափեր ու գալիքներ ան-
ծիր...

Բայց ուղին մեր յեղել է միշտ մթին,
Յեղել է անս[illegible] ու անփառունակ,
Տարածվել է անբոց ու անժպիտ՝
Ուրիշների փայլով շարունակ
Շառագունված — վո՜րքա՜ն, վո՜րքա՜ն աղետավոր...
Վորպես անմիտ գրույց՝ մեզ պատմել են մի որ
Նախնիների մասին մեր փառապանծ,
Բայց որերի հեռվում չես տեսնում եմ միայն
Ստրկություն, մոխիր, մոռացություն ու մահ
Յեվ յերկրային ընթացք մի անիմաստ...
Յեվ յես, ահավասիկ, հին գրերով այս մեր
Իմ տողերը կոփող մի պոետ —
Ի՞նչ խոսքերով յերգեմ և ինչ տենդով պատմեմ
Մեր անանցյալ անցյալը, մեր ընթացքը, վոր էլ
Վո՜չ մի գուսան յերգով չոգեկոչի հին փառքը
Ու կարոտով անմիտ չետ չնայի, —
Զզանծանա այլևս, վոր առանց մեզ աշխարքը
Կլիներ պարտեզ մի ամայի...
. . . .
. . . .

Պատմության քառուղիներում առաջնորդել են
նախ
Մեզ նախնիներ անստույգ ու վոչնչատեսիլ,
Մռայլ հեռուներում անճանապարհ առկախ,
Վոր իրենց մորթի հետ միասին
Տարել են բախտը մեր թավագլոր
Յերկրներից-յերկիր, — ո, տառապանք յերկար, —
Նշել են մեզ համար ուղի աղետավոր,
Յեվ տոտեմը յեղել է մեր — գայլ...
Ո՜, նախնիներ... Տեսնում եմ ահավասիկ. —
Հին դարերի խորքում, ուղիներով մռայլ,
Քաղցած, քոսոտ, անբուրդ, դեպի լյառը Մասիս
Քայլում է առասպելյալ մեր գայլը...
Հենց առաջին որից բզկտված են նրա
Նիհար կողերը — բյուր գազանների կողմից, —
Յեվ կողերով կարմիր ահա քայլում է նա՝
Դեմքը տված գալիք փորձանքների հողմին: —
Վորտեղի՞ց է յեկել նա, այդ գայլը,
Յեվ ինչո՞ւ չե արդյոք նա առաջին որից
Սարսափահար հայացքը հառած լուսնի փայլին՝
Աղեկտուր վոռնում իր սարսափը խորին:
Յեվ նա գիտե՞ արդյոք, այդ բզկտված գազանը,
Վոր նշված է արդեն նրա ուղին
Ապագայի գրքում, — վոր տարիներ հազար
Քայլելու չե այդպես անուղի, —
Վոր պատմության մռայլ քառուղիներում
Նա բազմաթիվ դարեր պիտի այդպես տանի
Իր բզկտված կողերը — դեպի ի՜նչ անհայտ հեռու,
Ի՞նչ արուններ կարմիր ու արնանիստ...

Ո, չի յեղել մեր գալը պղնձյա
Յեվ վոչ մարմարիոնյա, և վոչ անգամ քարե,—
Նիհար, կողերը լերկ, նա անցել է անծայր
Տափաստաններ, մինչև նա հանգիստ է առել
Այս Մասիսի հանդեպ անիրական,
Այս խորշակյալ, անդուռ Արարատյան դաշտում,
Յեվ՝ լուսնի դեմ նստած՝ նա յերկար
Վոռնացել է իր վիշտը անկշտում,—
Վոռնացել է անձուկ իր տառապանքը,
Անսահման իր քաղցը,— և վոռնոցը նրա
Դարձել է հիմնը մեր անարձագանք,—
Ու դարերով հնչել մեր պատմության վրա...

. . . .

. . . .

Ապա առաջնորդել են մեզ տարիներ յերկար
Արքաներ անժողովուրդ և գահազուրկ,
Վորոնց փառքը՝ մեր հին մատյաններում յերգած՝
Յեղել է յեղկություն ու քծնություն քսու։—
Ո, դո՛ւք, մեր վաղեմի առաջնորդնե՛ր,
Առասպելյալ Հայկեր ու Տրդատներ բազում,
Իշխաններ անփառունակ, սին ըղձերի ճորտեր,
Արքաներ անժողովուրդ ու գահազուրկ,—
Դո՛ւք, վոր դարեր յերկար, հազարամյակներ,
Ուրուների նման անկերպարանք
Ապրել եք ու կանգնել ոդե ապարանքներ,
Ոտար խարույկներից հայցել վոգու կրակ,—
Վոր ամբողջ ձեր գոյության հազարամյակներում
Չեք ծնել և վո՛չ մի խոհ սերունդների համար—
Վո՞ր, վո՞ր պատմիչը ձեզ պիտի կարդա ներում,

Ո, դո՛ւք, անպտուղ պարտեզներ ու խորաններ
ամա...

. . . .

. . . .

Ապա առաջնորդել են մեզ տարիներ յերկար
Ֆեոդալներ շվայտ ու իշխաններ չնչին,
Հազար յերանգներով իրենց դեմքը ներկած,—
Յեվ մեր անմահության ակունքները այն ջինջ
Պղտորել են վոխով ու վոչնչությամբ,
Չնչին տենչանքների անխոհությամբ վոսին,
Փաթաթելով վզին մեր մի ճորտային շղթա,
Սերմանելով մեր վողջ ժողովրդի մասին
Վոչնչության սերմեր, անխոհության,
Թշվառ անհողության և աղապատանքի,
Յեվ դրել են դեմքին մեր կնիքը գերության,
Սնել թշվառ կաթով ապաշնորհ կյանքի...

. . . .

. . . .

Իսկ նրա՞ք, վոր յեկել են իշխաններից հետո,—
Վերջին ասպետները մեր խեղճության խորին,
Սնված նախնիների անհողության կաթով,—
Ո՛, վարդապետ Մինաս, կամ Իսրայել Որի,—
Այն ի՞նչ տենչեր են վեհ, ու անխորտակ ու խոր,
Վոր սերմանել եք դուք յերկրներում ոտար,
Յեվ վո՞ր, և վո՞ր, և վո՞ր նպատակի շողով
Զրկել եք կյանքը մեր անմխիթար
Հանել ափունքներից այն սև ու ապերջանիկ,
Նշել սերունդներին ուղի պայծառ,—

Յեվ ձե՞զ պիտի արդյոք մենք յերգենք հիմի—
Ձեր վո՞ր խոհին, կամ վո՞ր յերազանքին անճառ...

...Ահավասիկ յելած մեր լեռներից այն բարձր,
Ուր վառվում եր հույսի մեր խարույկը վերջին,
Շուրջը — խավար գիշեր ու մառախուղ մի թանձր,
Շուրջը — ժայռեր մռայլ ու բարդիներ վերձիգ,—
Ու թանձրացյալ մուժում — ապարանքներ ահա՝
Փոքրիկ, վողորմելի, խեղճ —
Իրենց մութ պատերում մի բուռ վոսկի պահած,
Յեվ վո՞չ մի, վոչ մի մեխ,—
Վո՞չ մի կտոր յերկաթ, կամ անագե շաղախ,
Կամ մարմարյա մի սյուն, կամ թեկուզ կիր,
Վոր փորձության պահին անձրեներից միար
Յեվ իր ծուխը խառներ ըմբոստության յերգին...

Ապարանքը — այսպես: — Իսկ ներքեվում — խու-
ղեր՝
Գետնափոր, ստորերկրյա, ցաքուցրիվ,
Թաղված գանգի պես խուլ, գանգի պես անուղեղ,
Կարծես մի խեղճ նախիր
Արածելու ժամին կայծակնահար՝ հանկարծ
Կըծկըվել ե ահից ու մոխրացել—
Յեվ մնացել ե տեղը մի մոխրաբույր գանգված՝
Դարերով անշրդի ու հողմածեծ...
Յեվ նոքա — մեր անղեկ առաջնորդները,
Այդ իշխանները յեղկ, այդ տերերը վերջին,
Յելել են գիշերով ու մենակ ճամբորդել են
Դեպի հյուսիս, դեպի հյուսիսային վորջի

Արջերը սառցասիրտ ու արնաթաթախ, —
Այդպես մեր գայլն եր հին ճանապարհվում վորսի՝
Հյուծված, կողերը լերկ և անպատառ...

Յես տեսնում եմ նոցա: — Իմ աչքերի առջև
Ահավասիկ իրենց յեղկ հասակով ամբողջ՝
Իրենց խուլ խուղերից ու լեռներից այն բարձր
Ճանապարհ են ընկնում՝ անուղի ու անխոհ:—
Յելած վորոնելու հորիզոններ, գալիք
Սերունդների համար արահետներ ուղիղ —
Ի՞նչ են տանում նոքա ուրիշներին տալու,
Այն ի՞նչ բերքեր յերկրի ու բարիքներ հողի...
Այն ի՞նչ գանձեր արդյոք, ի՞նչ արգասիք ու բեռ,
Ի՞նչ վոսկիներ վոգու ու զորության...
Վո՛չ: — Տանում են նոքա, վորպես շնորհ առձեռն,
Կարավաններ ահի ու թշվառության:—

Յելած վորոնելու գալիքների շավիղ,
Ապագայի ընթացք ու հորիզոն —
Նոքա կրում են լոկ անանձնական ցավի
Ու հանգուցյալ փառքի մեռելային կավիճ՝
Հազարամյա մեր դեմքը յերիզող...
Յեվ անվավեր փառքի առասպելյալ փայլով
Շղարշելով խեղճությունն հազարամյա —
Միջնորդել են նոքա հյուսիսում ու այլուր՝
Ներքինատիպ, զազիր ու զառամյալ...
Խոստացել են նոքա իրենց յերբեք չեղյալ
Փառապանծ անցյալի անունով —
Առաջնորդել նոցա Յերկիրը Ավետյաց՝

Հանուն վորդու, հոգու և հանուն հոր…

. . . .

. . . .

Այսպես անցել ենք մենք անխոհ ու անգաղափար
Պատմության քառուղիներով, վորպես միրաժ,—
Կտրել ենք յերկար մի ճանապարհ
Յեվ ճանապարհը մեր այս
Յե՞րբ է արդյոք, յե՞րբ է փայլատակել, ո, յե՞րբ,
Յե՞րբ է վառվել լույսով գալիքնափայլ,—
Յեվ ո՞վ, և ո՞վ է մեր ապագային տվել
Անխզելի ընթացք ու գաղափար…

. . . .

. . . .

Իսկ նրանցից հետո ահավասիկ իմ դեմ
Մի ձեռք, վոր զորություն է տալիս գրչիս —
Մեր պատմության գրքից դարձնում է մի թերթ
Յեվ բացում է էջը նախավերջին,—
Յեվ հանդես են գալիս — անկերպարանք ան-
դեմ—
Յերեկվա մեր տերերը չնչին։—
Ո, վաշխառու ճորտեր, հացկատակներ, մթին
Սերմանողներ քամու ու մուրացկանության,—
Մեզ ժառանգած գանձի ո, վատնիչներ հետին,
Վոր ափերում հեռու ձեզ ապաստան գտած —
Կերտեցիք դղյակներ ու ապարանքներ,
Մեր անունից մրրիկ սերմանեցիք —
Յեվ այսորվա ձեր խեղճ վոչնչության անգետ
Վերջին խարխուլը մեր
Վաճառքի հանեցիք…

Յեվ կործանվեց ձեր փառքը։ — Ապարանքները
ձեր
Միրաժների նման անապատի
Անեյացան մի որ — և վո՞չ մի ձեռք
Չդրոշմեց ձեր հետքը պատմության ճակատին…
Վորպես փոշի — անցաք, վորպես քամի,
Յեվ վո՞չ մի, վո՞չ մի մատյան
Չի նշելու յերբեք ձեր ցնորքը անհիմն
Իր էջերում անջինջ ու անհատյալ…
Անեյացավ ձեր փառքը։ — Յեվ այն, վոր դեռ
ունեք
Աշխարհի բոլոր հեռուներում —
Կկործանվի մի որ ամենուրեք
Յեվ գալիք պայծառ որերում
Վո՞չ մի գուսան յերբեք իր յերգերում հնչեղ
Չի կարդա նզովք անգամ ձեզ,—
Դո՞ւք, վոր միայն վոգու խեղճություն եք ցանել
Յեվ գալիքում — տխուր մոռացություն հնձել…

. . . .

. . . .

Իսկ ժողովուրդը, վոր յեղել է հանճարեղ,
Յեղել է վորմնադիր, յեղել է կառուցող,
Քաղաքներ է շինել, պարիսպներ է շարել,
Կամուրջներ է գցել կոր գծով,—
Վոր դարերի միջով մինչև այգն այս հասած՝
Կրել է մեջքի վրա իր
Ո՛, յեղկելի տերեր, զազիր ու բազմազան
Ձեր բռնությունը բիրտ…
Ունի՞ արդյոք թեկուզ մի աննշան մասնիկ

Վաստակներում ձեր այս անքանքար —
Ժողովուրդը, վոր իր աշխատանքն է ազնիվ
Ձեր սեղանին բերել՝ արնաքամ։ —
Ո, վո՛չ։ — Ապրել է նա իր ճորտային կյանքով,
Խոր խավարում՝ արև՛ չերազել, —
Յեվ չերգել է դարեր իր ռամկական հանգով
Իր խոհերը արդար ու վսեմ։
Ստեղծել է նա իր հեքիաթները, — և իր
Հնամյա վեպում հանճարեղ —
Իր ապագա կյանքի գաղափարը կարմիր
Յեվ անմահ խորհուրդն է դրել։
Խոր գերության ներքո, այնուամենայնիվ,
Պատմության քառուղիներում վոլորապտույտ,
Պայքարել է վոգով, մաքառել է նա միշտ,
Յեվ չի կորել դաժան տարիներում այն մութ։ —
Խո՜ր գերության քարե կամարների ներքո,
Բռնության տակ հայրենի և օտար,
Նա մեր անպարտ վոգու ստեղծարար բերքի
Ճանապարհն է հարթել անդադար։
Այդ ճանապարհն է, վոր չնչին արքաների
Յեվ բոլո՛ր տերերի վոչնչությանն ընդդեմ —
Դարձրել է վոգին մեր — այնքա՜ն բերրի,
Ամե՛ն ճորտության անընտել։
Այդ ճանապարհը ձգվում է ահավասիկ
Մեր որերից մինչև միջնադարյան հեռուն,
Մինչև դարերը հին, ուր մենք հազիվ ենք
Պատմության ընթացքը տարբերում։
Քայլել են քարքարոտ այդ ճանապարհով
Գորշ, անանուն մարդիկ, գեղջուկ ճորտեր, —

Կրել են կրծքերում գաղափարներ գերող,
Ստեղծարար մտքեր, բոցե բառեր, վոր դեռ
Չեն խոյացել յերկինք, չեն ընդունել դեռ ձև,
Բայց կհառնեն մի որ կերպավորված, —
Ո՜, հանճարեղ վոգու դեռ չբացված գանձե՜ր,
Յեվ հանճարի հանքե՜ր դեռ չփորված...
Ա՛յս է տվել նրան վոգու անհուն կորով
Յեվ ա՛յս է մեզ փառք սահմանել, —
Բայց կարո՞ղ եր արդյոք՝ կապանքներում գերող՝
Իր հուրը անեղծ նա պահել...
Արքաների որով և իշխանների
Կքել է ճորտության կապանքներում նա լուռ,
Յեվ անգամներ բազում նա քշվել է գերի,
Յեվ գերությունը իր կրել է համր ու լուռ։ —
Յեվ գերության գրկում կեղեքող
Յուրաքանչյուր գերին՝ աչքը ահեղ մահի՝
Ծածկել է խեղճության թաղիքով,
Իբրև անգին մի գանձ, իբրև ավանդ վերին՝
Իր հանճարեղ վոգու կրակն անշեջ,
Ստեղծարար այն հուրը, — և բոլորից թագուն
Վառել է միայնակ, վախվխելով, ինչպես
Հանցագործն է վառում իր լապտերը մթում։
Ջլատվել է այսպես ժողովրդի անեզր
Հավաքական հանճարը զարկիչների հանդեպ, —
Յեվ դարձել է ահա ժողովուրդը ե՛ս,
Իր տերերի նման, անուղի ու անդեմ...
Իսկ ապա, յերբ փոխվել է ընթացքը դարերի,
Յերբ դարերում մարել է թիթեղյա,
Սակայն շլացուցիչ պորփյուրն արքաների —

Յեվ արքաների տեղ այն
Վոսկին ե նվաճել իշխանություն ու փայլ,
Բաժանել արյունոտ դափնիներ,
Պետություններ կանգնել, ուր պճնություն ու
    փառք
Կարելի չե գնել, —
Նա քշվել ե կրկին նախիրների նման
Դեպի Թիարաններն անհաց աշխատանքի,
Յեվ վաստակել այնտեղ մինչև ի մահ՝
Ընտելացած արդեն անինքնուրույն կյանքի։
Յեվ անհաց վաստակի այդ Թիարաններում,
Ինչպես առաջ՝ դաշտերում ճորտության —
Վիճակվել ե նրան մի կապարե հեռու
Կրկնակի՛ տառապանքի և գերության։
Նրա գլխին շաչող այդ նոր խարազանը
Յեղել ե յերկճյուղ, ինչպես քիստ, —
Յեվ վաստակը վողու, վոր սրբազան ե —
Արգելված ե յեղել նրան միշտ։
Բայց առաջին անգամ իր գոյության չարքաշ
Հազարամյա ուղու ընթացքում —
Նա այստեղ ե տեսել շողշողացող մի այգ,
Վոր պայքարով ե բացվում...

. . . .

Յեվ այսպես — պատմության քառուղիներով
Անցել ենք մենք անղեկ ու անգաղափար,
Շառագունված անվերջ ուրիշների հրով, —
Յեվ մեր ճանապարհը անփայլ
Յեղել ե ճանապարհ ունայնության, մահի —

Յեվ չենք կարող այսոր ձեզ մեծարել
Ո, նախնիներ մեր խեղճ, առաջնորդներ մեր
    հի՛ն, —
Մեր պատմություն անշեմք ու անհանճարեղ...
Ահավասիկ յելած ձեր աներազ քնից
Նզովում ենք մենք ձեր յեղկությունը մթար —
Ո՜, կերտողներ չնչին մեր անհանճար հնի
Յեվ հերոսներ անքանքար մեր պատմության...
Մոլորակի վրա այս խայտաբղետ,
Աշխարհի սկզբից մինչև վախճանը
Յերևի առաջին ժողովուրդն ենք մենք,
Վոր կամենանք անգամ — դավաճանել
Անկարող ենք փառքին մեր ու պատմությանն
    անցած, —
Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
Զարմանալի՜ թեթև, զարմանալի՜ անդեմ՝
Մերկության պես տկլոր ու անանցյալ...
Այդ մենք ենք յերևի այն ուղտը հաստակող,
Վոր Հիսուսի առակին հակառակ —
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝
Ապագայի դրախտը անարատ...
Այդ մենք ենք յերևի այն հարուստը,
Վոր անցյալի մեր այդ տկլորությամբ հարուստ —
Պիտի ժառանգենք մեր դարերի կորուստը,
Վոր բոլո՛ր տկլորներին սահմանված ե վերուստ...

1933. I.

ԴԵՊԻ ԼՅԱՌԸ ՄԱՍԻՍ



Նա դուրս չեկավ տնից առավոտվա ծե-
գին,
Իր չեռևից կամաց դուռը փակեց,
Վերջին անգամ նայեց իր տնակին —
Յեվ քայլերը ուղղեց դեպի բաղերը։ —
Ցուրտ եր։ — Արևը դեռ հորիզոնից
Նոր եր փռել աղջամուղջը վաղընջական,

Յեվ վաղ առավոտի ծիրանեգույն ֆոնին
Հեռվում չերևում եր Մասիսը՝ կապույտ շղարշ
հագած...

. . . .

. . . .

Գիշերը չեր քնել։ — Բրքրել եր թղթերը,
Յերկար թերթել թերթերը բազմաթիվ. —
Որագրեր, գրքեր, ձեռագրեր,
Գրություններ՝ մնացած դեռ Դորպատից։
Կյանքի նման իր բարդ, խառնիխուռը, լիքը
Իր խոհերի նման բազմապիսի,
Խոհեր՝ ուղղած դեպի սերունդները գալիք,
Ծրագիրներ՝ կիսատ, կամ սկսված հազիվ, —
Ո՞ւմ եր թողնում բոլորը, վ՞որ սիրեցյալ սանին,
Վորպեսզի վաղը նա այդ թերթերից
Գուրգուրանքով հաներ իր խոսքը կենդանի
Յեվ խնամքով հանձներ տպագրյալ գրին...
Յեվ նամակներ ապա... Այդ թերթերը դեղին,
Ծածկած հաճախ գրով գոթական —
Այդ չե՞ր միթե հախուռն իր օրերի ուղին,
Իր խոհերի, գործի ու աքնաջան
Մաքառումի՝ ընդդեմ իր գոյության չարքաշ...
Ո՜, անպտուղ վաստակ ու աքնությո՜ւն ՚չերկար,
Գոսն օրերում — վոգու հոգնությունն չեղկ, —
Անտեսնելի գալիք ու կապարե ներկա,
Անհորիզոն կյանքի կապարե չերգ...

Գիշերը չերկար նա նստած
Բրքրել եր իր հին նամակները բազում. —

Մռայլության փոշին եր նրանց վրա նստած,
Յեվ թվում եր՝ հեռու մի յերազում
Նա տեսնում ե կրկին իր որերը,
Հորձանուտը նրանց անորինակ —
Այդ դեղնավուն թերթերը, այդ դանդաղ գրերը՝
Ի՜նչ ըղձերով արդյոք հորինած...
Նամակների դեզում կային խստաբարո
Գրություններ՝ շեշտով խրատական,
Ինչ-վոր ուրիշ կյանքի ընթացք բարբառող, —
Գրություններ կային, վորոնք, սակայն,
Նշում եյին նրան ուղի նվաստ,
Գծում դժնի ընթացք ասխացու,
Յեվ հորդորում եյին քայլով զգաստ
Ընթանալ կամոքն աստուծո՝
Խոնարհության շավղով, առաքինության,
Դարերով սրբագործյալ հեզության,
Վոր ժողովուրդը լինի, ինչպես հնում —
Ջարքաշ, աստվածավախ ու արդար։ —
Սակայն նամակների դեզին դեզերում,
Ծալքերում նրանց փոշաբույր
Հանկարծ աչքին ընկավ մի գրություն գերող՝
Մի փոքրիկ թերթ կապույտ։ —
Ինչպես ցողն ե լինում ծաղիկների վրա՝
Թափանցիկ, վաղընջական ու գերող —
Այդ թերթիկը կապույտ ալեկոծեց նրան
Հուշերով՝ չճաշակած մի քաղցրության բուրող...
Հիշեց։ — Յե՞րբ եր արդյոք։ — Դեռ ինքը՝ յերի-
տասարդ՝
Լցված յերազներով ու հույզերով,

Յերևանից մինչև այն յեզերքը հասած՝
Բռնկվեց անկարելի մի սիրով...
Մռայլ հեռուներից յեկած մի արեղա,
Ընտելացած խոհեմ յերազի ու կյանքի —
Զգեցած սուրբ վարքի խստաբարո ուրար —
Դեմ հանդիման յեկավ այդ տենչանքին անգին...
Յեվ հանկարծ — այնքա՜ն պայծառ,
Կարծես այսոր լիներ, հենց հիմա —
Պատկերացավ նրան այդ անցյալը
Մի տեսիլի նման։ —
Կանգնեց իր դեմ աղջիկը. — վոսկե գիսակներով,
Աչքերով, վորպես յերկնակամար,
Աստվածածնի նման պսակավոր, —
Ի՜նչ մեղսական ու հույլ տենչանքների համար
Բուսած, ինչպես ծաղիկ, անուշ ու անդրկելի...
Յերիտասարդ եր. կուրծքը հեշտանքով լի,
Բարակ մատներն ինչպես սիրո տավիղ. —
Մորմոքում եր իր սիրտը անհուն ցավից,
Յերբ դիտում եր պատկերն այդ մեղսալի...
Այդ յե՞րբ եր. յերե՞կ եր, թե տարինե՞ր,
Տասնամյակնե՞ր առաջ... Յեվ յե՞րբ անցավ...
Ժամանակը հետո փոշոտ պատնեշ հինեց —
Յեվ ինքը ամբողջը մոռացավ։ —
Յեվ ի՜նչ մնաց։ — Այս թերթը վոսկերից,
Այս թերթիկը կապույտ, ինչպես անուրջը,
Ուր գրում ե նա իր հրաժեշտի խոսքերը,
Այն վոսկեծամ աղջիկը — Շարլոտտա Շուլցը։ —
Մի բաց-կապույտ թերթիկ, վերևը զարդարած
Սուվեներով խրթին ու մանրանկար,

Յեվ գոթական սուրսայր նշաններով գրած
Վոտանավոր մի խեղճ ու անքանքար…
Ահավասիկ ամբողջը։ — Յերկա՜ր, յերկա՜ր նայեց
Սուվենիրին նա նուրբ ու գրերին,
Ուզեց ճմլել այդ թերթը, ինչ-վոր մի տեղ պահել,
Կամ պատառոտել նվերը, —
Սակայն թողեց. Թաղեց թերթերում այլ,
Կամքի վերջին ճիգով քերեց խոհերից,
Յեվ սկսեց թերթել զգաստությամբ մռայլ
Մյուս թերթերը հին։ —
Յեվ հետո, արդեն լուսադեմին,
Յերբ մոտենում եր տնից հեռանալու ժամը —
Նա գզրոցից հանեց տետրակ մի հին,
Վոր նայի նրան մի անգամ ել։
Յերկա՜ր, յերկա՜ր նայեց նա տետրակին,
Հիշեց հանկարծ իր հորը, Յերևանի բերդը,
Մորը հիշեց՝ պարթև ու արխալուղ հագին, —
Յեվ սկսեց թերթել…
Նախ թերթում եր այնպես, աննպատակ,
Հետո աչքին ընկավ մի բայաթի,
Սկսեց կարդալ մի հատված,
Հետո խորասուզվեց — և մինչև առավոտ
Շողն առաջին ընկավ սենյակից ներս —
Նա կարդում եր, կարդում եր, մոռացած, վոր
պիտի
Շուտով թողնի ամբողջը և յելնի վեր…
Յերկա՜ր, յերկա՜ր կարդաց։ — Մի յերկու տեղ
Նկատեց փոքրիկ վրիպումներ
Յեվ մատիտով ուղղեց։ — Հետո թեթև

Այլ ուղղումներ արավ, — սակայն անվերջ
Գիտակցության տակից, իր եյության
Մութ խորքերից, ուր միտքը վախում եր թա-
փանցել —
Տագնապալից աճում եր ահանման մի բան՝
Կասկածի պես անորոշ ու անձև…
Արդեն մոտենում եր առավոտը և նա պիտի
գնար,
Սակայն կարդում եր դեռ, — և հանկարծ
Տագնապալից այն միտքը անհնար
Բարձրացավ, ցցվեց ուղեղում՝ զարմանալի ու-
ռուցիկ ու պայծառ։ —
Ի՞նչ է ասում այդ գիրքը յեվ ի՞նչ է բարբառում.
Զուր չէ՞ արդյոք վատնել անհատնելի իր ձիրքը.
Յեվ չի՞ արդյոք յեղել իր վողջունած նեռուն
Մի թիարան վատթար, — յեվ այդ գիրքը՝
Իր արյունով, սրտի յուրաքանչյուր նյարդով,
Իր վերջին ճիգով հորինած —
Չէ՞ արդյոք խենթության ու սխալի արդյունք՝
Սերունդների յերթին ի վնաս…
Վաղո՞ւց են չարաշուք այդ խոհերը խոցել
Անողնական իր սիրտը, — սակայն ամեն անգամ
Հենց վոր հանել ե գիրքը և կարդացել —
Ինչ-վոր անհուն մի բան,
Զարմանալի մի բան՝ կարոտի
Ու թովչության նման անհասկանալի —
Վողողել ե իր սիրտը և կոկորդում
Իբրև արցունք՝ հորդել… Ո՜, անձկալի
Ժամեր միայնության, ընդվզումի, խոհի,

Վոգու ըմբոստության ու կռվի, —
Ստեղծագործ մտքի թռիչք ամենի՝
Ճգնության պես անձուկ ու թովիչ...
Յեվ հայրենի բարբառը՝ վորոտաձայն, հախուռն,
Վոգու անեղծ հրով սրբագործած, —
Յեվ խորախոց խոհերը տարիներում անդուռ —
Միթե սո՞ւտ ե բոլորը և փորձա՞նք...
Միթե մո՞ւխ ե բոլորը, վոգու սայթաքո՞ւմ, —
Յեվ ամենը, վոր յեղել ե կյանքում
Իր յերազանքը սուրբ, իր ըղձանքը թագուն —
Անիմաստ ե յեղել, ինչպես հորձանքով,
Գոսն որերի դժնի հորձանուտով տարված
Թղթե չնչին նավակ կամ տաշեղ, —
Յեվ իր կյանքը ամբողջ յեղել ե սին մի հարց՝
Աննպատակ ուղղած և ամպաշեն...
Բայց վո՛չ. ինչ ել լինի — այնուամենայնիվ
Հո չի՞ ստում կարկաչն այս բարբառի,
Այս յերգեցիկ գրքի յերգանման ձայնը,
Վոր դիպչելով կյանքի հազարամյա քարին՝
Պիտի ճեղքե այդ քարը, այդ ժայռակուռ պա-
    րիսպը,
Պիտի բանա թեկուզ փոքրիկ կածան,
Վոր դյուրությունն անցնի ու հորդանա, ինչպես
Ջինջ առուն ե անցնում ջրանցքներով բացած: —
Վո՛չ. չի ստում բարբառը. — ահավասիկ գարնան
Հեղեղների նման վորոտում ե իր դեմ, —
Յեվ նա կարդում ե հափշտակված, կարդում ե
    բարձրաձայն,
Իսկ դուրսը — առավոտ ե արդեն: —

Իսկ յեթե չի՛ ստում այն կասկածը
Ցեվ ստո՞ւմ ե այս գիրքը... — Նա
Տագնապասիրտ՝ գրքի նախաբանը բացեց,
Մի-յերկու տող կարդաց — և գաղագած
Պատրաստվում եր արդեն շպրտել գիրքը դեն, —
Յերբ աչքերի հանդեպ ահաստատ
Հառնեց, կանգնեց հանկարծ մի բարի դեմք...
Այդ նա՛ յեր — ուսուցիչը: — Դեմքով բարի,
Յե՛վ հարազատ, և՛ սառը, խստաբարո,
Բարեկամի նման մտերիմ,
Յե՛վ անհողդողդ, և՛ մեղմ, և՛ անսահման ներող —
Նայեց նրան մի պահ, աչքերը սևեռեց
Նրա հոգու խորքը — և մարմարի պես նուրբ
Ձեռքը յեղբայրաբար գրքի վրա դրեց
Յեվ մրմնջաց հանդիստ. — Թո՛ղ, Խաչատո՛ւր: —
Այնքան քնքո՛ւյշ եր ձայնը — և, միևնույն պահին,
Ահաստատ եր, ինչպես մահվան պատգամ, —
Յեվ նա հիշեց հանկարծ. — այն ցուրտ ճանա-
    պարհին
Դեպի լյառը Մասիս — մի անգամ
Այդ միևնո՛ւյն ձայնով նա՝ ուսուցիչը՝
Զսպեց իրեն, յերբ ինքը մի գյուղացու
Ուզում եր սառցապատ ճանապարհից գցել,
Վորովհետև այդ բութ գյուղացին
Համոզել եր, թե ինքը գիտե ճանապարհը,
Բայց հասցրել եր իրենց անդունդի, —
Յեվ այժմ, նո՛ւյն ձայնով, նա հորդորում եր հար
Անդավաճան մնալ իր ուխտին: —
Յեվ նա մնաց: — Հավերժ մի շարժումով

Գիրքը ծալեց, դրեց արկղում ավանդական,
Հետո հավաքեց նամակները ու մի
Դառն հայացքով — յերկա՜ր, վերջի՜ն անգամ
Դիտեց թղթերը, արկղը, պատերը սենյակի,
Արկղը փակեց, հագավ վերարկուն,
Գլխարկը դրեց կռնատակին —
Յեվ յելավ դուրս։ —
Առավոտ եր արդեն։ — Այգիների վրա
Արդեն փռել եր իր լույսը ծիրանեգույն
Արարատյան արեը — և հուրհուրան
Առավոտվա մեգում
Հեռուն, հորիզոնի վաղընջական ծիրում
Արթնանում եր Մասիսը վեհափառ,
Վորպես լուսե ցնորք, վորպես հեռու
Բարեկամ անդավաճան, կամ յեղբայր։
Գիշերը չեր քնել։ — Հոգնած եր, վաստակած,
Խոհերը խառնիխուռը և վրդովյալ, —
Հոգնած եր ու տխուր, — յերբ դուրս յեկավ սա-
կայն —
Առավոտվա վեհությամբ թովված՝
Զգաց հանկարծ իրեն այնքա՜ն թեթև,
Յեվ այնքա՜ն, այնքա՜ն թարմացած,
Վոր ամե՛նը, ամե՛նը, վոր մնում եր յետևը,
Իբրև ցնորք անցած —
Թվաց անգին ու քաղցր, հեռու ու անիրական,
Սրբագործված, ինչպես վոսկեղեն հուշ —
Յեվ նա քայլեց հաստատ, քայլով սովորական,
Ինչպես գնում են գործի, վոր կարևոր է հույժ։
Դեմը — դաշտն եր անծայր, իսկ հեռվում — Մասիսը,

Լյառն այն վսեմ, վորի ճանապարհով մի որ
Բարձրացել եր ինքը և սառցանիստ
Գեղեցկությամբ գերվել։ — Յեվ այժմ, մենավոր
Նա գնում եր կրկին դեպի հեռուն այն լուրթ,
Դեպի լյառը անհաս ու վեհանիստ, —
Դեպի գագաթը բարձր, վոր իր ժողովուրդը
Համարել է հավետ իր գոյության խորհուրդը, —
Վոր ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ...

1933. II. 20.

ՄԱՇՎԱԾ ՏԵՍԻԼ

ՄՈՒՏՔ

ՔԵՐԹՈՒԹՅԱՆ վոլորապտույտ ճանապարհներով
Անհանգըրվան անցած տարիներ յերկարաձիգ,
Սիրտս կիզած բազում արևների հրով,
Խուսափելով ընդմիշտ յերգերից դյուրածին,

Ահա զգում եմ ինձ կրկին անօգնական,
Անավորված, ինչպես բարձր լերան առջև,
Վորի վոլորաններով կրկին պիտի գնամ,
Յեվ չգիտեմ՝ ընկնե՞մ պիտի արդյոք, թե՞ վաստակած հանգչեմ...

Արդ՝ մանուկ եմ յես նորից, և՛ անուժ, և՛ դողահար,
Անհամարձակ, ինչպես աշակերտ, ուժերիս ու գրչիս անվստահ, —
Լեզվիս վրա կսկիծ, և՛ ջերմություն, և՛ վահր՝
Աչքերս հառել եմ անցյալին՝ ապագայի նժույգը նստած։ —

Ձե՛զ եմ հառել աչքերըս, ո՛վ անցյալի վսեմ քերթողահայրե՛ր,
Գագաթնե՛ր Մուքի ու Հանճարի և Բերթության պետե՛ր, —
Քե՛զ, անհույզ, մարմարյա Հոմերո՛ս, վոր յերգել ես հերոսների մահը,
Սակայն խաղա՛ղ սրտով, մի մանկական հեքյաթ իբրև թե։ —

Յեվ քե՛զ, լատինական փառքի հուշակը ավետող
Ո՛վ դյուցազնական և բարբարոս Վիրգի՛լ,
Վոր ընթացել ես թևև հելլեն հանճարների սրբագործած հետքով,
Սակայն ինքնահուն և յեղել պղընձյա արշավանքը յերգելու

Յեվ քեզ, արեգակնական հանճար, շռայլորեն փարթամ Ֆիրդուսի,
Բազմարզետ, ինչպես Արևելքը, գանձերով ու արկածներով հարուստ,
Վոր հանճարիդ այնքա՜ն անայլայլ և իմաստուն լույսով
Ներբողել ես շահերի սխրությունները սին, իբրև ուղի անմեռ, վոր տրվում է վերուստ...

Սակայն բոլորդ միասին թվում եք ահավասիկ
Ապագայով լեցուն աչքերիս, վոր անցյալին եմ հառել ահալի, —
Ո՜վ դուք, զառամյալ մանկության հիշատակներ վսեմ, —
Այնքա՜ն թոթովախոս ու միամիտ...

Ձեր յերգը միամիտ մանկության և վոգու յերջանիկ անգիտության,
Յեվ կարծեցյալ փառքի, և ճորտության դժնի,
Բայց և հանճարափայլ պարզեն եր՝ մեզ տրված
Հի՜ն դարերի տքնությունից ազնիվ։ —

Այլև ներբողել է ձեր յերգը հերոսություն ու փայլ,
Խիզախների վսեմ արշավանք և այրերի դաշինք,
Նշել է քերթության լուսազարդ ճանապարհ,
Փառք անմահական՝ բազմած մարմարիոնյա նժույգների բաշին։ —

Բայց անցյալը այն, այն ուղին, այն ճանապարհը չարչարանաց,
Վորին յես ահավասիկ ուզում եմ մոտենալ —
Չէ լյառ հերոսության, կամ վեհության ուղի, կամ փառքի ճանապարհ,
Կամ իմաստության պարտեզ, կամ վոգորում վոգու, կամ տքնություն անահ...

Յեվ այն տեսիլը, վոր՝ տարիներից հառնած՝
Ծառացել է ահա իմ վարանոտ ու զարհուրյալ հայացքների դեմ —
Վո՜չ փառքի գագաթ է խոստանում, վո՜չ քերթության Պառնաս,
Վո՜չ անգամ փղփղյալ տողերի անմրցելի հանդես։ —

Այդ տեսիլը դժնի է և ժանտաժանտ, անփայլ է և գոռնական,
Յեվ զարհուրելի է, ինչպես զառանցանք, և անիմաստ է հավետ, —
Ո՜վ անցյալի պայծառ քերթողներ, ձեր յերգը հերոսական
Թող դարերին մնա ձեր հեռավոր, ձեր որերին անե։ —

Ձեր մարմարիոնյա և դաշն դեմքերի փոխարեն,
Իբրև վարպետ միակ, իբրև անկաշառ մարգարե —
Ահավասիկ հառնում է մռայլ միջնադարից
Յեվ կանգնում է դեմս, ո՜վ տառապյալ հանճար, քո կերպարանքը քարե։ —

Անցյալի արնակարմիր տեսիլներից շշմած հայացքներիս հանդեպ,
Որ ուղեցույց են հայցում, և՛ առաջնորդ արդար, և՛ կրովի հանճար —
Պատկերելու համար Անցյալի խավարից հառնած զարհուրանքը —
Դժողքի դժնի մշուշից բարձրանում է ահա քո դեմքը բազմաչարչար...

Զարհուրանքի սովոր աչքերով, որ խորն են ու գերող,
Դու նայում ես ահա վոգուս խորքը, յերկար նայում ես վոգուս խորքը, —
Յեվ բռնում ես ձեռքս, վոր ինձ առաջնորդես մռայլ ուղիներով,
Ինչպես Վիրգիլը լուսավոր, վոր ցույց տվեց մի որ քեզ յերկնային դժողքը։ —

Անավասիկ գնում ենք քեզ հետ միասին, աշակերտ ու վարպետ,
Բերթուեթյան թոթովախոս մանուկ և այր բազմավաստակ,
Մեր խոհերով, մեր կյանքով, մեր յերգերով անհունորեն տարբեր,
Բայց և հարազատ ու արնակից, իբրև միևնույն մարդկութեյան յերկու տարբեր հասակ։ —

Ընկնում ենք քեզ հետ միասին մենք ճանապարհ յերկար,

Յեվ մեր առջև ահա իր հորձանքն է ձգում արնափրփուր մի գետ,
Որ բաժանում է դժնի անցյալից այս լուսավոր ներկան, —
Յեվ մենք նստում ենք Մտածումի նավը, վոր նավարկենք քեզ հետ։ —

Գնում ենք ահավասիկ քեզ հետ Բերթուեթյան ու Խոհի դժվար ճանապարհով
Դեպի ափը դեմի՝ ամեն հույս ու հավատ թողնելով այս ափին,
Յեվ Մտածումս ահա, վորպես մշտնջական ու կրովի Քարոն,
Նավարկում է դեպի Անցյալը, դեպի Անցյալը դառն, դեպի ափը Մահվան ու Սարսափի...

Ա

Մենք ափ ենք յելնում միասին և նայում ենք մեր շուրջը մի պահ. —
Լռութեյուն է, մռայլ մառախուղ, իսկ վերից գունատ մի մահիկ
Իր մեռյալ լույսի հետ մեկտեղ տարածում է տխրութեյուն ու ահ
Այդ անծիր յերկրքի վրա անսահման Սոսկումի ու Մահի։

Քայլում ենք, իրարու բռնած, քայլերով տարտամ, յերերուն,

Անուղի, ինչպես մոլորված յերկու կույր, կամ անոգ մանուկ։
Մինևույն մառախուղն է բռնել թե մոտիկը մեր, թե հեռուն,
Մինևույն լռությունն անհուն։

Խտանում է մեր դեմ մառախուղը. — ժայռեր են կարծես ու քարեր
Պարսպի նման բարձրացել և բռնել ճանապարհն անդարձ։ —
Մոտենում ենք մենք ժայռերին — և տեսնում ենք վիթխարի ծառեր,
Յեվ մտնում ենք ահա խավարով ու ահով լեցուն մի անտառ։

Ծառերի միջով վիթխարի գնում ենք դանդաղ մենք առաջ,
Կանգնում ենք, ականջ ենք դնում լռության մեջ յերկար ու յերկար, —
Յեվ ահա հնչում է մթին անտառի խորքից մի հառաչ. —
Այդ յե՞րգ է արդյոք, հեկեկա՞նք, թե՞ տրտունջ՝ քնարով յերգած։ —

Լսվում է ապա մոտիկից մի հանդարտ, դանդաղ վոտնաձայն.
Մոտենում է մեկը. դեպի մեզ, դեպի մեզ է գալիս ահա նա.

Յեվ ահա — ծառերի յետևից յելնում է մի այր գլխաբաց. —
Վարդապե՞տ է նա, մուրացի՞կ, թե՞ գեղջուկ, աղքատ քահանա։ —

Լուսնի սառ լույսերով վողողված՝ մոտենում է նա յերերուն
Քայլերով, կանգնում է մեր դեմ, — ուրվական է կարծես նա ցավի. —
Փոքրիկ է. նիհար. կիսամերկ. ճակատին պսակ է կրում,
Յեվ ձեռքին բռնած նա ունի մի հսկա արծաթյա տավիղ։

Հասնում է մորուքն սպիտակ մինչև սրունքները նրա՝
Սպիտակ սավանի նման ծածկելով մերկությունը ծերի.
Հայացքով տխուր ու անոգ նայում նա լուռ մեր վրա,
Յեվ ապա, դառնալով Վարպետին, նա ասում է ձայնով մտերիմ.

« — Վարպե՛տ, ո՛հ, յես էլ քեզ նման մի գիշեր աշխարհից անցա,
«Ապրեցի, իբրև վանական, հայրենի յեզերքում քո ծովի.
«Բայց չքնաղ հայրենիքը քո — ինձ համար հայրենիք չդարձավ,

«Յեվ ծովը ձեր այն ծիծաղկուն — չբուժեց իմ
սիրտը ցավից։

«Աշխարհում շաչող հողմերից այն կղզում ապաս-
տան գտած,
«Զգեցած սևասև սքեմ՝ յես տավիղը սակայն
սիրեցի.
«Յեվ տավիղը շեփոր դարձրած՝ քերթության
պարտեզը մտա,
«Վոր կորած հայրենիքս յերգեմ և անցյալը նրա
հրածին։ —

«Յերգեցի յես ձայնով առնական ամրոցներն ու
բերդերը հայոց,
«Վոստանները հայոց արքայից, պալատները նո-
ցա փառահեղ.
«Յերգեցի Կարմիր Ավարայրը, Մասիսը՝ աստղե-
րին հայող,
«Զգտելով հին փառքը հայոց սրտերում անմար
միշտ պահել։

«Բնարով մարտի կոչեցի յես նոցա՝ հանուն ան-
ցյալի,
«Կոչեցի յելնել վերստին, թոթափել փոշին բար-
բարոս, —
«Կոչեցի արժանի լինել մեր նախնյաց փառքին
պանծալի՝
«Վառելով ջահերն անցյալի, իբրև նո՛ր փրկու-
թյան փարոս։ —

«Յեվ յերգս իզուր չհնչեց։ — Հայրենի յեզերքից
քո լուրթ
«Թռչելով, իբրև հրավեր, դեպի հայրենիքն իմ
հեռու —
«Նա վոտքի հանեց քաջարի այրերի անմահ մի
սերունդ,
«Վոր յելավ գերության փոշուց հայրենյաց հա-
մար կռվելու։ —

«Յեվ թեև քենով բարբարոս փորձեցին նոքա,
դարավոր
«Վոսոխները հայոց աշխարհի, մեզ արյամբ վո-
ղողել կրկին, —
«Բայց վսեմ մեր յերթը յեղավ անցյալի փայլով
փառավոր,
«Յեվ խաղա՛ղ սրտով յես մեռա՝ մինչև մահ քնարը
ձեռքիս։» —

Ասաց — և խփեց քնարին նա մոմե մատներով
դեղին,
Աչքերում ամեհի մի հուր, մորուքով մերկու-
թյունը ծածկած,—
Յեվ ձայնը նրա քնարի, վոր նման եր ձայնին
թիթեղի,
Հնչում եր, ինչպես մի հիվանդ, մահամերձ ըն-
կած մանկան լաց։

Յեվ տավիղն հնչելով հեռացավ, խարխափով
մտավ նա նորից

Անտառի խորքը խավար, ուր տիրում եր տագ-
նապ ու հառաչ։ —
Մենք յերկար լսեցինք նրա քնարի հառաչքը
խորին,
Մինչ սուզվեց, լռեց նա հեռվում... Յեվ անձայն
անցանք մենք առաջ։—

Բ

Գնում ենք մենք ահա կրկին անտառով այդ մութ
ու խավար,
Ծառերի ճյուղքերն անտերև քսվում են դեմքե-
րին մերթ մեր,
Յեվ թվում ե մեզ, թե նոքա չորացած մատներ
են նիհար,
Յեվ թվում են ծառերն անտառի — սարսափից
քարացած դեմքեր։

Գնում ենք անտառով յերկար, և ինչքան խորն
ենք մտնում —
Լցվում ե անտառը այնքան հառաչի ու լացի
ձայներով,
Մանուկներ են կարծես զառանցում, ծերեր են
հոնդում մթնում,
Սերունդներ են կարծես կարկառում բազուկներ
գրկող ու գերող։

Բայց ահա յերևում ե հեռուն տագնապով թար-
թող մի կրակ,
Թարթում ե նա մերթ խավարում, ու կրկին
տագնապով մարում։

Մենք քայլում ենք նրա ուղղությամբ, մոտենում
ենք ահա մենք նրան,
Յեվ տեսնում ենք արդեն մոխրացած, համարյա
հանգած մի խարույկ։

Խարույկի շուրջը թափված մենք տեսնում ենք
զենքեր, վոսկորներ,
Մարդկային գանգեր, հնորյա զրահներ, մի հին
հրացան։ —
Յեվ տեսնում ենք ապա, այլայլված հայացքով
նայում ենք յերբ վեր —
Ծառերի ճյուղքերից կախված կմախքներ՝ տա-
պից չորացած։

Այս դժնի պատկերից սարսած՝ ուզում ենք ար-
դեն կիսամար
Այդ խարույկը թողնել ու գնալ, ընթանալ կրկին,
յերբ հանկարծ,
Ծառերի յետևից յելնելով՝ յերևում ե կիսամերկ
մի մարդ՝
Սևահեր, ահագին գլխով, վոտքերը վոլորուն ու
կարճ։

Գաճաճ ե կարծես՝ հրաշքով անտառի խավարից
յելած․
Աչքերը շանթեր են թափում, ցայտում են կայ-
ծակներ ու կիրք․
Վիթխարի գլուխը կարծես տնկած ե ուսերի վրա․
Ակնոցներ ունի նա դրած, և ձեռքին բռնել ե
մի գիրք։

Նայում է շանթող աչքերով նա մի պահ աչքերի տակից,
Նստում է ապա կլսամար խարույկի մոխիրի վրա,
Յեվ հսկա մի գնդի նման ցնցելով գլուխն անհագին՝
Ասում է ձայնով կանացի՝ ցուցամատը ճակատին դրած.

«— Այս խարույկը յես վառեցի աշխարհում ձեռքերով իմ թույլ,
«Յեվ տասնյակ տարիներ բորբոքված՝ նա ցրեց շողեր ու կայծեր,—
«Իմ ամբողջ կյանքում կռացած՝ փչեցի յես անխոնջ ու անդուլ,
«Վոր յերբե՛ք, յերբե՛ք չմարի նրա հուրը — և հար առկայծե։

«Յեվ յեկան, տասնյակ տարիներ սերունդնե՛ր յեկան բորբոքված,
«Այրեցին սրտերը թափուր աշխարհում վառած իմ հրով, —
«Հայրենի յերկրի խավարում սփռեցին հուր ցնորք ու կայծ.
«Այստեղի՛ց զրահներ առած գնացին Ֆահրատն ու Կարոն։ —

«Յես վրեժը կյանքում յերգեցի թշնամու հանդեպ հնորյա.

«Իմ քնարը, գրիչն իմ հատու — սրբազան մրրի՛կ սերմանեց, —
«Բայց նստած եմ կրկին ահա յես խարույկիս մոխիրի վրա —
«Յեվ շրթերս թորում են հիմա նախատինք միայն ու անեծք…»

Վեր թռավ հուզված նա տեղից, շպրտեց գիրքը մի կողմ,
Կռացավ խարույկի վրա և կրկին սկսեց փչել. —
Յելնում էր շունչը կրծքից մի խռպոտ, փայլայա աղմուկով,
Յեվ խարույկը չէր բորբոքում… Յեվ կանգնեց նա վոտքի ու գոչեց.

«— Բարձրացի՛ր, յելի՛ր խավարից, ո՛վ ռազմի յերգերի գուսան,
«Հնչեցրո՛ւ քնարդ կրկին, թող ձայնը նրա շառաչե՛. —
«Թող մարտի՛ նա կոչե կրկին բանակները մեր սրբազան,
«Յեվ զենքերը թող վորոտան, և՛ ռազմի սերը թող շաչե՛։ — »

Այսպես նա կանչեց, — և ահա, անտառի խորքից յելնելով,
Մոտեցավ մեզ մռայլ մի մարդ՝ մազերը գանգուր ու խռիվ.

Վիթխարի ճակատ նա ուներ. հայացքը խրոխտ ու խելոք.
Իր ձեռքի պղնձյա շեփորով շեփորեց նա պայքար ու կռիվ։

Բայց շեփորը՝ ռազմի ամպագոռ, շառաչուն յերգի փոխարեն՝
Արձակեց խուպոտ մի հառաչ, վոր նման եր քամու կաղկանձի.
Բայց նրանց մեռյալ աչքերում ամեհի հուրեր նա վառեց,
Յեվ գաճաճն սկսեց պարել — խելագար, խնդությամբ անծիր...

Քարացած՝ մենք նայում եյինք վիթխարի գլխով այդ մարդուն,
Վոր վայրի մի պար եր պարում կաղկանձող նվագի ներքո,
Իսկ վերից, խավարի միջից, պահակի նման մշտարթուն,
Զառամյալ լուսինն եր նայում՝ հմայված պարով ու յերգով։ —

Իսկ ծառի ճյուղքերից կախած կմախքները այն չորացած,
Շարժելով ծնոտներն իրենց՝ սկսեցին ամեհի կափկափել, —
Յեվ լուսինը, ի վերուստ տրված իր ժպիտը անդարձ մոռացած,

Սկսեց քրքջալ և վերից մեր գլխին պաղ մոխիր թափել...

Գ

Մենք թողինք պարող գաճաճին և ռազմի շեփորով մարդուն,
Յեվ կրկին դանդաղ քայլերով քայլեցինք անտառի միջով, —
Յերբ թնդաց հանկարծ անտառում մի յերկինք հասնող դղրդյուն,
Յեվ անտառը լցվեց ծայրեծայր բարձրաձայն լացով ու ճիչով։

Սարսափած՝ վազեցինք մենք առաջ ծառերի միջով անտառի,
Անպաշտպան կրծքերս նրանց ճյուղքերի հարվածին բացած, —
Յեվ այդպես յերկար վազելով — դուրս յեկանք հանկարծ անտառից
Յեվ փռվեց աչքերիս առջև — ամայի, ընդարձակ մի բացատ։

Վողողված կարմրավուն լույսով — ձգվում եր բացատն ընդարձակ,
Ամայի, ինչպես անապատ, անպտուղ, քարքարոտ ու լուռ։ —
Այդ մռայլ բացատի մեջտեղում, հրաշքի նման բարձրացած,
Ցցվել եր ժայռերից կերտած մի կարմիր, կոնաձև բլուր։

Մենք նայում եյինք բլուրին՝ աչքերս սարսափից
չռած,
Այնտեղից ուղմի մի շեփոր կանչում եր խրոխտ
ու առույգ.
Վառվում եր բլուրի գլխին բարձրաբերձ բոցով
մի կրակ,
Թվում եր, թե վառել են այնտեղ մի հսկա տո-
նական խարույկ։ —

Վոլորուն մի ուղի յեր տանում բացատով դեպ
բլուրն այդ թեք,
Բայլեցինք ուղիով այդ վոլոր, — և ահա, բլուրին
չհասած,
Հանդիպեց, կտրեց մեր ուղին մի ինչ-վոր կեր-
պարանք անդեմ,
Մի, կարծես դժոխքից յելած, անսահման դժնի
արարած։

Դա մա՞րդ եր, ուրո՞ւ, թե մի դե՞վ, — դժվար եր
վորոշել իսկույն։ —
Նման եր հսկա մորեխի, շարժվում եր թռիչքով
թեթև.
Մնում եր մի պահ իր տեղում — և հանկարծ
թռիչք եր անում,
Կարճ, հապու, ինչպես դաշտերում մորեխն է
թռչում տեղից-տեղ։

Այդպիսի թռիչքով հապու ծառացավ յերբ նա մեր
առաջ —

Սկզբում տեսանք մենք միայն վոսկորի և մսի
մի կույտ.
Կարծես մեկը առել եր մի խուրձ վոսկորներ և
խառնել եր իրար,
Իսկ հետո — իրարու կպել, խառնելով աղդրեր
ու գլուխ։

Յերբ մի քիչ յերկար նայեցինք վոսկորի ու մսի
այդ կույտին —
Տեսանք, վոր կմախք է դա մի՝ գլխի տեղ — յեր-
կաթյա մեքենա,
Ձեռքերը տեղերից պոկած, գլուխը հագցրած վո-
տին,
Իսկ սրտի փոխարեն — կրծքում պողպատյա գըն-
դանակ դրած։

Ներքևից, ձախ վոտի մոտից, գլուխը նայում եր
վերև՝
Աչքերից շանթեր թափելով, ատամները քսելով
իրար.
Աջ վոտի մատներով մի պահ նա դունատ ճակա-
տը քերեց —
Յեվ այսպես նա խոսեց՝ ներքևից ցասումով նա-
յելով մեր վրա.

«— Ո՞վ դուք, վոր մտել եք ահա այս մռայլ
անտառը Ահի, —
«Նայեցե՛ք հատյալ կմախքիս և գլխիս՝ պոկված
իր տեղից. —

«Աշխարհում վորոճում եյի յես խոհեր կավի ու մահի,
«Յեվ գլխի փոխարեն ունեյի մեքենա՝ շինված թիթեղից։—

«Յես սրտի փոխարեն ունեյի իմ կրծքում պողպատ զսպանակ,
«Անծանոթ եր կյանքում ինձ համար ամենայն վարանում ու ահ.
«Մեր յերկրի արի այրերից կազմեցի յես մեծ մի բանակ,
«Յեվ մեր սև դրոշի վրա գրեցի «Հայրենիք կամ Մահ»։

«Գնացին նոքա, այդ արի զինվորները, Յերկիրն Ավետյաց,
«Տիրում եր այնտեղ բռնություն, և՛ վոճիր, և՛ կյանք անազատ.
«Գնացին նոքա՝ սրբելու մեր դեմքից նախատինք ու լաց,
«Բայց յերկիրն արյամբ վողողեց տագնապած Արքան այն դաժան։

«Հանելով բարբարոս հորդաներ — նա քանդեց մեր շեները բոլոր,
«Մեր մանկանց արյամբ արբեցավ՝ թաղնըված վորջում արքունի, —
«Յեվ ահա, վրեժով լցված, դժոխքի հանճարին դիմելով,

«Ուխտեցի ըմպել մի բաժակ բռնակալ Արքայի արյունից։

«Յես գլուխս դարձրի այնժամ դժոխքի մի գոռ մեքենա,
«Բայց, դժբախտ փորձի ժամանակ, Արքայից հեռու նա պայթեց, —
«Յեվ խփեց — խորտակեց նա ինձ... Իսկ Արքան կենդանի մնաց,
«Յեվ, իբրև դևի ոլխուր, նախճիրներ նյութեց ու ջարդեր...

«Յեվ մնաց նա կենդանի... Կենդանի՜ նա մնաց... Վա՜յ ինձ...
«Աշխարհից հեռացա յես այսպես՝ իմ ուխտը թողած անկատար...
«Յեվ վո՛չ մի կաթիլ չխմած արյունից այն Հրեշ-Արքայի՝
«Յես կյանքից ընդմիշտ հեռացա... Յեվ չունեմ հանգիստ ու դադար...»

Ասաց — կափկափեց կրկին ատամները թափով մի ահեղ,
Աչքերից շանթեր արձակեց, — և հանկարծ թռչելով տեղից,
Սկըսեց թպրտալ օդում, թռչկոտել, ճչալ ու վայել,
Լցնելով բացատն աղմուկով վոսկորի և շաչող թիթեղի։ —

Թռչկոտում էր նա խելահեղ, կատաղի դառնությամբ վազում,
Դառնում էր օդում, ինչպես հոլ, և ճիչեր արձակում ցավի. —
Մենք դիտում էյինք քարացած, սարսափած աչքերով նայում,
Յերբ հանկարծ մոտեցան նրան յերկու այր՝ դեմքերով կավիճ։

Բուսնելով կարծես խավարից՝ մոտեցան նրան յերկու այր,
Յերկու մարդ սևազգեստ, մռայլ, կրծքերին պըղընձյա նշան.
Կմախքներ էյին՝ զգեցած զգեստներ մթին ու մռայլ,
Ձեռքերին վոսկորներ բռնած, ինչպես դու մարտի դրոշակ։

Յելնելով կարծես խավարից՝ մոտեցան նրանք այն հոլին,
Վոր ցատկում ու դառնում էր օդում և ճիչեր արձակում ահեղ, —
Յեվ մեկը նրանցից, վոր ուներ հայացքներ՝ մռայլ փայլով լի —
Սկըսեց ձեռքերով օդում, նրա շուրջը շարժումներ անել։

Հիպնոսող բժիշկն է ինչպես ներազդող շարժումներ անում՝

Հիվանդի առջև շարժելով պսպղուն մի գունդ, կամ բյուրեղ —
Նա շարժում էր այդպես մի վոսկոր, կրկնելով անհայտ մի անուն,
Հոնքերի տակից ցայտելով կրակներ կարմիր ու հուրեր։

«Հրդահյո՜ւն, Հրդահյո՜ւն, Հրդահյո՜ւն» — ձայնում էր կանչով շառաչուն,
Ձեռները կարոտով օդում հոլաձև մարդուն տարածած,
«Խա՜ն-Բա՜ն-ո՜տ, Խա՜ն-Բա՜ն-ո՜տ, Բա՜ն-ո՜տ» — ձայնակցում էր նրա հառաչին
Ուղեկիցը նրա՝ ամեհի եքստազում ինչպես վերացած։

Այդ մռայլ կանչերի ներքո հոլաձև մարդը քիչ-քիչ
Սկըսեց թուլանալ, հանդարտել, — և ահա ընկավ ուժասպառ.
Ցնցվում էր մի քանի վայրկյան իր գլուխը միայն ահագին,
Բայց նա յել հանդարտվեց ահա... Յեվ տիրեց լռություն անբառ։ —

Մենք նայում էյինք քարացած պատկերին այդ մութ ու հոռի,
Յեվ ուզում էյինք հեռանալ, ընթանալ բացառով կրկին,

Յերբ հնչեց բլուրի գլխից հուինդը ռազմի շեփորի,
Յեվ լսվեց աղմուկ, վոտնաձայն — ներքևից, ան-
տառի խորքից։

Լսելով ձայնը շեփորի — վեր թռավ տեղից հոլաձև
Այն կմախքը, կամ մարդը կրկին՝ ճակատին ար-
նաթոր վերքեր, —
Մի քանի վայրկյան քարացած, ականջը շեփո-
րին, նա լսեց, —
Յեվ քամու նման սրընթաց — յերեքով սլացան
ներքև։

Շուինդը ռազմի շեփորի թնդում ու կանչում եր
մինչդեռ,
Ձայնում եր բլուրի գլխից, ինչպես կոչ, յերթի
աղաղակ, —
Յեվ լսվում եյին ներքևից, անտառից — ճիչեր ու
կանչեր,
Հավաքվում եր կարծես անտառում և յերթի յեր
յելնում մի բանակ։

Վերևից, բլուրի գլխից հնչում եր շեփորը, կան-
չում,
Տագնապով, ինչպես ահազանգ, — և ձայնին նրա
զուգահեռ՝
Լսվում եր հառաչ, վոտնաձայն, մի ղանգ եր հե-
ռուն ղողանջում,
Յեվ վառվում եյին անտառում բազմաթիվ կրակ-
ներ ու ջահեր…

Դ

Մենք լսում եյինք, քարացած, շեփորի ձայնը դժնի,
Վոր վերից, բլուրի գագաթից, հնչում եր ամեհի
թափով, —
Յերբ ահա ներքևից, անտառից, վողողված ցոլ-
քերով լուսնի,
Սկըսեց յելնել ու հոսել դեպի մեզ — հսկա մի
թափոր։

Շարժվում եր թափորը՝ լուսնի սպիտակ լույսով
վողողված,
Ահագին, ինչպես մարդկային վիթխարի մի գետ,
կամ հեղեղ․
Ձիերի խրխինջ, բառաչյուն, մարդկային հեկե-
կանք ու լաց,
Զենքերի շաչյուն, թմբուկներ, կրակներ կարմիր
ու դեղին, —

Այս ամենը խառնըված իրար, գալիս եր դանդաղ
դեպի մեզ,
Կամ դեպի բլուրն եր գնում՝ անսալով շեփորի
ձայնին։ —
Քաշվեցինք զգուշ մենք մի կողմ, վոր հորձանքը
մեզ չճզմե,
Կամ չնչին տաշեղի նման մեզ հանկարծ իր հետ
չտանի։

Մոտենում եր թափորը դանդաղ, հոսում եր հան-
դարտ ու ահեղ,

Հեղեղի նման հորդանում՝ բերելով աղմուկ ու հառաչ,
Ցնծության ճիչեր խելագար, զառանցանք ու վիշտ խելահեղ,
Վոսկորի ու մսի մխրճանք, յերկաթի շռինդ ու շառաչ։

Մոտեցավ թափորն ահա մեզ և դանդաղ սկսեց անցնել
Մեր չոր աչքերի առաջով, յերազի նման մի դժնի։ —
Մենք նայում եյինք քարացած, սարսափով անհույն ու անծիր,
Վողողված սպիտակ լույսով այն ահից դալկացած լուսնի։

Գալիս եր ամենից առաջ վիթխարի հասակով մի մարդ՝
Չոր, բարակ, հսկա ճակատով, բեխերը սափրած, բայց կլոր
Մորուքով, ինչպես քահանա, հայացքով խոնարհ ու հանդարտ,
Իր գունատ, մահատիպ շրթերով մի ինչ-վոր աղոթք յերգելով։

Մազերին յեղյամ եր ցանել մառախուղը կարծես Հյուսիսի,
Վոր շողում եր ալեզարդ գլխին, ինչպես սառը, ոտար լույսի փայլ․

Նա տխուր շարական եր յերգում աստծո վորդի Հիսուսին,
Բայց բառերը խառնում եր իրար՝ հորդելով անհարթ մի բարբառ։

Իր բարակ, վոսկրոտ մատներով նա բռնել եր մի գանձարան․
Աջհամբույր են փոքրիկ ժամերում հավաքում նման ամանով․
Թիթեղյա յեր փոքրիկ գանձարանը, — և ձեռքով գրված եր վրան՝
«Ք ա ղ ա ք ա կ ա ն ա ն ո թ։»

Սկիհի նման սրբազան գանձարանն այդ բարձր պահած՝
Յերբ անցավ առաջով նա մեր — մենք տեսանք զարմանքով անծիր,
Վոր ճախրում ե անոթի վրա, աղավնու կերպարանք առած,
Սուրբ հոգու նման — մի փոքրիկ յերկգլխանի արծիվ։

Այդ անոթը բարձր պահած՝ նա անցավ քայլերով դանդաղ,
Անմռունչ, ինչպես քահանա, վոր գանձ ե հավաքում ժամում, —
Յեվ դեմքը նրա սպիտակ և սկիհը նրա այդ — անդարձ
Դրոշմված մնաց իմ հոգում — այնքան եր պատկերն այդ անհուն։

Գալիս էր այդ անտառի չեղերքին մեր տեսած
այն ծերուկ
Վարդապետը, կամ քերթողն այն հզօր՝ մորուքով
մերկությունը ծածկած.—
Նստած էր կմախքի վրա նա մի մերկ, չերերուն
ձիու,
Վոր քայլում էր ճօճվելով, ինչպես ձիերն են
քայլում ծերացած։

Իր ձիու կմախքե վզին արծաթյա տավիղն էր
դրած՝
Խփում էր մատներով նա չոր ու յերգում ռազ-
մական մի յերգ,
Յեվ նրա յետևից մի քանի յերգիչներ, հրելով
իրար,
Արշավում եյին՝ նրա պես նստոտած կմախքե
ձիեր։

Բայց նրանք տավիղի փոխարեն վոսկորներ ու-
նեյին ձեռներին,
Վոր թափով խփելով իրար՝ աղմկում եյին կա-
տաղի.—
Նրանցից մեկն էր միայն, վոր ուներ իսկական
սրինգ,
Յեվ սրինգը ձայներ էր հանում չափազանց
տխուր ու աղի։—

Պատանի յէր դա մի դալկահար, արցունքով լե-
ցուն աչքերով,

Յեվ ձայնը նրա սրինգի նման էր վողբի ու լացի.
Նվագում էր իր խեղճ սրինգով նա տաղեր վշտի
ու սիրո,
Խառնելով այլոց աղմուկին իր ձայնը՝ մի քիչ
կանացի։—

Այս գունատ պատանու կողքին արշավում էր այլ
մի քերթող,
Նրանից ավելի տարեց, փառահեղ ճակատով և
ճաղատ.
Նա տավիղ ուներ արծաթե և շեփոր պղնձե—
ու հերթով
Նվագում էր կամ սիրո տաղեր, կամ հնչում
ռազմի աղաղակ։

Յեվ այսպես՝ խառնելով իրար ռազմաշունչ, ամ-
պագոռ տաղեր
Յեվ սիրո տխուր նվագներ — անցնում էր խում-
բը նոցա, —
Յեվ հնչում էր նվագն այդ խմբի — թաղումի
նման դառնաղետ,
Լցնելով սրտերը հավետ — դառնություն անկոբար
ու ցավ։

Յերգեցիկ այդ խմբից հետո գալիս էր մի սև
գլխակառք,
Վոր քաշում եյին մարդակերպ, չորեքթաթ դևեր,
կամ ձիեր.
Դրված էր այդ կառքի վրա վոսկեզօծ, շքեղ մի
դագաղ,

Յեվ նստած եր դագաղի վրա մի գաճաճ՝ դեմքով դեպի յետ։

Նախ այնպես մեզ թվաց, թե նա, դագաղի մարդն այդ գաճաճ
Կրում ե իր մարմնի վրա՝ վիթխարի գլուխներ յերկու,
Բայց կառքը յերբ քիչ մոտեցավ և կանգնեց մի պահ մեր առաջ —
Մենք տեսանք դագաղի վրա — վիթխարի մի գլուխ և մի կուզ։

Այդ կուզն եր, վոր յետ եր նայում, իսկ գլուխը նայում եր առաջ,
Կոնաձև բլուրը դեպի, դեպի լույսը նրա դալաթի։ —
Իր խրոխտ, արծվային քթին ակնոցներ ուներ նա դրած
Յեվ խորունկ կնճիռներ ուներ սպիտակ ու նեղ ճակատին։ —

Նա վոչ թե նստած եր վոսկյա դագաղի վրա, այլ մի մեծ
Զղջիկի, կամ բուի նման՝ թառել եր կարծես չորեքթաթ։ —
Նա կառքի անհարթ շարժումից կշռվում եր մերթ առաջ, մերթ յետ,
Յեվ մերթ կուզն եր բարձրանում վերև, մերթ գլուխը՝ մի փոքր հերթափ։

Բայց այդպես չորեքթաթ կռացած՝ ձեռքերով նա իր ահագին
Պահել եր վիթխարի մի թերթ, կամ դրոշ՝ շինված թիթեղից.
Թիթեղե դրոշի վրա նկարված եր մի արջ թագակիր,
Վոր թաթի յերկաթյա խաչով կոտրում եր մահիկ մի դեղին։

Անախորժ ճռինչ հանելով ընթանում եր կառքը դանդաղ,
Յերգեցիկ խմբի յետևից, անսալով ձայնին շեփորի, —
Իսկ կառքի յերկու կողքերից, քայլելով ծանր ու հանդարտ,
Ընթանում եյին անտառում մեր տեսած այրերը նորից։ —

Առաջինը՝ անտառում վառած խարույկի պահապանն եր այն հեք,
Վոր ձեռքին, դրոշի փոխարեն, կրում եր վիթխարի մի փուքս.
Փչելով փուքսն իր հսկա՝ նա փորձում եր կրակներ հանել,
Բայց հանում եր ձայներ խռպոտ, տխրագին տնքոց ու հոգոց։

Իսկ մյուսը — նրա ոգնական ռազմաշունչ այն գուսանն եր, վոր

Շանթեր էր աչքերից թափում, բարկության հուրեր ու կայծեր. —
Իր ձեռքին բռնած նա ուներ պղնձյա ահագին մի շեփոր,
Բայց շեփորը չէր շեփորում, այլ տխուր կաղկանձում էր կարծես։

Գնում էր նրանց յետևից կիսամերկ այրերի մի խումբ.
Կմախքներ էին՝ զգեցած զանազան լաթեր ու շորեր.
Մեկը խաչ էր իր կրծքին կրում, մի ուրիշը՝ դեղնած ծաղկեփունջ,
Վոր նավթի բուրմունք էր հանում՝ չափազանց սուր ու զորեղ։

Մի կմախք տանում էր մեջքին մազութի յերկաթյա աման,
Մի ուրիշը՝ հսկա մի հաշվիչ, վոր նման էր փայտյա քնարի.
Մի կմախք, շալակին դրած, մի դույլ էր տանում իր համար,
Մի ուրիշը պահել էր գլխին վոսկեզօծ նժար վիթխարի։

Հազիվ էր այս խումբը անցել, յերբ ահա յերևաց ջահակիր,
Սևաքեմ այրերի մի խումբ, վոր գալիս էր՝ յերգելով շարական.

Քայլում էր այդ խմբի մեջտեղում, կապտավուն ծիրանի հագին,
Մի փարթամ մորուքով վարդապետ, մի նժդեհ, մոտ վաթսուն տարեկան։

Նա կրծքին կրում էր մի աստղ, վոր ցոլում էր ինչպես ադամանդ,
Մի խաչ էր շողշողում փորին, վոր ցոլքեր էր ցրում բյուրեղե. —
Իր հուժկու ձեռքերով, իբրև դարերից մնացած ավանդ,
Բռնել էր պարթև ծերունին և տանում էր թղթե մի շերեփ։

Թափորի առջևից տարվող այն փոքրիկ սկիհի նման
Այս շերեփը և՛ս ուներ հովանի մի վոգի անլույծ. —
Արծաթյա արծվի փոխարեն այս թղթե շերեփի վրա
Նստել էր, իբրև հովանի, պղնձյա բաշով մի առյուծ։

Յերգելով տխուր շարական, սևասև զգեստներ հագած,
Քայլում էր շքախումբը նրա՝ կրելով ջահեր մահատիպ,
Յեվ թղթե շերեփը ձեռքին ընթանում էր նա համրաքայլ,

Անընդհատ, ձայնով անայլայլ, կրկնելով մոգական մի թիվ։ — 61

Մինչ անցնում էր թափորն այս այսպես — յետևվից հորդում էր արդեն
Անընդհատ աճող, ծավալվող, լեռնացող մի ծով, կամ հեղեղ.
Աճում էր աղմուկն ավելի, խտանում ու դառնում էր տարբեր,
Մոտենում էր խորշակ մի կարծես՝ խառնելով ազգեր ու ցեղեր։

Դղըրդի նման հեռավոր մոտենում էր աղմուկ նախ մի խուլ,
Յերկիր էր կարծես ընթանում՝ հեղեղով առված տեղահան.
Անտառ էր կարծես ճարճատում, հրդեհված յերկիր էր մխում՝
Սփռելով բարբարոս մի բույր, հանելով ճիչեր յերկնահաս։

Ջրերի դոփյուն, զենքերի չարագույժ շառաչ, մարդկային
Հեկեկանք, ոգնության ճիչեր, շների կաղկանձ հուսահատ.—
Մոտենում էր այսպես հեռվից արշավանքը Արյան և Մահի,
Յեվ նայում էինք մենք՝ ահից կարկամած, շրնչներս պահած։

Իսկ դեմից, բլուրի գլխից, կանչում էր շեփորն անընդհատ,
Շեփորում էր մահու տագնապով՝ կոչելով նոցա հանդեսի, —
Յեվ հոսում էին դեպի նա ամբոխները այդ տեղահան՝
Դեպի լյառն էին շտապում՝ Մահու ու Արյան մի ծեսի...

Ե

Հռինդով, լացով, աղմուկով, թնդալով մոտենում էր մեզ
Գլխավոր ողակն այդ ահեղ, հեղեղի նման թափորի.
Ջահակիր թափորից հետո, այրերից հետո սևազգեստ —
Զրահակիր բանակ էր դա մեծ, վոր կռվի յեր արշավում նորից։

Վիթխարի մի նժույգ նստած՝ ընթանում էր յերթի առաջից
Հոլաձև մարդն այն ահեղ՝ ծածանած մի սև դրոշակ.
Խրխնջում էր նժույգը նրա, բայց նման էր հիվանդ բառաչի
Խրխնջոցը նրա նժույգի, վոր քայլում էր դանդաղ և ուժատ։

Գլուխը՝ հագցրած վոտին՝ նայում էր շանթող աչքերով
Նժույգի վոտների մոտից, ճոճվելով մերթ յետ, մերթ առաջ.
Վառվում էր լապտերի նման, կապտավուն, ժլատ մի հրով
Շլինքին դրված մեքենան, հանելով տնքոց ու հառաչ։

Իսկ նրա յետևից, իր նման նժույգներ նստած և ձիեր,
Արշավում էր նրա շքախումբը՝ կազմելով ստվար մի բանակ.
Ձիերի վրա նստոտած կմախքներ եյին ու դիեր՝
Ձեռներին սուսեր, զրահներ, հնամյա զենքեր ու դանակ։

Ընթանում էր մեկը՝ կմախքե նժույգի վրա ընկըղմած,
Անգլուխ, մի վոտը կտրած, ձեռքերը կապած կռնակին,
Բայց կապած ձեռքերի արանքում մի դաշույն ուներ նա պահած,
Յեվ փորձում էր նա դաշույնով խողխողել նժույգն իր տակի։

Հետևյալը… նիհար նժույգի վոսկորե նստուկին նստած
Խեղդամահ էր՝ լեղակի պես կապույտ իր լեզուն բերանից կախած.

Իր մռայլ պետի յետևից արշավում էր քայլքով նա վստահ,
Գնում էր կարծես անվեհեր՝ յելնելու կրկին կախաղան։ —

Մյուսի խրանն էր միայն յերևում, լոկ այդ, և մեկ էլ —
Մեջտեղից կտրած մի սրունք, էլ վոչինչ. արշավում էր այդպես.
Իսկ ո՞վ էր արդյոք այն մեկի վողնաշարը մեջտեղից թեքել —
Յեվ դարձել էր նա հարցական նշանի նման մի պատկեր…

Ձիերից շատերի վրա, մարդկային թեկուզ հաշմանդամ
Կմախքի, կամ մարմնի փոխարեն — պարզապես բազմել եյին սեգ
Զրահներ, կամ սրեր ժանգոտած, մի դաշույն, կամ փամփուշտ անգամ,
Մի ամբողջ նժույգի վրա — մի փամփուշտ, կամ հին հրազեն…

Այդ նժույգ նստած հաշմանդամ այրերից շատերը սակայն
Ձիերի զավակին կապած, իբրև բեռ վսեմ, կամ պարծանք —
Ավարներ եյին տանում — այն փառավոր մարտերում հավաքած՝

Մխրճած դանգեր, սրունքներ՝ սրբելուց պսպղուն դարձած։ —

Այս լեզուն կորած, կուրացած, խեղդամահ ասպետը ահա
Շարել է նժույգի սանձին — մխրճած մատների մասեր.
Մի ուրիշը կրում էր ձեռքին կոնքերից շինած մի վահան,
Մի ասպետ փաթաթել էր մեջքին մի տրցակ կանացի մազեր։

Անցնում են, անցնում են անվերջ, գնում են շարքերով անծիր,
Կմախքե նժույգներ նստած, զրահներ հագած մահաշունչ.
Հնձվորներ են կարծես, որ դանդաղ դառնում են Յեղեռնի հնձից,
Մանգաղի ու բահի փոխարեն հրազեն առած ու դաշույն։

Բայց ահա այդ կույր, հոշոտված, հաշմանդամ շքերթի միջում
Արշավում է՝ նստած տախտակե ձողերից շինած մի նժույգ —
Սևահեր, թխադեմ մի այր, որ կրակ ու բոց է շնչում,
Մի ձեռքին քնար վոսկելար, մյուսին՝ հրազեն մի զույգ։

Մի փոքրիկ մորուք նա ուներ, գալարուն, սևասև մազեր,
Ծածկել էր թավիշե գլխարկ, և ուներ փողկապ փառահեղ,
Բայց նստուկը մերկ էր նրա, հանել էր զգեստներն ասես,
Վոր տեսքը լինի յերևի սրբազան իր դերին վայել։ —

Իր խրոխտ դեմքին հակառակ, հակառակ առնական տեսքին՝
Յերգում էր կերկերուն ձայնով նա քաղցրիկ, լորձունքոտ յերգեր. —
Մենք լսում էինք զարմացած, նայելով առնական կրծքին,
Յերբ տեսանք, վոր նստուկը նրա բարձրանում ու իջնում է ներքև։

Փողային գործիք նվագող վարպետի այտերի նման
Ուռչում էր նստուկը նրա և իջնում, կրկին ու կրկին, —
Տեսնելով հրաշքն այս ցնցող — ահ, մենք նոր հասկացանք նրա
Ինքնազոհ ժպիտը — և խուլ, կաղկանձող թախիծը յերգի...

«— Հրդահյուն, Հրդահյուն, Հրդահյուն» — յերգում էր նստուկով նա իր,

Խառնելով կանչին այդ — մահու հառաչանք, ա-
    տամի կրճտոց, —
Անտառից բարձրանում էր այնինչ աղաղակ ամե-
    հի ու խոր,
Յեվ յերկինք էր հասնում այնտեղից տագնապով
    բարձրացող մի բոց։

Անտառից, խարույկի պես մեծ, շառայլ էր նե-
    տում դեպի վեր
Կարմրավուն, արնագույն մի բոց՝ այրելով հոն-
    քերը լուսնի,
Յեվ լսվում էին այնտեղից սուլոցներ, ոգնու-
    թյան ճիչեր,
Ծառերի ճարճատյուն, հեկեկանք, քրքինջներ
    վայրի ու գժնի։

Յեվ վորքան գնում — ավելի ահեղ էր դառնում
    անտառից
Բարձրացող աղմուկն ահավոր, հեկեկանքը՝ աստ-
    ղերին հասնող.
Ցերեկի պես լույս էր արդեն անտառից բարձրա-
    ցող հրից,
Իսկ Թափորը ձգվում էր ելի, վողողված շառայ-
    լով այդ նոր։

Թափորի մի ծայրը արդեն հասել էր բլրի գա-
    գաթին,
Վորտեղից հնչում էր, կանչում այն շեփորը —
    անվերջ, անընդհատ, —

Յեվ անցնում էին մեր դեմից, դեռ անցնում
    էին մահատիպ,
Գոռնելի սապետներ ու այրեր, կազմելով խուլ
    մի ընթացք։

Մենք վաղուց արդեն, նայելով Թափորի ընթաց-
    քին այդ հորդ,
Եվ չէինք ջոկում իրարից այրերին շարեշար
    անցնող. —
Դժվար էր արդեն տարբերել նորերին՝ դեմքերից
    նախորդ,
Ընդհանուր մի գետ էր անցնում մեր դեմից ար-
    դեն, կամ մի ծով։

Դժվար էր արդեն տարբերել նրանցից մեկին
    մյուսից,
Զրահներն էին շատացել Թերևս, կամ ձիերն
    էին ծեր.
Միևնույն կերպարանքն էր արդեն բոլորինը,
    բոլորի ուսից
Կախված էր զենքը միևնույն, — և արդեն չկային
    անձեր։

Բայց հանկարծ ամբոխի մեջ այդ, հորձանքում
    այդ բութ ու անդեմ,
Բարբարոս Թափորում այդ մթին, վոր նման էր
    արդեն կոշմարի —
Մենք տեսանք կերպարանք յերկու, — և պատեց
    մեզ վիշտ մի անդեղ,

Ցեվ կարծես վերացանք մենք մի պահ այդ արյան ու տենդի աշխարհից։

Գնում էր Թափորի միջից մի արձան կարծես մարմարե.
Հասակը բարձր. քարե աչքերում Թախիծ ու կոծ.
Իր քարե շրթերով նա անկապ մի յերգ էր փորձում բարբառել,
Յերեւում էր, վոր Մահն էր տեսել և Սարսափը նա իր աչքերով։ —

Յեղկելի չեր վորքան նստուկով նվագող քերթողն այն — այնքան
Հարգանք էր ներշնչնում սրա կերպարանքը ամբողջ նայողին.
Իր կյանքում տեսած սարսափից նա դարձել էր արդեն խելագար,
Յեվ ահից հանկարծ քարացել՝ կորցրած թե հույս, թե ուղի։

Նա վոչ թե ինքն էր քայլում, այլ յերթի ընթացքով տարված՝
Շարժվում էր, ինչպես մեքենա, յենթակա հորձանքի ուժին.
Յերբեմն ցնցում էր նրան անհաղորդ, ներքին մի հարված —
Նա կանգնում էր մի պահ քարացած և նայում՝ լուսնոտի պես ուշիմ։

Յեվ քայլում էր կրկին մարմարյա արձանի պես ուղիղ ու անթեք,
Նայելով ուղիղ իր առջև՝ կույրերն են ինչպես միշտ նայում.
Ձեռքերը խավարին մեկնած՝ անսահման Յեղեռնի հանդեպ
Շշնջում էր սարսափի բառեր և կրկնում մեռած մի անուն…

Նա հող էր հայցում՝ խավարին կարկառած ձեռքով իր քարե,
Յեվ լույս էր հայցում խավարից՝ իբրև դեղ աչքերին իր կույր, —
Յեվ մահու պես գունատ շրթերով շշնջում էր բառեր մարմարե,
Յերազում էր խոնջենք ու արև և սիրո աղբյուրներ մաքուր։

Բայց վսեմ այդ խոհից հանկարծ դառնալով ուրիշ մի խոհի՝
Նա թակում էր գլուխն իր Թափով, սկըսում էր մարմինը ցնցել —
Յեվ մաքուր, անբիծ շրթերից Թորում էր լորձունք ամեհի,
Յեվ դեմքի վրա այդ պահին նկարվում էին այլ բծեր…

Գնում էր նրա հետ մեկտեղ, համրաքայլ, քերթող մի ուրիշ.

Շինված էր կարծես նա մոմից, և դեմքը, վորպես մագաղաթ.
Նրա ձայնը ցնդում էր կարծես ժայռերում փորած ջրհորից՝
Յեվ մաքուր, և՛ ջինջ էր այնքան, ինչպես ցողը՝ դաշտերում շաղած։ —

Բայց մոմե այդ գունատ գուսանի թղթի պես ճերմակ շրթերից
Հորդում էր յերգը հանկարծ — ամպրոպի, վորոտի պես թափով…
Յեվ ո՞վ էր տվել այդքան ույժ, այդքան թափ ու շնորհք վերին
Այդ մոմե դեմքով գուսանին — և նետել նման մի թափոր…

Նա և՛ս, սարսափից քարացած այն քարե գուսանի նման,
Քայլում էր՝ հորձանքով տարված՝ իր ավագ ընկերոջ կողքին,
Յեվ դեմքը նրա մոմեղեն, սփրթնած, գունատ, ինչպես մահ,
Մերթ ընդ մերթ բոցվում էր, կարծես մի ուրիշ արևի շողքից։

Արծաթե ափսեյի վրա նա տանում էր բոցավառ մի սիրտ,
Վոր բոսոր ցոլքեր էր ցանում խավարում այն սիրտ կեղեքող,

Յեվ զուլալ, արծաթյա ձայնով յերգում էր արևի մասին,
Իր գյուղի՛ արևի մասին, վոր մորթել էյին ցերեկով…

Յերգում էր հերկերի մասին, դաշտերի մասին ու հողի,
Քրտինքն էր յերգում գեղջուկի և նրա վաստակը արդար, —
Բայց փոխվում էր յերգը հանկարծ և դառնում աղաղակ վոխի,
Յեվ մոմե շրթերով քրթողի — սկսում էր նա նզովք կարդալ։

Պահերին այդ դեմքը նրա դառնում էր դաժնի, արյունաուշտ,
Խռպոտի չէր փոխվում ու ճիչի նրա ձայնը պայծառ ու մաքուր, —
Սևանում էր սիրտը մի պահ, դառնալով անհուր ու անույժ,
Յեվ քարե ընկերոջ նման՝ քայլում էր նա յել՝ ինչպես կույր։ —

— Ո՜վ տխուր ու խեղճ գուսաններ, նոխազներ, կյանքի բարբարոս, —
Բարբառեց Վարպետը հանկարծ՝ դառնալով նոցա ստվերին.
— Դուք կոչված էյիք լինելու Լույսի ու Խնդության փարոս,

Բայց սրտերը ձեր բոցավառ — այն Սալին վողջակեզ բերեք։»

Յեվ նա ցույց տվեց հեռվում, բլուրի գագաթին վառվող
Այն կրակը դժնի ու դեղին, վոր վառվում էր անհուն տագնապով, —
Յեվ ապա, դառնալով կրկին բարբարոս հորձանքով տարվող
Այրերին այն՝ ասաց իր սրտի բովանդակ տխրությամբ ու թափով.

— Դուք կարող եք Բերկրության և Մտքի լուսե պարտեզում
Ճաշակել Հոգու խնդությունն՝ անվերջ խոհով ու բանիվ, —
Յեվ յերթում այս մութ ու դաժան կա՞ արդյոք ավելի՞ մեծ զոհ,
Քան հանճարը ձեր բոցավառ՝ մատուցած այս պիղծ սեղանին...»

Յեվ լռեց Վարպետը մռայլ, առաջին և վերջին անգամ
Մեր ամբողջ յերթի ընթացքում շրթունքները իր բանալով, —
Մինչ մռայլ Թափորին ձուլված, վոտքերով բոպիկ, արնաքամ
Հեռացան գուսաններն այն վսեմ՝ խելագար խնդալով ու լալով...

Զ

Կանչում էր այնինչ վերևից, բլուրի գագաթից, դժնի
Այն շեփորը ձայնով չարագույժ, — և գնում էր Թափորը վերև,
Անցնում էր անվերջ՝ վողողված արնագույն ցոլքերով լուսնի,
Յեվ գնում եյին արդեն մերկ մանուկներ, կանայք և ծերեր։

Անցել էր արդեն Թափորի գլխավոր հոսանքը ամբողջ,
Թափորի մի ծայրը վաղուց հասել էր բլրի գագաթին,
Վորտեղից յերկինք էր հասնում արդեն ալ, արնագույն մի բոց, —
Իսկ Թափորը դեռ չեր վերջանում, դեռ գալիս էր — անվերջ ու անթիվ։

Ներքևում անտառը արդեն ճարճատում էր հրով ընդհանուր,
Յերկինք էր բարձրանում այնտեղից արդեն նոր մի, ընդհանուր հրդեհ,
Յեվ ռումբեր եյին շառաչում, և թնդում էր բյուր թնդանոթ,
Յեվ կրակը շենքեր էր ամբողջ սկսել յերկինք շպրտել։

Դըղրդում եր հողը արդեն ռումբերի շաչող վորոտից,
Բովանդակ աշխարհն եր արդեն սասանել մոլուցքից արյան, —
Լցվել եր տենդերքն ամբողջ արդեն տոթ բույրով վառոդի,
Ել չկար հեռու ու մոտիկ, — բայց Թափորը չերգում եր «Հ ա ր յ ա վ ։»

Կատարյալ բանակներ եյին արշավում մեր դեմից արդեն,
Շտապում եյին տագնապով կոնաձև բլուրն հասնելու, —
Յեվ ահա վաղվող անտառից սկսեց նոր մի գետ հորդել,
Յեվ հոսել, հոսել անընդհատ, նախիրի նման անգլուխ…

Յերբ ռազմի շաչով-շառաչով, ցնցելով հնչուն ծնծղաններ,
Թմբուկներ խփելով տոնական, յերգելով յերգեր ռազմաճիչ,
Դոփելով՝ բանակներն անցան, — սկսվեց տրտունջ մի անել,
Հուսահատ հեկեկանք ու լաց, խելագար հառաչք ու քրքիջ։

Մեր դեմից անցնում եյին արդ մանուկներ մեռյալ և ծերեր,

Հաշմանդամ սերունդներ ամբողջ՝ Յեղեռնի հնձանին ընծա…
Նախիրներ եյին անցնում հոծ, սարսափած կույրերի պես յերեր,
Յեվ ցանքսեր, արտեր վոսկեզոծ՝ դեռ վոչ մի ձեռքով չհնձած…

Յեվ անցնում եյին զորքերից վոտնակոխ արված պարտեզներ,
Հրդեհից մոխրացած հյուղեր, քաղաքներ մեռյալ և շեներ, —
Յեվ գետեր՝ տապից չորացած, ցորյանի հրդեհված դեզեր,
Յեվ գայլեր՝ մարդուց գազազած, և մկներ զառամ, և շներ…

Սրածված սերունդնե՛ր եյին արդ անցնում, քաղաքներ քանդված,
Հեղեղի պես պղծած, տեղահան, գնում եր յերկի՛ր մի ամբողջ, —
Անցնում եր արմատից պոկած, անխնա կտրած մի անտառ, —
Սարսափած նախիրի նման՝ սպանդից փախած մի ամբոխ…

Ամեհի լացով, աղմուկով, վոռնոցով անհույս ու մռայլ
Շարժվում եր ամբոխը դեպի այն բլուրը կարմիր, կոնաձև. —

Վերջանում էր յերթը արդէն, յերբ մենք էլ, ձուլվելով նրանց,
Քայլեցինք, կամ կարծես թռանք՝ շյուղերի նման հողմածեծ։

Դիվական մի ձեռք էր կարծես թռցնում, քշում մեզ առաջ,
Յեվ ահա, տարվելով այդպես, յերբ լեռան գագաթը հասանք, —
Կանգնեցինք՝ մեր դեմ ծառացած պատկերի առջև շվարած.
Զառանցանք էր պատկերն այդ կարծես, վոր մեր դեմ փռված մենք տեսանք...

Բացվում էր բլուրի վրա մի անծայր, լերկ հարթավայր,
Վողողված կարմրավուն լույսով, վոր դողում էր անվերջ ու պարում.
Իր բոսոր, արնավառ գույնով ներկելով շրջակայքը խավար՝
Վառվում էր բլուրի մեջտեղում մի հսկա, յերկնահուպ խարույկ։

Կրակե ողակի նման բոցկլտում էր խարույկը կարմիր.
Բոցեղեն պարիսպ էր կարծես՝ Արքայի շուրջը քաշած։ —
Այդ նրանց արքան էր գուցե, կամ՝ սերած Հրդեհի զարմից՝

Առաջնորդը նրանց կրակե, վոր ցույցի յեր յելել մարդաշատ։

Խարույկի մեջտեղում, վոսկյա մի գահի վրա ընկղմած,
Նստած էր Արքան այդ ահեղ, վոր չուներ կերպարանք վորոշ.
Մերթ թվում էր, թե դա — կրակե մի մարդ է՝ բռունցքը սեղմած,
Վոր բռնել է սեղմած բռունցքում — մի փոքրիկ յեռագույն դրոշ։

Բայց հաջորդ վայրկյանին արդեն փոխվում էր տեսքը նրա,
Յեվ ահա — գահի վրա նույն — մի գայլի գլխով վարդապետ,
Սևասև վեղարը գլխին և դեղին ճակատի վրա —
Մի հսկա, շողշողուն ադամանդ, վոր թե խաչ է, թե գունդ է, թե նետ։

Փոխվում էր ապա նաև այդ կերպարանքը. հանկարծ նրա տեղ
Յերևում էր դեղին մի կատու՝ աչքերում կրակներ ահի, —
Յեվ թվում էր, թե դեմքը նա էր — վոսկեկար քողով է պատել,
Յեվ նետը դարձել է նժար, և խաչը դարձել է մահիկ։

Նստած էր վոսկյա իր գահին կրակե Արքան այդ-
ահեղ,
Տեսիլքի նման մի դժնի, կերպարանքը մթին ու
մռայլ,—
Յեվ շուրջը նրա խարույկի, բոլորած մի պար
խելահեղ,
Ցատկոտում եյին ու պարում ամբոխները այն դըլ-
վահար։

Խարույկին ամենից մոտիկ, բոլորած շրջանն ա-
ռաջին,
Թռչկոտում եյին ու պարում մեր տեսած այրերն
այն ճիվաղ,—
Հոլաձև կմախքն էր պարում, և ձայնով, նման
բառաչի,
Յերգում էր խաժագուժ մի յերգ՝ սփռելով սա-
ռապանք ու վախ։

Նրա ձեռքը բռնած, նրա հետ, պարում էր ան-
տառում հանդիպած
Խարույկի պահապանը գաճաճ և դուսանը ապա
ռազմատենչ.
Պարում էր վարդապետը պարթև՝ շերեփը շրթե-
րին հպած,
Յեվ բոլոր ասպետներն ապա՝ աչքերում մոլուցք
մի անշեջ։

Գնալով լայնանում էր, ուռչում շրջանակը այդ
շուրջպարի.—

Բռնելով հարթավայրն ամբողջ, չարագույժ բոցե-
րի ներքո,
Անեծքի տեսիլքի նման յելնելով կարծես խավա-
րից՝
Մի ամբողջ ժողովուրդ էր պարում յեղկելի ճի-
չով ու յերգով։

Մանուկներ տկլոր, անատամ աղջիկներ, ծերեր
հաշմանդամ,
Գլուխները բռնած ձեռներին, վայրենի լացով ու
ճիչով,
Թռչկոտում եյին ու պարում,— ցատկոտում էր
կարծես մի անտառ,—
Յեվ անցնում եյինք մենք դանդաղ այդ պարող
անտառի միջով...

«Հըդահյուն, Հըդահյուն, Հըդահյուն» — վոռնում
էր ամբոխը մոլի,
Կարկառած ձեռները վերև, կամ դիմացը՝ դեղին
Արքային,—
Յերբ ճիվաղը հանկարծ այն ծանոթ, վոր նման
էր մարդակերպ հողի,
Մորեխի պես ոդում ցատկելով՝ մոտեցավ Արքայի
գահին։

Մոտեցավ շարժումով հատու և կտրած գլուխն իր
նետեց
Արքայի վոտքերի առջև, իբրև տուրք, կամ զոհ
սրբազան,—

Յեվ ամբոխը խուռն ճիչերով, վոռնոցով նրան հետեվեց —
Բարձրացավ դանդերի մի բուրգ և բուրգը աստղերին հասավ...

Իսկ շուրջը վիթխարի այդ բուրգի, մշուշում, բռնած խոլապար
Թռչկոտում եյին ու պարում ավերված քաղաքներ ու շեներ, —
Յեվ յերթի յելած նրանց հետ՝ ամենի խանդով, խոլաբար՝
Թռչկոտում եյին ու պարում նախիրներ դաշտամ և շներ...

Յեվ արդեն վոսկյա իր գահից բարձրացած բլուրի վրա՝
Կանգնել եր Արքան այն դեղին՝ հրդեհի նման մորուքով, —
Յեվ փողի նման լեգենդար՝ մահազույժ շեփորը նրա
Կանչում եր, կանչում եր նրանց — դեպի նոր մի մեռյալ Յերիքով...

Է

Այդ դաժան տեսիլքին ի տես՝ քայլերով յերեր մենք փախանք,
Կորեցինք հարթավայրն ամբողջ և իջանք անտառ մի ուրիշ,
Մինչ հասնում եր դեռ բլուրից մի լացի նման աղաղակ,

Վոռնում եր կարծես մի քաղաք՝ փախչելով հրից ու սրից։

Խավար եր անտառում այդ նոր, և ծառերը, կորած խավարում,
Կմախքներ եյին կարծես սև, վոր պարզած վոսկորե ձեռներ —
Մեզ բռնել եյին կամենում, քաշքշում եյին ու հրում,
Յեվ մահվան սառնություն բուրում, ինչպես վեր յելած մեռելներ։

Հառաչում եյին նրանք խուլ ձայներով, անեծք շշնջում,
Կամ կարծես ողնություն հայցում մոտեցող սրից ու հրից, —
Դեռ հասնում եյին բլուրից սրերի շառաչ ու շաչյուն,
Դեռ շեփորը կանչում եր, կանչում այն Մահու և Արյան բլուրից։

Սարսափած փախչում եյինք մենք անտառի միջով այդ խավար,
Այդ մռայլ ծառերի միջով, վոր պարզած յերերուն ձեռներ —
Մեզ թվում եյին մի գալիք անհելի սպանդի համար
Հանրային դամբանից յելած, հարություն առած մեռելներ։

Մեր վոտքերը դիպչում եյին սուր, փշերի նման քարերի,

Ծառերի ճյուղքերը՝ կանանց մատների նման գալարուն՝
Ճանկռտում եյին, արնոտում մեր դեմքերը, — և հին դարերից
Նախամարդն եր արդեն արշավում՝ աչքերում մոլուցք ու արյուն։

Ժամանակը յետ եր թռչում արդեն խուլ աշխարհի վրայով,
Մարդակերպ Կապիկն եր արդեն արշավում հետքերից մեր նորից, —
Յեվ լուսինը, անդոր ժպիտով ծառերի արանքից նայող,
Մեզ թվում եր բարի մի աստված, վոր փրկում ե ջրից ու հրից...

Սարսափած փախչում եյինք մենք անտառի ծառերի միջով,
Յեվ ամեն ծառի յետեվից մեզ նայում եր արդեն մի հրեշ,
Մեզ արդեն ագռավն եր ծաղրում իր լացի նման քրքիջով,
Յեվ ամեն մի շրշյուն ու շշուկ մեզ գուժում եր պատիժ ու վրեժ։

Մեր հոգուց քերում եր մի ձեռք այն ամենը, վոր տարիներ,
Կամ դարեր եյինք կուտակել՝ սերունդից-սերունդ կրելով, —

Յեվ գունատ ցոլքերը լուսնի մեզ թվում եյին փերիներ,
Արյունռուշտ, չարաճճի փերիներ՝ մարդու միս ու արյուն սիրող։ —

Մենք յերկար, յերկար վազեցինք, սարսափից խելագար, անհույս,
Այդ մռայլ ու մութ անտառում կորցրած ուղի ու հավատ, —
Յերբ հանկարծ ծառերի միջից յերևաց յերկնագույն մի լույս,
Վոր աստղի նման փրկարար շողշողաց հեռվում այն խավար։

Հևիհև, արյունոտ վոտքերով, չանգռելով կուրծք ու յերես,
Վազեցինք մենք լույսը դեպի, վոր ցոլում եր ցոլքով մի մաքուր, —
Յեվ ահա, վազքից շնչասպառ, քայլերով անուժ ու յերեր,
Մոտեցանք անտառի յեզերքին — և տեսանք կերպարանք մի հուր։

Մի մարդ եր գալիս դեպի մեզ՝ վոսկեզօծ լապտերը ձեռին.
Գունատ եր. հսկա ճակատով. յերկնագույն աչքեր նա ուներ.
Լույսի պես սպիտակ դեմքին խաղում եր ժպիտ մի վերին,

Հայացքը թափանցում եր կարծես անսահման,
  անծիր հեռուներ։

Վողջունեց ժպիտով նա մեզ և ապա լապտերն
  հուրհուրան
Նա պահեց մի պահ մեր առաջ, իբրև աստղ,
  նշան լուսատու.—
Վիթխարի ճակատով այդ մարդու լապտերի ա-
  պակու վրա
Նկարված եր վոսկեթև մի աստղ և գրված եր
  պատգամ մի հասու։

Այդ լապտերը իր դեմ պահելով՝ նա հանեց մեզ
  մութ անտառից,
Մոլորվել եյինք ուր արդեն՝ կորցըրած ուղի ու
  հավատ,—
Յեվ այստեղ հրաժեշտ տվեց ինձ Վարպետը Մահ-
  վան աշխարհի,
Վոր գիտեր լոկ վիշտ ու չարիք և յերգել եր
  դժողքը խավար։

Արդ՝ անցել եյինք արդեն մենք Անցյալի մռայլ
  յեզերքից,
Լայնահուն աշխարհն եր իմ դեմ՝ վողողված հրով
  փրկարար,—
Այն վոսկյա լապտերի լույսով յես դարձա Գալի-
  քի յերգիչ,—
Այդ լապտերը, ով Առաջնորդ, կփրկե աշխարհը
  արար...

1933. V. 4.

ԶՐԱՀԱՊԱՏ «ՎԱՐԴԱՆԶՈՐԱՎԱՐ»

ԵՌԱԳԻՐԸ յեկել եր տասնևհինգ ժամ առաջ
Յերեկը, ժամը տասներկուսին։
Նա վերցըրել եր թուղթը, կարդացել եր
  արագ,
Յեվ, հազիվ նկատելի, ցնցվել եր ուսը։—
Հեռագրում գրված եր յերկու տող.
«Ալեքպոլ: Հույժ կարեվոր: Արագ:

«Ջրահապատ «Վարդան Զորավար» բող
«Անմիջապես մեկնի Յերեվան: -- Նախարար:»
Այժմ — յերեքն էր ժամի գիշերվա:
Ջրահապատի խուցում նա քայլում էր անքուն:
Պարզ է: Կանչում են Յերևան,
Վոր գլխաթափ անեն — և թագուն
Մի անկյունում... — Ո, վոչ.
Վոչ յերեխա չե ինքը, վոչ մանուկ:
Այսոր քաղաքն ամբողջ
Ցույց էր անում: —
Անհանգիստ է քաղաքը: — Զորքերը գրգռված,
Բանվորները՝ պատրաստ պայքարի.
Բավական է թերևս մի կշռված հարված,
Վորպեսզի վողջը պարի: —
Այսինքն՝ գնա գլխիվայր
Այն մեքենան մռայլ, այն մղձավանջն անդուռ,
Կամ թիարանը այն,
Վոր կոչվում է «Հայաստանի Հանրապետություն:»
Յերեկոյան յեկավ Ավիսը: Ասաց, վոր պատրաստ են:
Կարող են սկսել միանգամից, —
Հետո կմիանան Յերևանը, Ղարսը,
Մինչև — Սարիղամիշ...
Իսկ ապա, յերբ հողմը գազազի,
Յերբ բռնկվի յերկիրը հրով հերոսական —
Մեզ օգնության կգա Ղազախից
Կարմիր Բանակը ռուսական: —
Այս բոլորը այսպես: — Իսկ Դրոն,
Իսկ Սեպուհը, իսկ ժողովուրդը քաղցած,
Վոր ապրում է միայն հույսերով

Յեվ ուտում ամերիկյան հաց...
Իսկ Վրաստանը, Քեմալը... Կարող են
Պատնեշ կանգնել արդյոք այս ամենի հանդեպ,
Մինչև հեռվից հասնող հոկտեմբերյան հողմը
Գա, ովկիանի նման այս խութերը քանդե: —
Գիշերը անցնում է սակայն և պետք է վորոշել:
Պետք է պատասխանել նրանց:
Նա քայլում է, քայլում է ամբողջ գիշերը,
Քայլում է մինչև լուսաբացը: —
Մեջքը ցավում է հոգնությունից: Գլուխը պայ-
թում է:
Արդեն ներս է հորդում սառը, պղտոր մի լույս:
Հեռվից, հաղիվ լսելի, հնչում է մի պայթյուն:
Նա արագ հագնում է վերարկուն և յելնում է
դուրս: —
Լույսը նոր է բացվում: Նոսրանում է խավարը:
Դառնում է կաթնանման, հոսուն:
Դեմը պատլի չե կանգնում ժամապահը:
Նայում է նա նրան մի պահ և վոչինչ չի ասում:
Դեմը — կայարանն է մռայլ, իսկ հեռվում — քա-
ղաքը:
Նա նայում է, նայում է յերկար, կանգնած ջրա-
հապատի մոտ:
Քաղաքից լսվում է մի ձայն: Կարծես աղաղակ է:
Ահով է լցված օդը:
Նա նայում է յերկար: Ականջ դնում: Լուռ է:
Բայց լռությունը այնքան է անհանգիստ:
Լռությունը շնչում է տագնապով: Լռությունը
ժխոր է:

Խուլ, տագնապոտ ժխոր, վոր գուցե աղմուկն է իր քունքի։
Այդ ձիե՞ր են դոփում, թե իր սրտի զա՞րկն է։
Հեռագի՞րն է արդյոք իրեն այդպես հուզել։ —
Բայց քաղաքում ահա, զարկով հատու ու բարկ,
Տասն անգամ, զարկ զարկի յետևից, յերգում է մի չոր մաուզեր։
Նա շոյում է ճակատը։ Ձեռքերը գրպաններում
Ուզում է մի փոքր քայլել զրահապատի կողքին, —
Բայց ձեռքը դիպչում է մի թղթի — և նա միտքն է բերում
Հեռագիրը նորից։ — Նա լապտերի շողքին
Մոտենալով՝ հանում է գրպանից
Հեռագիրը, վոր նորից կարդա, —
Յերբ հանդիպում է հայացքը ինչ-վոր ծանոթ բանի,
Յեվ նայում է նա նրան յերկար, — նայում է անթարթ։
Զրահապատի անունն է։ — «Վարդան Զորավար։»
Գրված գրերով դեղին։
Նա նայում է, նայում է, նայում է նա յերկար,
Ինչ-վոր մի բան կարծես կպչում է ուղեղին։
«Վարդան Մամիկոնյան...» Նա միքանի անգամ
Կրկնում է անունն այդ մեքենայորեն —
Յեվ աչքերի առջև նա տեսնում է հանկարծ
Մի թղթե սաղավարտ... և իրեն։ —
Այդ յե՞րբ եր... Տարինե՞ր, թե մի ամբողջ անծայր
Հազարամյակ առաջ, յերբ կենդանի յեր դեռ հայրը։ —

Յերբ թվում եր դեռ կյանքը զարմանալի՜ պայծառ
Յեվ դպրոցի բեմը — Ավարայր եր...
Հոգնել եր յերևի, կամ խռով եր հոգին,
Սակայն թվաց հանկարծ այնպես նրան,
Թե կանգնած է ինքը ահավասիկ կրկին՝
Թղթե սաղավարտը գլխին՝ փոքրիկ բեմի վրա...
Ահավասիկ ինքը — Վարդան Զորավար —
Կանգնել է հզոր ու զրահապատ, —
Շուրջը ննջել է Ավարայրը,
Բայց արթմնի յե ինքը՝ իր զորքերով հպարտ։ —
Այո։ Վարդան Զորավար։ Այո։ Զրահապատ։ —
Բայց ինչ-վոր փոխվել է անդարձ։
Այն ժամանակ ուրիշ եր։ Այն ժամանակ չկար
Այս լռությունը կարծր։
Յեվ չե՞ր արդյոք այն բեմը, այն թղթե սաղավարտը
Իր համար ավելի՜ իրական,
Քան այս գիշերը, այս դաշտը, այս զրահապատը բարդ,
Այս յերկար կոշիկները իր հագած...
Այն սուրը թիթեղե, այն Ավարայրը սուտ —
Իր մանկական մտքի և իր սրտի համար
Չե՞ր արդյոք կյանք միակ և գաղափար մի սուրբ,
Յեվ գոյություն, և՛ խոհ, և՛ ուղի միանգամայն...
Յեվ մինչև որս իր կյանքը, մինչև գիշերը խավար այս,
Յերբ անելիքն իր ինքը դեռ չգիտե —
Անօգնական բեմի այն Ավարայրը,
Այն դաշտը չե՞ միթե...

Դեռ ավելի՜ն։ — Այո։ — Նա ուղեղը լարեց
Յեվ մտքում դարը քրթմնջաց։ —
— Յեվ չի՞ յեղել արդյոք տարիներ ու դարեր,
Մինչև գիշերը այս —
Այն միֆական, այն մութ Ավարայրի որից
Մինչև որն այս, գիշերն այս խավար —
Ո, չի՞ յեղել արդյոք մեր պատմությունն ամբողջ
Մի այդպիսի անդո Ավարայր...
Յեվ նրանք, ժողովրդի ասպետները բոլոր,
Այդ տերերը դաժան ու ժլատ —
Բեմ չե՞ն յելել արդյոք փայտե նիզակներով,
Գլխներին թղթե սաղավարտ։ —
Յեվ այդ լեգենդն ամբողջ, վոր դարերի միջով
Ձգվելով արնոտ ու յեղերական —
Շառայլել է գյուղերը հրդեհների բոցով —
Չի՞ յեղել արդյոք բեմական
Նույն Ավարայրը խեղճ, վորին ժողովուրդը,
Իբրև մուտքի վճար իր արյունը տալով՝
Գաղաղել է, ցնդել, արյան գետեր հորդել,
Լոկ տեսնելով իր դեմ թղթե սաղավարտներ՝
Հրճվանքից ու վշտից խնդալով ու լալով...
Յեվ այժմ — հին վեպին իբրև ֆինալ —
Ահավասիկ «Հանրապետությունն Արարատյան» —
Նույն թիթեղը ու թուղթը՝ հագած արյուն ու փայլ,
Նույն թիթեղե այն սուրը՝ հագած մահու պատյան...
Յեվ ինքը — զորավարը — միթե մանուկն է նույն,
Վոր բեմական փայլով շլացած,

Զգեցած սուտ փառքի մի միֆական անուն՝
Խաղում է նույն դերը դարձյալ...
Շուրջը նայեց մի պահ և դարը ծիծաղեց։
Ձեռքը բնազդաբար տարավ գլխարկին,
Կարծես զննել ուզեց, թե թիթեղե
Այն սաղավարտը չէ՞ դեռ իր հագին։ —
Վո՛չ։ — Մի որում, հանկարծ, այն որերից խաղաղ
Կտրելով հսկա մի ճանապարհ —
Ավարայրը դարձավ մի հայրենի քաղաք,
Իսկ թիթեղե զրահը — զրահապատ։ —
Բայց թղթե չե դեռ իր սաղավարտը,
Թիթեղե չե դեռ սուրը իրա —
Յեթե... չշարժե... այս... զրահապատը —
Յերևանի վրա...

. . . .

Վորոշված եր։ — Ինչպես վայրկենական քնից
Կամ յերազից զարթնած — ցնցեց նա իրեն,
Բարձրացավ զրահապատը, իր որագիրն հանեց,
Պոկեց մաքուր մի թերթ — և գրեց.
«Յերեվան: Հույժ կարեվոր:» — Զարմանալի հանդարտ եր։ —
«Ռազմական նախարարին: Անհապաղ: —
«Վարդան Զորավար» հանում է թղթե սաղավարտը
Յեվ դառնում է իսկական զրահապատ»:

1933. IV. 11 — 12.

ԳԱԼԻՔԻ ՎՈՐՄՆԱԴԻՐՆԵՐԸ



ՆՐԱՆՔ գալիս են գյուղերից ու քաղաքներից,
Գալիս են հանքերից,
Գործարաններից,
Գալիս են յերկրի հեռավոր ծայրերից,
Գալիս են բոլոր վայրերից. —
Ղեկավարի կանչին, սերունդների կոչին
Գալիս են նրանք հազարներով,

Աշխատանքի այս մեծ զորակոչին
Գալիս են յերկաթյա
Շարքերով։

Անտառների նման հոծ ու խիտ,
Ովկիանի հախուռն ալիքների նման,
Գրոհելով մի նոր, մի կամքավոր ուղի,
Վոր պայքարի բոցում ամրանում ե հիմա, —
Ընդդեմ քամուն, հողմին, ընդդեմ-հազար տարի
Այս ափերին խփող մակընթացության —
Անհա յելած մարտի մի վիթխարի՝
Ընթանում են հանդուգն մի վեհությամբ։

Այնտեղ, այս ուժերի
Ջրաբաշխման կետում,
Ակունքներում այս բարձր վոգևորության,
Ուր վերջանում ե մշուշը տարիների,
Վորպես մռայլ մի ամպ, —
Այնտեղ, այնտեղ, այնտեղ,
Ուր կուտակած յեռանդը կատարող
Ցև մի բռունցք շինած գալիքների կարոտը՝
Անշեղորեն մղվում ե դեպի գրոհ
Այս մարդկային վորոտը, —
Այնտեղ, այնտեղ, այնտեղ,
Ուր կոփելու համար ապագայի ընթացքը
Կարծրանում ե կամքը, վորպես գրանիտ, —
Այնտեղ, գալիք կյանքի
Այգաբացով հղի՝
Լեռնացել ե ինքը —
Ղեկավարը։ —

Ցնցած համայն կյանքի
Ալեկոծվող բովից,
Պայքարներից ցնցած հազարամյա, —
Ցնցած անդուլ ծփվող
Սոցիալական ծովից,
Որ, ալեկոծ կրկին,
Մռնչում է հիմա, —
Իր պողպատյա անթեք մկաններով,
Իր ուղեղով, որ պիրկ է, որպես մկան, —
Տիտանային հայացքն հառած հեռուն,
Դեպի անդասակարգ ապագան, —
Դասակարգի բոլո՛ր հերոսական
Հանճարների ուղեղը և կամքը ամբարած—
Նա վարում է այս մարտը,
Նա մղում է
Մեր բանակները մեծ դեպի վսեմ մի կյանք։—

Ո, դո՛ւ, յերկաթյա ղեկավա՛ր,
Որ վարում ես այս մարտը, որպես տիտան,—
Կա՞,
Գոյություն ունի՞ քո ընթացքի համար
Անհաղթելի մի բան...
Ո, վո՞ր, ո վո՞ր առաջնորդը,
Վո՞ր ղեկավարն արդյոք, որ մղել է մար-
տեր—
Յեղել է կո՛րծր այսքան
Յեվ այսքան խո՛ր,
Յեվ իր մարտով այսքա՛ն ուղիներ է հար-
թել...

Նրանք գալիս են գյուղերից ու քաղաքներից,
Գալիս են հանքերից,
Գործարաններից,
Գալիս են յերկրի հեռավոր ծայրերից,
Գալիս են բոլոր վայրերից։
Գալիքների կանչին, Ղեկավարի կոչին
Գալիս են նրանք միլիոններով, —
Աշխատանքի այս մեծ զորակոչին, —
Յեվ մղում է նրանց, ղեկավա՛ր,
Քո յերկաթյա կամքը —
Դեպի գրո՛հ։

Անծայրածիր յերկրի սահմաններից անծայր,
Ու լեռներից, ու բարձր քաղաքներից,
Ուղիներից, ուր դեռ մշուշը չի հնձած,
Ուր ապրում էր մարդը, որպես գերի, —
Ուր տարիներ բազում մահ էր միայն ցանել
Կյանքը — վոսկեհանդերձ արքաների ձեռքով, —
Այժմ յելնում է կյա՛նք մի հանճարեղ՝
Խորհրդային այս բորբ արեգակի ներքո։
Յեվ թող յերգեմ յես այս իմ շառաչուն յերգով
Լեռնացումը այս վեհ, այս չմարող
Արեգակը՝ վառված այս յերեկո՝
Անեզրական կամքի անմարելի հրով։

Ո՜, արեգա՛կ, յելած այս յերեկո՝
Մեր դաշտերում հառնող քաղաքների վրա, —
Ո՜, Արևմուտք մեռնող, ուր ցերեկով
Լուսիններ են յելնում — մահաբեր ու մռայլ...

Ո՜, Արևմուտք շռայլ, ուր արքաները ծեր,
Ուր արքաները կուռ վոստանների,
Շռայլության, արյան սերմանողներն անեզր,
Արքաները Վոսկու Տների
Կախաղան են ցցնում ու կործանում իրենց,
Ինչպես հետին դահիճ, կամ ավազակ, —
Ո՜, Արևմուտք, այսոր ուռճանում են քո մեջ
Փոթորիկնե՛ր, հողմե՛ր, ուրագաննե՛ր անշեջ, —
Յեվ յերգում է քեզ մահը — ահազանգ…
Ո՜, Արևմուտք շռայլ, — ցնցոտինե՛ր,
Ցնցոտինե՛ր հագած բազմություններ մեռնող…
Ո՜, հոգեվար, բայց բո՛րբ բազմություններ,
Վոր կերտելու յեք վաղը — մեզ պես — աշխարհ
    մի նոր…
Ո՜, առավո՛տ, վոր հին Արևմուտքում
Ուռճանում ես՝ մեր բորբ արեգակից վառված,
Մեր պայքարի, մեր մեծ ընդվզումի հետքով
Արևմուտքում ծագող, ո՜, արեգա՛կ անմար…
. . . .

Նրանք գալիս են գյուղերից ու քաղաքներից,
Գալիս են հանքերից,
Գործարաններից,
Գալիս են յերկրի հեռավոր ծայրերից,
Գալիս են բոլո՛ր վայրերից։ —
Ղեկավարի կանչին, սերունդների կոչին
Գալիս են նրանք միլիոններով, —
Աշխատանքի այս մե՛ծ զորակոչին
Գալիս են յերկաթյա
Շարքերով։ —

Անապատ եր այստեղ, անջուր յերկիր։
Մահն եր թռչում այստեղ՝ համատարած։
Ունկնդրում եր այստեղ քամիների յերգին
Մի անողոք Զանգու ու մի անբեր Արաքս։
Այս խաների յերկրում, այս ցարական
Ծայրամասում, ուր կար միայն քամի,
Ուր տարիներ, դարեր այս հողերի վրա
Շողն եր միայն շոգում՝ չար հովազի նման
Լափլիզելով թե՛ կյանք, թե՛ աշխատանք, —
Այս անապատ յերկրում բարձրանում ե հիմա
Աշխատանքի, կամքի հերոսական մի կյանք։
Այս անջրդի, այս շոգ անապատում
Պիտի յելնեն եղուց ձյունապայծառ վարդեր
Ու վողկույզներ պիտի շողան խայտուն. —
Այս գարունքի համար ճանապարհ ե հարթել,
Հարվածային ընկե՛ր, քո յեռանդը արդեն,
Քո գոյամարտն անդուլ…
. . . .

Ո՜, ջո՛ւր, վոր հորդառատ
Այս քարերի միջով այսոր յելար մարտի. —
Քո կարկաչում, քո այդ հորձանուտում վարար
Յես վողջունում եմ շունչը
Մեր ընդհանո՛ւր մարտի։ —
Յես վո՛չ թե ձայնն եմ քո — քո կարկաչում լսում,
Այլ վորոտը յերկաթ յերակների,
Հարվածային անթիվ բանակների լեզուն,
Վոտնաձայնը բազում մեր գնդերի…
Յես լսում եմ դոփյունը բանակների ըմբոստ,

Վոր գնդերով բազում, հազարանուն՝
Բարձրացել են կոչին դասակարգի մեր նոր,
Բարձրացել են մարտին մեր ընդհանուր...
Քո կարկաչում այսոր յես լսում եմ դոփյունը
Արևմուտքում յելնող բանակների,
Վորոնք փորում են հինը
Ու հարթում են հունը —
Մեզ հետ մեկտեղ — գալիք գարունների։ —
Քո կարկաչում լսում եմ Ղեկավարի ձայնը,
Վոր բոլորիս մարտի յե այսոր մղում։ —

Հարվածային ընկեր, — այդ ա՛յն ե, ա՛յն ե. —
Մեր պայքարի վորոտը՝
Անպարտ ու բազմաբեղուն...

1933 VI. 29.

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԴԱՇՏԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐ



Ա

ՆՐԱՆՔ յելնում էյին առավոտվա ծեգին
Յերբ արևը նոր եր բարձրանում,
Յեվ մինչև մայրամուտ, մինչև իրիկուն
Իրենց սերմը ցանում
Վախվըլխելով, աչքերը կարիքին,
Բնության ու Մարդու դավերին բյուր,

Գերի Թշնամական Տարերքին,
Գերի շահագործող Մարդուն։

«Յեհե՜-լեհե՜-լեհե՜,
«Հորովե՜լ, հորովե՜լ, հո՜,
«Հո՜ո՜, յե՜զը ջան...»

«Որհնյա՜լ ե Աստված» —
Աշխատի՜ր, վարի՜ր որնիրուն.
«Բարձրյա՜լ ե Աստված» —
Բերքը տանուտերին տուր.
«Գովյա՜լ ե Աստված» —
Մնացածը տուր զորային.
«Տե՜ր, փառքդ շատ» —
Նստի՜ր՝ աչքդ մահի...

«Հորովե՜լ, հորովե՜լ, հո՜,
«Հո՜ո՜, յե՜զը ջան...»

Գարունը հեղեղ եր բերում,
Ամառը՝ յերաշտ,
Աշունը՝ կարկուտ ու ցուրտ...
«Տե՜ր, փառքդ շատ,
«Որհնյա՜լ ե Աստված» —
Ձմեռը նստիր գերանին
Յեվ յերազիր զուր...

«Հորովե՜լ, հորովե՜լ, հո՜,
«Հո՜ո՜, յե՜զը ջան...»

Գալիս եր գզիրը չեչոտ,
Անցնում եր գյուղամիջով,
Կանգնում եր գյուղամիջում,
Կանչում եր չոր.—
«Տերության հրամա՜ն անխա՜խտ.
«Ամեն տնից մի մա՜րդ,
«Յերկու անասո՜ւն...
«Առավո՜տ-ծեգի՜ն-դա՜ն—
«Գնան մութլուսո՜ւն...»

«Հորովե՜լ, հորովե՜լ, հո՜,
«Հո՜ո՜, յե՜զը ջան...»

Գնում եր՝
Ձլուտ Ձադին,
Տկլոր Բադին,
Հոռ Հովանը,
Ծուռ Հարոն...
Մնում եր տանը՝
Իշխան Աղասին,
Հարուստ Հովսափը,
Կոլոտ Բաղդասարը,
Ռես Մնոն...

«Հորովե՜լ, հորովե՜լ, հո՜,
«Հո՜ո՜, յե՜զը ջան...»

«Յեհե՜-լեհե՜-լեհե՜, —
«Տե՜ր, փառքդ շատ...»

Արտը՝ հնձած կիսատ,
Անասունը տրաքեց շոգից,
Իսկ հարուստ Հովասափը
Գնաց քաղաքի...
Եզուց ռեսը կգա,
Կխլի հողը,
Հովասափը կգա —
Կուզի փողը...
Կնկնես վոտը ռեսի,
Կլիզես գետինը,
Կտանեն տանդ քուրսին —
Կվոռնա կինդ...
Գութ կաղերսես ռեսից,
Վոր թողնի քեզ տանըդ —
Յեվ արևու վզիդ
Կիջնի խարաղանը...

«Հորովե՜լ, հորովե՜լ, հո՜,
«Հո՜ո՜, յեզը ջան...»

«Որհնյա՜լ է Աստված» —
Ապրել ես պապերպապ
Այսպես...
«Բարձրյա՜լ է Աստված» —
Յերգել են տերտեր ու
Ռես...
Յեթե նրանց մնա,
Յեթե այսպես գնա —
Մինչև մահդ

Դեռ
Կերգես. —

«Տե՜ր, փառքդ շատ,
«Փառքդ շատ,
«Տե՜ր...»

«Հորովե՜լ, հորովե՜լ, հո՜,
«Հո՜ո՜, յեզը ջան...»

. . . .

Բ

Նրանք յելնում էյին առավոտվա ծեգին,
Յերբ արևը նոր էր բարձրանում,
Յեվ մինչև մայրամուտը, մինչև իրիկուն
Իրենց սերմը ցանում
Վախվըրխելով, աչքերը Կարիքին,
Բնության դավերին ու Մարդուն, —
Յեվ անսահման բարիք էր
Նրանց համար այդ հողն անարդյունք: —

Ո՜, հող, ո՜, դաշտ, ո՜, տափ,
Մի բռաչափ գետին քարքարոտ,
Վորի վրա մարդու աշխատանքը անափ
Թողնում էր փշրանքի կարոտ.
Ու Կարիքն էր պարում
Դաշտերում, դաշտերում,
Յե՛վ սով, և՛ մահ, և՛ արյուն
Աչքերում...

Ո՞ւր եր տանում մոխիրն
Ճանապարհը քեզ.—
Մինչև սարը դիմացի,
Նույն աշխարհը կեզ,
Ուր նույն արևն եր կիզող,
Սև ու անուրախ,—
Ո՜, կապարե հորիզոն
Դաշտերի վրա...

Գնա, վորքան կամենաս —
Նույն աշխարհն ե գորշ.
Վոչ մի ընկեր-բարեկամ,
Յեվ վոչ մի դրոշ.
Նույն ուղին ե մոխիրե,
Նույն աշխարհը մութ,
Նույն հորիզոնը հրե,
Նույն մարդիկ անգութ...

Հենակներով վոսկորե,
Ուսին մի մաղախ,
Սոմս եր շրջում ու թակում
Խուղերը խաղաղ։
— Դռներդ բա՛ց, ո՜վ հողի
Աշխատավոր խեղճ.
Միենույնն ե՝ ցերեկից
Կմտնեմ ներս։ —
Լուսամուտից կմտնեմ,
Վարից ու վերից,
Դռնատակից կմտնեմ,

Պատի ճեղքերից...»
Յեվ մտնում եր Սովը ներս,
Վոր դուրս չգա էլ հա՛ր...

«Հորովե՜լ, հորովե՜լ, հո՜,
«Հո՜ո՜, յե՜զը ջան...»

«Որհնյա՜լ ե Աստված,»
«Բարձրյա՜լ ե Աստված» —
Մեռնում եյիր դու սովից՝
Աչքդ մնում եր բաց։ —

Յեվ վորպեսզի դագաղում
Չմնար աչքդ բաց —
Դնում եյին աչքերիդ
Մի կտոր հաց։

Չեր կշտանում սակայն քո
Աչքը հացով այդ,
Յեվ քեզ թաղում եյին՝ բաց
Աչքերով անթարթ։—

Յեվ շիրիմի վրա քո
Գրում եր ապա
Մահը՝ վոսկրոտ իր ձեռքով՝
Մի քանի բառ.

«Աստ հողագործը հանգչի,
Մաճկալը չարքաշ,
Վոր մինչև մահ վաստակեց,
Բայց վոչ մի անգամ

Կուշտ չկերավ իր որում,
Աչքը մնաց հացին,—
Եվ մեռնելիս՝ դագաղում՝
Սովից՝ աչքը բաց եր...»

Հետո անձրևն եր թրջում
Վոսկորներդ վողորկ,
Եվ փտած գանգդ լցնում
Խոնավ հողով.
Կշտանում եր մշտաբաց
Այսպես աչքը քո...

«Որհնյա՜լ ե Աստված...»
«Բարձրյա՜լ ե Աստված...»
«Հորովե՜լ, հո՜...»

. . . .

Գ

Այս ամենը հիմա անցած ե։
Այս ամենը հիմա հեքիաթի յե նման։
Ինչպես ծառն եր լինում հողմածեծ,
Այդպես հորձանքը մեր մի որ շաչեց
Եվ արմատից պոկեց անիմաստ
Այդ հորովելը հին։—Եվ հիմա
Հնչում ե յերգը ձեր միասնական ու դաշն՝
Դաշտերում համայնական ու անեզր,—
Ա՛յլ յերգով եք հիմա յելնում դուք դաշտ,
Ո՛վ անեզր հերկերի սերմնացաններ...

Ձեզ համար հնչեց մի որ
Մի այլ հորովել,—
Եկավ սրով, հրով,
Կյանքը խռովեց։
Երկաթավոր յեկավ,
Դռները թակեց,
Կարմիր զգեստ հագավ,
Կյանքը կրակեց։

Նա ալ նժույգ նստած
Համբավաբեր եր.
Եկավ ինքնավստահ
Կարմիր Նոյեմբերին.
Քաղաքներից յեկավ
Հեռու Հյուսիսի,
Դեն շպրտեց չարկամ,
Հիմար Հիսուսին։

Եվ Հիսուսի հետ այն
Մգլած ու դեղին —
Նա դաշտերից քշեց
Վոսոխներին հողի.
Կանգնեց՝ պողպատ հագին,
Հզոր ու անահ,—
Եվ «Բարձրյալի» տակից
Ելավ քահանան...

Ռես Մնոյի հետքից
Ելավ քահանան,

Հողը խաչակնքեց,
Վոր անբերրի մնա,—
Ուզեց վերջին անգամ
Կյանքը խռովել—
Յերգեց, արյունակամ,
Մահվան հորովել...

Այդ վերջին յերգն եր նրա,
Վերջին յերգն եր.
Բնում խեղդեց նրան
Մեր ջղուտ ձեռքը.
Սրբեց նրանց աշխարհից,
Մեր ջղուտ ձեռքը,—
Հիմա հերկիր ու վարիր
Քո անսահման հերկը...

Հիմա դաշտ եք յելնում դուք լիասիրտ,
Ո՛վ անեզր հերկերի սերմնացաններ,
Հերկում եք ու վարում միասին
Ձեր դաշտերը անեզր.
Քշել եք դաշտերից արդեն
Շահագործող մարդուն,
Վոսոխին դժնի ու արնաքամ,
Յեվ հերկում եք հիմա զվարթուն
Ձեր հերկը համայնական։—

Յեվ դուք գիտեք հիմա՝ այս հերկը,
Վոր մշակում եք արդ ու վարում միասին—
Ձեր լուսավոր կյանքի, ձեր Գալիքի հերկն ե
Ինչպես իմ յերգը — յերգ ե այդ Գալիքի մասին։

Այդ հերկը ձգվում ե անծայրածիր
Մեր հինավուրց Նորքից մինչև Թաղաղական։—
Բարձրացել ե այսոր մի հոյակապ հնձի
Մեր անսահման յերկիրը՝ հագած պողպատ վա-
հան։—
Այն մոխիրն, այն նեղ ճամբեքի փոխարեն,
Ուր ճռընչում եր սայլը հնավանդ—
Հիմա ձգվում են լայն ճանապարհներ անվերջ
Սառուցյալից մինչև Յերևան։
Յեվ այդ անվերջ, այդ լայն ճանապարհներով,
Վորոնց ծայրը այսոր հասել ե Նորք—
Ընթանում են հանդուգն քայլերով
Սերմնացաններ՝ արև ու խնդություն բերող։—

Ճանապարհով այդ մեծ ու անծայրածիր,
Դառն անցյալի հանդեպ անհողդողդ ու աններ՝
Այսոր յելել եք դուք աննախընթաց հնձի,
Ո՛վ գալիքի խիզախ սերմնացաններ...

Այս հերկը — յերգ ե և ընթացք, և՛ կամք ե ու
հաղթանակ,
Յեվ տքնաջան ներկա չե՝ բեղմնավոր, և՛ արևե
գալիք,—
Այս հերկը հերկում ե որնիրուն մի անպարտելի
բանակ,
Ուր յուրաքանչյուր անգործ—դասալիք ե։—

Քաղաքներում ինչպես մեր վիթխարի,
Քաղաքներում մեր նոր
Յելնում են որը որին

Հսկաներ յերկաթավոր,—
Քաղաքներում ինչպես բազմահազար
Հարվածայինն ե մեր հաղթանակը հարթում —
Այդպես հարթում եք դուք
Ճանապարհը, ուղին սրբազան
Վաղվա վսեմ մարդու...

Նույն հերկն ենք մենք հերկում գրիչով ու մուրճով,
Յեվ արորով, խոփով յերկաթե.—
Հալոցքներում մեր թեժ, մեր դաշտերում տոթ,
Յեվ գրքերում մեր արդեն—
Նույն բերքն ե բարձրանում ու հորդում,
Նույն յերգը յեռանդոտ,—
Յեվ բոլորիս նույն ձեռքն ե առաջնորդում,
Նույն Ղեկավարն անդող։—

Նա շարժում ե քո ձեռքը, յերբ դու
Շաղում ես սերմը դաշտում,
Նա հանքում քանդում ե անդուլ,
Յերբ փորում ե հարվածային վաշտը,—
Նա շարժում եահա և՛ իմ ձեռքը,
Վոր ձեզ հետ միասին յերգիս հունտը ցանեմ,
Վոր անշեղ բարձրանա իմ բերքը,
Իմ տողերի հերկը անեզր...
Վոր յերգերիս կոավը ձեր թելերից հինեմ,
Վոր լինեմ հնի դեմ աններ,—
Ո՜վ դաշտերի անխոնջ հարվածայիններ,
Համայնական հերկի սերմնացաններ...

1933. VI. 24.
Նորք

ԳԻՐՔ ԽԱՂՈՂԻ, ԳԻՆՈՒ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹՅԱՆ



ՐԵՐՈՒՄ այս ջերմ ու հողմածեծ,
Յերբ շառաչում են բանակներ մեծ,
Յերբ Արարատից մինչ բարձրաբերձ
Հիմալայները այն յերկնահեց
Յելած պայքարի՝ շաչում են, տես,
Դասակարգերի զորքերն հրկեզ,—
Վոգևորությամբ պայծառատես
Յերգում եմ ահա այս գովքը յես։

Բ

Յերգում եմ ահա այս գովքը յես
Մեր որերում այս բազմաշառաչ,
Յերբ բազմություններ հողմահալած
Մղում են պայքար մի լուսագես.—
Մղում են այնտեղ մի պայքար մեծ
Ընդդեմ դասերի կործանարար,
Դասերի այն սև, վոր յերկրում մեր
Սրբեց մրրիկը այն փրկարար։—

Գ

Ո, Հոկտեմբեր դու ազատարար,
Վոր Ջրերի պես յեկած հորդուն՝
Կյանքի լորձունքը քշեցիր դուրս
Յեվ բերիր մեզ կյանք մի անարատ,—
Յեվ բերիր մեզ կյանք մի լուսառատ,
Վորով հրկիզված՝ ահա անդուլ
Յեվ պայքարում ենք, և՛ հար կերտում
Որ բեղմնավորող և որ խնդուն։

Դ

Դեռ պայքարներ կան մեր դեմ անդուլ,
Դեռ փոթորիկներ մեծադժվար,
Սակայն արևը այսօրվա վառ
Ել չի հանդգնի բերելու վար
Յերկնակամարից մեր խնդավառ
Յեվ վոչ մի վոսոխ ձեռքերով չար։ —
Ո, ընդունակ ենք պահելու հար
Մենք մեր արևը արևափայլ։

Ե

Այն մենք վառել ենք մեր գլխին հար
Ձեռքերով մեր ձիգ ու ջլապինդ,
Պայքարներով ենք վառել դժվար
Յեվ գրոհներով մեծաշռինդ։
Այսօր վառում է նա արդեն խինդ
Յեվ մեր աշխարհում անծայրածիր
Փռում է հունձքի գանձեր անծիր՝
Յեվ արվեստ, և՛ յերգ, և՛ բերք, և՛ միրգ...

Զ

Ահա թե ինչու,— թեկուզ այնտեղ,
Մեր անծայրածիր աշխարհից դուրս,
Դեռ չի յերևում հորիզոն լուրթ,
Այլ ամպեր են բիրտ կուտակվում մութ,—
Ահա թե ինչու, թեկուզ մենք մեծ
Պայքարներ ունենք դեռ հեռակա—
Հավատով անբիծ, անապական
Յես կյանքի գովքն եմ յերգում ահա։—

Է

Յերգում եմ ահա այս գովքը յես
Խաղողի մեր բորբ ու լուսատեսք,
Մեր գինու՝ պայծառ ու հրակեզ,
Մեր արվեստների մեծահանդես։
Յեվ գյուղությունն եմ մեր յերգում յես,
Գեղեցկությունը գյուղության վես,
Վոր որերում այս պարգևե մեզ
Հույզեր հրահուր և մրգեր կեզ։

Ը

Անհուն հավատքով դիմում եմ քեզ,
Հանճար ճորտերի, արև՛ հրկեզ,
Որ շառաչելով մղում ես մեզ
Դեպի ապագա մի այգամեծ։
Դիմում եմ, որ ինձ առաջնորդես
Խոհերում իմ այս այնպես, ինչպես
Մեր կյանքի բոլոր հերկերում մեզ
Առաջնորդում ես քո մտքով թեժ։

Թ

Չի՛ առաջնորդում այլևս մեզ՝
Յերգասաններիս, այն լուսերես
Յերգի դիցուհին, որ անմարմին
Իջնում եր առաջ, դարերում հին,
Ոգի չեր տալիս այրերին հին,
Հանճար եր տալիս այրերին հին,
Ու մղում եր այդ այրերին հին
Դեպի կյանք վսեմ ու յերկնային։

Ժ

Ո՜, հելլենական դարեր վսեմ,
Յերբ մարդկությունն իր խանձարուրում
Դեռ յերգերո՛վ եր դիտում, խորհում,
Յեվ յերգերո՛վ եր տնկում բույսեր,
Յեվ յերգերով եր հերկում լուսե
Իր արտերը, և իր նսեմ
Ուղեղով դեռ նո՛ր փորձում եր սև
Կյանքի ընթացքը նախատեսել։

ԺԱ

Սակայն քերթողն է դեռ այն ասել,
Այն վոլիմպացին վերջին, թե յերբ
Կյանքում աճում է ամենուրեք
Ոգի գործարար, իմաստ զորեղ, —
Այլևս դու չե՛ս առաջնորդում,
Դիցուհի՛ յերգի, այլ ինքդ՝ դու
Առաջնորդվում ես, գնում արթուն
Հետքերով Մտքի առաջնորդող։ —

ԺԲ

Ո, փա՜ռք ուրեմն Առաջնորդին,
Մեր Ղեկավարին հրաքանքար,
Նրա հանճարին արևափայլ
Յեվ բանակներին յերկաթաքայլ։ —
Դիմում եմ յես քեզ, ո՛, Ղեկավա՛ր,
Ոգի՛ հանճարեղ, հանճար անճառ,
Որ վառեցիր այս արևն անմար
Յերկնակամարում մեր հողմահար։ —

ԺԳ

Դիմում եմ յես քեզ, ո՛, ննջած հայր,
Բայց հա՛յր կենդանի հանճա՛ր անմար,
Որ մղելու յես մեզ անդադար
Դեպի բարձրունքներ արեգնափայլ։
Ոգնի՛ր ինձ, ո՛ւժ տուր, ո՛, Ղեկավա՛ր,
Հյուսելու գովքս արևավառ,
Որ լինի գովքս թե՛ խոր, թե՛ հար
Քո բազմարեղուն վոգուն համար։ —

ԺԴ

Վորքան կանգուն է աշխարքը քար,
Վորքան փայլում է արևը վառ —
Յեղել է խաղող, վողկույզ պայծառ,
Յեվ գինի՝ մաքուր ու կենարար։
Յեվ յերգ է յեղել աշխարհում հա՛ր,
Յեղել է արվեստ ստեղծարար,
Յեվ դյուրություն է յեղել դժվար,
Վոգու տքնություն հանճարափայլ։

ԺԵ

Բայց չեմ գովերգում յերգով իմ այս
Յես հին դարերի խաղողն այն սև,
Յեվ հին դարերի գինին այն գեղխ,
Յեվ հին դյուրության հունն այն դժվար։
Ո՛, տքնությո՛ւն դու դարերի ծեր,
Վոր արքաներին միայն լուսել,
Վոր ճորտությո՛ւն ես սերմանել սև
Յեվ սին դյուրությամբ վոսկեզօծել։

ԺԶ

Ո՛, միջնադարյան մթին խուցեր
Յեվ վարդապետնե՛ր դեմքով մթին,
Վոր դյուրությունն եք ստեղծել հին,
Սևակող գրքեր՝ մտքերով սին,
Դժնաձայն տաղեր, հանգով խրթին,
Աղոթքներ՝ ձոնված անեղծ կույսին,
Վոր գեղջուկ մարդու գեղջուկ մտքին
Քաշեք պատնեշներ խավարածին։

ԺԷ

Ո՛, վեղարավոր դպիրներ հի՛ն,
Վոր ճաշակել եք վողկույզն անգին,
Ճորտերի անկած վողկույզն անգին,
Ճորտերի քամած արդար գինին —
Յեվ ձեր խուցերում՝ հանգով խրթին՝
Անեծքներ հղել գինուն, վորթին,
Յեվ ռամիկ, արդար ժողովրդին
Ժուժկալ ճորտություն քարոզել սին։—

ԺԸ

Ո՛, մռայլախոս դպիրներ սև՛, —
Դո՛ւ, Շնորհալի՛, և դո՛ւ, Նարե՛կ,
Դո՛ւք — մագաղաթյա և հանճարեղ,
Դո՛ւք — զարհուրելի, ինչպես Դարեհ,
Դո՛ւք — պատառ մտքի, դո՛ւք — անարև,
Վոր սրտի համար դարե՛ր, դարե՛ր
Կերտել եք դագաղ — պատյան քարե,
Յեվ վոգու համար — դժնյա տառեր։ —

ԺԹ

Ո՛, միջնադարյան մռայլ արև՝
Կախված կապարե յերկնքից մութ,
Միջերկրականից մինչև Տղմուտ
Յերկի՛ր քարաշատ, հերկեր ջերմոտ,—
Յեվ հրով կիզված մի ժողովուրդ՝
Կուռ դղյակների թե՛ բիրտ, թե՛ բութ
Բռնության ներքո՝ կեղեքված սուտ
Քարոզչությամբ այդ բազմանմուտ...

Ի

Գոռ դղյակներում նստած հարուստ
Ազատանիներ շվայտ ու ցոփ,
Զրահներ զարհուր ու արնացուլք —
Յեվ ստրուկների վերջին հացով
Բարձրացած վանքեր քանդակազոծ...
Վանքեր յերկնահեց ու խոյացող՝
Մռայլ դպրության հեղձուկ բոցով
Ծորտերի հոգին ընդմիշտ խոցող...

ԻԱ

Յես չեմ գովերգում հանճարը ձեր,
Ո, ժանտաբարո դպիրներ ծեր,
Վոր մառ բարբառով դպրության մութ
Կոփել եք ստրուկ մի ժողովուրդ,
Կերտել եք ձեռքով բազմահմուտ
Վոգու շղթաներ թե՛ բարդ, թե՛ բութ —
Յեվ ձեր դպրության գրքերը սուտ
Հռչակել թե՛ վեհ, թե՛ լույս, թե՛ սուրբ։ —

ԻԲ

Ձեր տքնությունը յեղել է զուր.
Վորքան էլ հմուտ ու հանճարեղ —
Ձեզ չի հաջողվել սակայն մարել
Ծորտ ժողովրդի բարբառը սուրբ...
Ո՜, ռամիկ մարդու արդար լեզուն
Հունով հայրենի, չնայած ձեր
Դժնի դպրության — դարե՛ր, դարե՛ր
Իր մաքրամաքուր ջուրն է տարել...

ԻԳ

Դո՛ւք — պալատական, դո՛ւք — արդարև
Դժնի դպրության կաթողներ սև,
Թշնամի կյանքի՛ն, սրտի՛ն, լույսի՛ն,
Հանուն սրբության անեղծ կույսի՝
Քերթողնե՛ր կրքի ու տափության,
Դուք չե՛ք այսօրվա մեր դպրության
Դարերից հորդող գետն այն փարթամ,
Վոր դեռ հավիտյա՛ն պիտի յերթա...

ԻԴ

Ո, վո՛չ. — համընթաց ձեր դպրության,
Այդ հին դարերից, վորպես Գողթան
Վտակներ վճիտ ու վոսկեձայն —
Հասել են տաղեր մեզ տխրության
Յեվ գեղջկաբարբառ ուրախության...
Հասել են տաղեր գուսանական,
Հայրեններ ռամիկ ու ռամկական
Յեվ անտունիներ թափառական...

ԻԵ

Ասում եմ յես գովք գուսանական
Քաղցրիկ յերգերին մեր վոսկեձայն,
Վոր յերգիչները թափառական
Յերգել են մթին դարերում այն։ —
Մեր հին քերթությա՛նն այդ աշխարհիկ,
Վոր դայլայլներով բիրտ բարբառի,
Ընդդեմ վանքերի մռայլ քարին —
Յերգել է սերը չնաշխարհիկ...

ԻԶ

Յեվ ասում եմ դուք չես հիմա այն
Մեր հայրեններին գեղջկաբարբառ,
Վոր գինու գովքն են յերգում անչար,
Վորթան վողկույզի հմայքն անճառ՝
Քրտնաթոր մարդու վաստակն արդար։
Ո՛, ռամիկ մարդու լեզո՛ւ ճարտար,
Ձայն աշխատանքի արևավառ,
Սիրո, խնդության գեղջուկ քնա՛ր…

ԻԷ

Ո՛, խնդությո՛ւն խեղճ՝ առանց առթի,
Ո՛, ուրախությո՛ւն ռամիկ մարդի,
Ո՛, խաղող՝ քաղած վերջին հերթին,
Ո՛, գինի՝ քամած վերջին վորթից,
Վոր մութ վանքերի զանգից հեռու
Հոսել ես խարխուլ այն խուղերում,
Ծորտերի տրտում տնակներում,
Նրանց յերգերում ու սրտերում…

ԻԸ

Ո՛, ճարտար ճորտե՛ր, ապրել եք դուք
Խարխուլ խուղերում անծածք, անդուռ,
Կամ քաղաքների պարսպից դուրս
Խուլ քարայրներում այն ժայռակուռ,
Արդար վաստակով ձեր ծանր ու սուրբ,
Քրտինքով անգին, տքնությամբ լուռ, —
Յեվ յերգել եք ձեր յերգերը հուր
Բարբառով վճիտ, հանգով մաքուր։ —

ԻԹ

Ասում եմ չես դուք ապա արդար
Անտունիներին ախրաբարբառ,
Շրջիկ տաղերին, վոր դարեդար
Յերգել են հողե մեր գյուղերում,
Կամ քարաքանդակ քաղաքներում —
Այդ քաղաքների խուլ տներում,
Սիրեկինների սիրուց յեռուն՝
Իրենց հայրենի խուղից հեռու…

Լ

Ո՛, ճարտար ճորտե՛ր, — մեր քերթության
Աղբյուրնե՛ր մաքու՛ր, — դո՛ւք, վոսկեձա՛յն,
Վոր կարկաչելով հասած մինչ լայն
Մեր հորձանուտը տաղերգական,
Ձուլվելով յերգին հովնաթանյան
Յեվ սայաթնովյան խաղերին ա՛յն —
Յեղել եք ակո՛ւնքը խնկակա՛ն
Մեր նո՛ր արվեստի քերթողական…

ԼԱ

Ո՛, ձեզանից են սկիզբ առել
Մեր ժողովրդի յերգերն հրե,
Մեր աշուղների այն հանճարեղ
Յերգերը վոսկուն, վորպես արև.
Յեվ ձեզանից է ապա սերել
Այն քերթությունը, վոր դեռ չերեկ
Լոռու տաղերգուն մեր արդարև
Դարձրեց պայծառ, ինչպես բյուրեղ։ —

ԼԲ

Ապա տխրադեմ յեկան հանդես
Յերգիչներ տխուր ու մոխրադես,
Յերգեցին տաղեր տխրահանդես,
Այնպե՜ս մեղմաձայն, տխո՜ւր այնպես, —
Մինչ հանդես յեկա նվաստս — յե՛ս,
Յեվ՝ վառված հրով աշխարհի կեզ՝
Յերգեցի յերգեր և՛ բորբ, և՛ թեժ,
Տաղեր հողմաձայն ու փրփրադեզ:

ԼԳ

Ինձանից հետո յեկան հանդես
Յերգիչներ յերկրի՜, հողի՜, հանքի՜,
Յերգիչներ՝ յելած նորոգ կյանքից,
Յերգիչներ խնդո՜ւն աշխատանքի, —
Յեկան խուղերի՜ց այն անարև,
Հանքերի՜ց յեկան, յեկան քարե
Այն զնդաններից, ուր վոր դարեր
Միայն ճորտությո՜ւնն եր բարբառել: —

ԼԴ

Այրում եր մի սև, դժնի արև
Դարեր շարունակ, մինչև յերեկ
Բարե յերկիրը մեր անտերև,
Մեր խրճիթները հողմայրերը: —
Մեր գլխին — բազում դաժան տերեր՝
Հայրենի, օտար և զանազան, —
Արքաներ, վորպես վայրի գազան —
Յե՛վ խուժք, և՛ խաչ, և՛ խարազան...

ԼԵ

Շահատակողներ ժանտադաժան. —
Թեյմուրլենկ՝ չարաչք ու չարաժանտ,
Չինգիզխան՝ զորքով բազմահազար,
Աբբասներ՝ զարհուր ու զանազան,
Յեվ ռուս արքաներ արնաբաժան...
Ո՜, ժանտ արքանե՛ր, ձեր սրբազան
Արշավանքներում վորքա՜ն տեսանք
Փորձանքներ դժնի ու տարաժամ...

ԼԶ

Սակայն ձեզանից հար անբաժան,
Հովանու ներքո ձեր սրբազան —
Ահա՛ հայրենի տերեր դաժան՝
Ավելի՜ զարհուր ու ժանտաժանտ...
Ո՜, դղյակներում նստած՝ գազան
Ազատանինե՛ր ժանտաբարո,
Իշխաններ՝ շվայտ ու անկարող,
Յեվ մութ մելիքներ արնակարոտ...

ԼԷ

Անլուր գերության ճանապարհով
Անցած դյուրությո՜ւն գեղջկաբարբառ,
Վոր հասած մինչև արևն այս վառ,
Այսօրվա մեր բոցե արևն անմար —
Հորդում ես ահա, վորպես վարար
Գետ մաքրամաքուր ու կենարար, —
Յես քեզ եմ յերգում հանգով ճարտար
Ներբող նրբակերտ ու գովք արդար:

ԼԸ

Փա՜ռք մաքառումին քո անդադար,
Քո ռամիկ հանգին, որ դարեդար,
Ճորտության միջից հունով դժվար,
Կտրելով մթին մի ճանապարհ —
Հասել է ահա մինչև մեր վառ
Այս արեգակը ստեղծարար,
Վոր վառվել է հար, վառվել է հար,
Բոլո՜ր ճորտերի փառքի համար։ —

ԼԹ

Փա՜ռք արևին մեր, որ հիմա վառ
Լուսավորում է հրով բերրի
Անցնող խավարը մեր խուղերի,
Խուլ նկուղները քաղաքների,
Յեվ լեռնաշխարհում ահա մեր հին
Շաղում է շողեր անմարելի,
Վոր ճորտության մեջ հեծող գերին
Դառնա իր բախտի տերը վերին։ —

Խ

Ո, դո՛ւք, հեռավոր յեղբայրներ իմ,
Քերթողներ գեղջուկ հայրենների,
Յերգասա՛ն ճորտեր՝ մաքով գերի
Ձեր ժամանակվա որենքների, —
Ահա՛ բարբառը ձեր յերգերի,
Հասած մինչև ինձ՝ իմ ձեռքերից
Անցած նորանոր յերգիչների —
Հորդո՛ւմ է արդեն իր ափերից...

ԽԱ

Ո՛, ճարտար ճորտե՛ր, յեթե դարեր
Ճորտությունն անգամ այն անարև
Չխեղդեց բարբառն այս հանճարեղ,
Վոր վտակներով բազմաբարև
Հասավ մինչև մեր որն այս հրե —
Ապա արևի ներքո այս մեր,
Ուր չկան տերեր, չկան ճորտեր —
Վորքա՜ն հորդառատ պիտի հորդե...

ԽԲ

Ու պիտի գնա՜ հիմա այն դեռ
Մինչև ովկիա՜նը գալիք կյանքի,
Ուր մարդկությունը վողջ աշխարհքի,
Առանց դասի ու դասակարգի,
Լծված խնդագին աշխատանքի
Պիտի իր անհուն յերկի՜րն հերկի, —
Յերկիր արևի՜, գինո՛ւ, յերգի՜ —
Յեվ մաքի՜, վոգո՛ւ բեղուն բերքի...

1932. VII. 12—16.

ՆՈՐՔ



ԲԱՐՁՐԱԲԵՐՁ բլուրի վրա,
Ավանում այն հին, հայրենի,
Ամրացած հնավանդ իր բնին՝
Բարձրացել եր բարդին այն բուրյան, —
Բարձրացել եր բարդին Նայիրյան
Յեվ թե լույս, թե մութ օրերում
Իր իրանն եր մեղմ օրորում —
Յեվ սիրում եյինք մենք նրան։

Բ

Կար պոետ մի՝ անունը Տերյան,
Մի պոետ մեղմախոս ու խեղճ, —
Նա մի օր յեկավ ու յերգեց
Այդ բարդու հմայքը բուրյան. —
Յեվ սիրեց մեր վոգին նրան,
Պոետին այդ տխուր ու բարի,
Վոր կառչած բարդու այդ ծառին՝
Մորմոքաց իր վիշտը Նայիրյան։

Գ

Նայիրյան խեղճ վոգին եր այդ,
Վոր հեռու-հեռու հյուսիսից,
Վորպես նոր մի, Նայիրյան Ուլիս
Դարձել եր իր տունն հնավանդ, —
Դարձել եր հոգնած ու տխուր,
Քաղաքներ տեսած ու ծովեր,
Դարձել եր տնակն իր ավեր,
Իր յերկիրը դեռ թե մութ, թե խուլ։

Դ

Նա յեկավ, յերգեց ու գնաց
Դեպի հեռուներն աշխարհի,
Բայց յերգը իր կառչած մնաց
Իր յերկրի հնավանդ ծառին.
Սարյակի նման փետրաթափ,
Թագնըված նրա սաղարթում՝
Նրա յերգը խեղճ ու հիվանդ
Մորմոքում եր անոգ ու տրտում։

Ե

Ո՜, Նորքում բարձրացած բարդի՝
Տերյանի նման մորմոքող.
Մենք կառչել էյինք մեր վոգով
Քո դեղին ու չեղկ սաղարթին.
Դա մեր յերգն եր վերջին, վոր թառած
Մեր յերկրի անպտուղ ծառին —
Ցնորում եր անմիտ մի յերազ՝
Կորրված անհուն աշխարհից...

Զ

Կանգնած եր բարդին հնավանդ
Բլուրի վրա հայրենի
Յեվ թվում եր հին մի ավանդ՝
Կտակած մեր մեռած հայրերից.
Հողմերի դիմաց անհավոր
Նա պահել եր չեղկ մի սաղարթ —
Յեվ թվում եր սաղարթը մեզ այդ
Ապաստան հողմերից անահոտ...

Է

Յեվ վոգին, Նայիրյան վոգին,
Տարրակի նման թևաթափ,
Ընտանի իր հին մորմոքին,
Հեծում եր իր վիշտը տևական, —
Հեծում եր Տերյանի ձայնով,
Նայիրյան այդ վերջին պոետի,
Թե չկա փրկության որ
Աշխարհում մռայլ ու մթին։ —

Ը

Թե խավարը պիտի խտանա
Յեվ պիտի բարձրանա քամին,
Վոր անհեղ մրրիկի նման
Մեզ պիտի վոտնատակ անի,
Պիտի պիրկ արմատից հանի
Այս բարդին, վորի սաղարթում
Նայիրյան վերջին գուսանի
Վոգին եր անից թպրտում...

Թ

Ո, վորքա՜ն եր մեզ հարազատ,
Դարերով պարտված մեր վոգուն,
Վոր տեսել եր հազար խարազան,
Բայց կրկին մնացել տոկուն, —
Ո, վորքա՜ն եր մեզ հարազատ
Այդ անը, վոր դարձած արդեն յերգ,
Խարխախի նման սրբազան
Մեզ պահում եր շղթայված իր հետ...

Ժ

Բայց ահա բարձրացավ մի որ
Այն հողմը — ուրագանն արյունոտ,
Սամումի նման ահավոր
Տարածվեց աշխարհի հունով, —
Վոտնատակ արավ աշխարհում
Բյուրավոր քաղաքներ ու շեներ,
Ավերեց յերկիրը մեր վողջ
Յեվ անապատ շինեց...

ԺԱ

Մանգաղի նման մահաբեր
Նա հնձեց որերում այն սև
Բարձրաբերձ այգեստանը մեր,
Մեր յերգի պարտեզը լուսե.—
Շարժելով մահու գերանդին՝
Նա հնձեց բերքի նման սուրբ —
Նայիրյան գուսաններ անթիվ,
Յեվ ամբողջ մի անմահ ժողովուրդ...

ԺԲ

Յեվ արդեն մոտենում եր մանգաղը
Մեր յերկրի սրբազան բարդուն,
Վոր կանգուն եր դեռ ցուրտ ու պաղ
Արարատյան դաշտում, —
Յերբ մրրիկ մի ուրիշ, փրկարար
Շառաչեց Հյուսիսից կենսաբեր —
Յեվ գարնան գետի պես վարար
Վողողեց լեռնաշխարհը մեր։ —

ԺԳ

Հողմերի հանդեպ այն դաժան
Մերկացել եր արդեն այն բարդին
Յեվ սաղարթը նրա սրբազան
Մահամերձ՝ տագնապում եր արդեն, —
Կացինի նման բարձրացած
Կախվել եր արդեն իր վրա
Հայրենի բռունցքը մի դաժան,
Վոր պիտի կործաներ նրան...

ԺԴ

Թռել եր արդեն իր միջից
Մեր յերկրի բարձրաբերձ վոգին
Յեվ պատրաստ եր արդեն իր վճիռ
Հեզությամբ ավանդել հոգին, —
Յերբ մրրիկը նոր, կենսաբեր,
Ցնցելով մերկ իրանը նրա —
Ներշնչեց կորով մի վսեմ
Յեվ կազդուրեց նրան։

ԺԵ

Առաջին անգամ այն որից,
Յերբ վերջին պոետը Նայիրյան
Իր քնքույշ յերգով որորեց
Ու փայփայեց նրան, —
Առաջին անգամ այն որից
Նա զգաց կենսատու մի շունչ,
Վոր գալիս եր սրբելու նորից
Իր սաղարթը մահաբեր փոշուց։ —

ԺԶ

Այն որից, յերբ յերգով տխրաբառ
Այն պոետը անցավ առհավետ, —
Մեզ յերգեց ուրիշ հրավեր
Աշխարհի հեռուն հրավառ.
Անձրևեց մեր հոգում ամա
Խնդություն մի անխորտակ ու վեհ —
Յեվ վոգին մեր թևաբաց թևեց
Դեպի այլ ցնորք մի անմահ։

ԺԷ

Մեր վոգին, վոգին նայիրյան,
Վոր գիտեր լոկ մորմոք ու լաց —
Առաջին անգամ թևարաց
Սավառնեց աշխարհում համայն, —
Մոռացած իր մորմոքը ունայն,
Իր բույնը թողած այն խեղճ —
Սավառնեց ճիգով մի անեղ
Դեպի աշխարհը լայն։ —

ԺԸ

Առաջին անգամ նա թռավ
Դեպի հուր հեռուներ անծանոթ
Գտնելու հրե մի անոթ
Ըղձերի համար իր հրակ, —
Տառաչող հողմերին այն ուրախ
Նա իր բորբ տենչանքը տվեց —
Յեվ լսեց յերկիրը նրան,
Յեվ հառնեց՝ ըմբոստ ու վեհ։

ԺԹ

Նո՜ր ջրեր եյին վարարել
Մեր յերկրի գետերում արդեն,
Յեվ մի ա՜յլ արև եր վառել
Մեր յերկրի հուրհուրան արտերը․
Յեվ մահու կացնից ազատված
Մեր յերկրի սրբազան բարդին
Հրահուր խնդությամբ լցված
Սպասում եր յերգի ու վարդի։ —

Ի

Բայց վոգին նայիրյան յերգի,
Հողմերի շնչով որորուն,
Աշխարհի խնդությամբ հրկեզ՝
Սավառնում եր յերկա՜ր դեռ հեռուն, —
Մենք յերկա՜ր, յերկա՜ր դեռ պիտի
Կիզվեյինք հողմերում հանուր,
Վոր մեր յերգը դառնար յերկաթե,
Յեվ վոգին մեր՝ անկոր ու անհուն։ —

ԻԱ

Ինչքան ե՜լ կարոտով անձուկ
Սպասեր բարդին մեր յերգին —
Մեզ մի ա՜յլ կարոտ եր խանձում,
Մի ուրիշ — անսահման յերկիր․ —
Յեվ մինչև դառնայինք կրկին
Մենք յերկիրը մեր՝ նո՜ր յերգերով —
Դեռ վորքա՜ն այն արևը փրկիչ
Մեզ պիտի կիզեր իր հրով։

ԻԲ

Յեվ ճախրում եր նա, մեր վոգին,
Մեր յերկրի դաշտերից հեռու,
Ունկնդիր աշխարհի մորմոքին,
Աշխարհի տագնապով յեռուն, —
Ուռճանում եր նա անհագուրդ,
Հրկիզվում աշխարհի հրով,
Ամբարում եր իմաստ ու խորհուրդ,
Վոր լցվի անհո՜ւն յերգերով։ —

ԻԳ

Յեվ այսպես յերկար սավառնեց
Մեր փողին հեռու-հեռուները,
Իր ամբողջ վեհությամբ հառնեց
Մոռացած մեր յերկրի առուները, —
Առաջին անգամ նա տեսավ
Բոլոր աշխարհը իր դեմ, ինչպես ծով, —
Հյուսիսից ճառագած լույսով
Թոթափեց դեմքից հին մոխիրը։ —

ԻԴ

Յեվ այժմ ահա նա կրկին
Դառնում ե դեպի հին իր տունը,
Վոր հզոր շառաչով յերգի
Աշխարհում՝ իր նոր խնդությունը։ —
Վո՛չ տխուր ե նա հիմա, վո՛չ խեղճ,
Վո՛չ անհուն աշխարհում կորած.
Նա բերել ե հուր մի անշեջ
Յեվ անահ գոյության յերազ։

ԻԵ

Նա յերգում ե այսօր հողմաձայն
Նվագներ մեր յերկրի համար նոր,
Յերգերում մեր շաչում ե հրցայտ,
Շեփորում ե պողպատե ձայնով, —
Աշունքվա յերգով վոսկեբառ
Վերհիշում ե մերթ իր մորմոքը,
Մեր գրած գրքերում արդար
Յերազում անմահ իր ցնորքը…

ԻԶ

Ո՜, դու չես այսօր մեր ցնորքը,
Նո՛րք, անո՛ղ մահացող ավան. —
Յելնում ե մի նո՛ր Յերևան
Յեվ նայում ե մեր նո՛ր վոգու խորքը.
Ո՜, ուրի՜շ, դա ուրի՜շ մի Նորք ե՝
Բարձրացած ճիգերով մեր այն —
Մեր վոգուց՝ թեկուզ նայիրյան,
Բայց ուրի՜շ խոհերով բոլորոք։ —

ԻԷ

Մեզ համար անհուն ու բուրյան ե
Ո՜, Նո՛րք, քո ցնորք-բարդին, —
Հարազատ ե հնում մեզ Տերյանը,
Ինչպես բույրը քո հին սաղարթի. —
Բայց սաղարթը այդ արդեն ծե՛ր ե,
Արդեն հուշ ե — մշուշ վոսկեման, —
Յեվ ամենը, վոր մի օր անցել ե —
Մեզ համար լոկ յե՜րգ ե հիմա…

ԻԸ

Մենք կոչված ենք այսօր, վոր համայն
Աշխարհի սրտում վոսկեհուն
Անվհատ շեփորենք հիմա
Խնդությունը մեր — քո՛ խոսքերով —
Մենք կոչված ենք հիմա, վոր քարիդ
Յեվ ջրիդ ինքնությամբ լցված —
Ավետենք համա՛յն աշխարհին
Այս առավոտը բացված։ —

ԻԹ

Ցեվ կաւչի թող հիմա մեր յերգը
Մեր բարդու բարձրաբերձ բնին,
Վոր յելնող աշխարհի համերգում
Ինքնահուն նվագներ ծնի, —
Վոր հավետ ապրի աշխարհում
Ո՜, Նաիրի, քո ցնորքը բույրյան, —
Այս թռիչքը մեր լայնահուն
Ցեվ բարբառը այս նայիրյան...

1933. I. 24.

ԱՐՎԵՍՏ ԲԵՐԹՈՒԹՅԱՆ

1933–1934

Սոնէտ

Ո՛, դո՛ւք, փողբալի՜ պնակալեզներ…
«Դաշնակցականներին»

Դժվար, դժնի տենդով գրել եմ յես յերգերըս,
Իբրև հոգնած մշակ՝ տարել եմ յերգըս յես
Ուղիներով կյանքի թե՛ մառ, թե՛ մութ, թե՛ կեղ,
Յեվ տքնությունն հաճախ ինձ արևից զրկել ե։—

Բայց յես սիրել եմ հար—և արևոտ իմ սերը
Դեպի Արվեստը իմ՝ յեղել ե բորբ ու թեժ.
Վառել եմ սիրտս միշտ, իբրև անդին մի խեժ,
Վոր մշտավառ մնան մեր քերթության լույսերը։—

Ո, դուք, վոր բիրտ ու բութ՝ քարկոծել եք ինձ միշտ—
Ձե՛ք պատճառել յերբեք ինձ տխրություն ու վիշտ.—
Ձեր խավարի հանդեպ—վոգիս ընդմիշտ հրակ ե։—

Յեվ յես կարող եմ լոկ ձեզ դիֆիրամբ յերգել,
Ձեր խավարին խոցող, արշավանքին ձեր սև,—
Վոր բորբոքել ե միշտ իմ լապտերի կրակը։—

1933. IX. 20.

NOSTALGIA

I

Յերազում եմ յես լուսավոր մի գետ,
Մարմարյա տներ ափերին Նրա, —
Շրջում են շուրջը չքնաղ աղջիկներ,
Իմ կյանքի մասին պատմելով իրար...
Դարեր են անցել արդեն, ինչպես գետ,
Յեվ յերգերս պարզ՝ այդ դարերի հետ
Հասել են մինչև ափերն այդ վսեմ,
Գալիք աշխարհի ափերը լուսե։ —
Իմ յերազներում հաճախ եմ տեսել
Յես գետն այդ վսեմ և յերթը լուսե, —
Յեվ միշտ, յերազում, թե խոհերում պարզ —
Թվացել է այդ — ցնորք ու յերազ...

1933. XI. 30.

II

Իմ վոսկի, վոսկի իմ Իրան...
«Զարենց-Նամե»

Այն ափերում, ուր դու, — ո, տարիներ առաջ, —
Թափառելով՝ սիրո յերգեր եյիր գրում
Յեվ գուրգուրում, իբրև սերունդների յերազ
Ա՛յն, վոր թաղված մնաց քո գրքերում, —
Այն ափերում հիմա մի բարբարոս հովիվ,
Յերազելով քեզ պես կնոջ գգվանք ու սեր —
Ունկնդրում է միայն շշուկներին հովի,
Յեվ, յերգերի տեղ քո, յերգում անբառ մի շեր...

1933. IX. 18.

*

Թումանյանի յերգերը
Կարդալիս՝ միշտ յես
Միտք եմ անում, թե արդյոք
Կարող եմ յես էլ
Լինել այդքա՞ն իմաստուն,
Յերբ լինեմ ծեր...

Կարողանա՞մ պիտի յես
Արդյոք, ինչպես նա,
Այդքան հանգիստ ընդունել
Թե՛ անկում, թե՛ մահ.—
Շա՛ղ տալ ձեռքով լիառատ
Յերգեր ու գանձեր,
Իմաստությամբ անարատ,
Յերբ լինեմ ծեր...

1934.

*

Գիշերային պահերն այս քո,
յերբ լապտերի նման վառ
Հուրհուրում է քո մեջ վոգին
ստեղծագործ ու պայծառ —
Չարժե՞ն արդյոք տառապանքին
ու տրտունջին այս անվերջ
Յեվ մարդկային հերյուրանքին՝
անմարելի ու անծայր...

1934. IV. 12.

*

Կարծում են նոքա, թե մի որ քո յերգին նվա-
ղում կգա, —
Չգիտեն խեղճերը, վոր դու նման ես յերկրիդ
գետերին․
Քանի կա լյառն Արագած և քանի աշխարհում
դու կաս —
Դժվար թե ցամաքեն յերբեք ակունքները քո
Ջինջ յերգերի...

1933—1934

*

Յեթե փակվեն հավիտյան աչքերդ այսոր—
Չես տրտնջա դու մահից, վոր տանում է քեզ․
Գիտես, վոր խեղճ է հավետ, անոգ ու անզոր
Մահը քո դեմ, քո վոգու՝ անխորտակ ու մեծ։—
Չի՝ ինչ ավել է կյանքում ընութթյունը քո
Աննինջ վոգուն—դու նրան արվեստով վսեմ,
Վեհ քերթությամբ զարդարուն—յետ ես ավել
կրկին,
Իբրև ցնորք, իբրև յերգ՝ անմահ ու լուսեղ...

1934․ IV․ 12․

*

Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալում—լուսավոր ու վեհ,
Ինչ ունի այսոր, ի՛նչ ցնորք ու խոհ—
Վո՛ղջը հավաքել և քե՛զ է տվել։—

Տվել է, վոր դու այդ ամենը այս
Որերին խառնած, խոր հավատքով լի՝
Պարզես գալիքի ցնորքին անհաս—
Յեվ ընդմիշտ մնաս մեծ ու սիրելի։—

1933. VIII. 10.

*

Դու գիտես, վոր քո մատյանն այս վերջին
Վո՛չ թե օրերի համար ես գրել,
Այլ տարիների՛ հեռակա ու ջինջ,
Յեվ դուցե, անգամ, դարերի՛ նորեկ։—

Քանզի քո դարում ի՛նչ վոր կար զգաստ,
Յե՛վ հուզումնավոր, և՛ խորունկ, և՛ վեհ,—
Դրել ես անմեռ մատյանում քո այս—
Յեվ ա՛յս է քեզ թափ ու թռիչք տվել։—

1933. VIII. 9.

ՄՈՆՈՒՄԵՆՏ

Յես մոնումենտ կանգնեցի ինձ համար դժվար մի դարում
Յերբ կործանվում եր իմ շուրջը այն ամենը, վոր բազմաթիվ
Տարիներ, դարեր եր կանգնել — և անմահ եր թվում աշխարհում։

Իմ մոնումենտն հյուսեցի յերգերից յես խոր ու խրթին,
Խոհերից, վոր բորբ են ու նոր, վոր կյանքն են կրում իրենց մեջ,—
Վոր հորդելով բղխեցին իմ դարի բորբոքուն սրտից։ —

Ծնվեցի յես Ղարսում, սակայն՝ իմ հոգում արևն Իրանի
Հար հուրհուրաց, իբրև հին, հայրենի կարոտ մի անմար,—
Բայց հայրենիքը վոգուս—բովանդակ աշխարհը յեղավ·—

XII. I. MCMXXXIV.

ԳԻՐՔ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ

ՌՈՒԲԱՅԻՆԵՐ, ԴԻՍՏԻՔՈՍՆԵՐ, ԲԵՅԹԵՐ

1933—1934

ՌՈՒԲԱՅԻՆԵՐ

Ա

Այսպես՝ այս ուշ ժամին յեկավ
և մոտեցավ քո վոգուն
Իմացության, կշռույթների
գիշերային անմահ բուն. —
Ախ, դեռ ինչպես ամենատես
Իմաստունն ե այն ասել —
Գիշերով ե յելնում վորսի
այդ Թռչունը իմաստուն։

—

Բ

Ո՜վ իմաստուն, այդ շերեփով
չե՛ դատարկվի այս կաթսան.
Քանի՛-քանի՛ իմաստուններ
և հանճարներ անսասան
Այդպես՝ միայն հայեցումով
այն ձգտեցին դատարկել,—
Յեվ ո՛չ միայն հատակն, այլև—
մակերեսը չտեսան։—

—

Գ

Դո՛ւ, յես միայն և միայն դու,
ո՜վ պայքարող դու վոգի,
Վոր հավիտյան հուրհուրալով,
ինչպես խարույկ մորմոքի.
Վառում ես միշտ ու բորբոքում
խիղճ ու տենչանք անհագուրդ —
Յեվ չե՛ս լինի դու յերբեք մութ,
վորքան ել մութը չոքի։

—

Դ

Այս խոհերի, այս գրքերի,
այս մտքերի աշխարհում
Կա մի արև անեզրական,
որ չի իջնում ու մարում.
Վառվում է նա լույսով անմար
և ջեռ պահում մեր վոգին
Ստեղծագործ հրով անճառ՝
անգետ չարին ու բարուն։—

—

Ե

Մեր քերթությունը՝ մեր դարի
ընթացքի հետ միասին՝
Առընչվելով մեր տենչերին՝
յերգ է ասում մեր մասին.
Յեվ լինում է յերգը այնքան
բարձրահուն ու բարձրախոհ,
Վորքան լինի դաշինքն այդ խոր,
միաձույլ ու միասիրտ։

—

Զ

Դու Տերյանից սովորեցիր
                    լսել տրտունջը վոգու,—
Ա՛յն, վոր մեր մեջ նվում է միշտ,
                    գանգատվում ու մորմոքում.
Բայց արդ՝ քո մեջ ծայր է առնում
                    այլ մեղեդի մի անվերջ.—
Թումանյանի հուրն է անշեջ
                    քո կրակը բորբոքում—

—

Է

Ա՜խ, շռայլ է լինում վոգին—
                    լոկ մի՛ անգամ իր կյանքում.
Յերբ վառվելով, մոխրանալով՝
                    իր վախճանին է հանգում.
Լինում է միշտ դա լույս, անվիշտ
                    և յերջանիկ այն ժամին,
Յերբ իր մահով՝ խինդով, ահով՝
                    ծնում է աստղ իր հանգույն։

—

Ը

Չի՛ շղթայվի մարդու վոգին
վո՛չ մի կապով արտաքին,
Յեթե դարի, ժամանակի
զրահ ունի իր հոգին.
Կբարձրանա ու կկանգնի
նա հավատով անսասան
Յեվ կմնա գալիք կյանքում
անխորտակ ու ահագին: —

—

Թ

Ամեն պոետ՝ գալիս՝ իր հետ՝
մի անտես նետ է բերում,
Յեվ նետն առած, խոհակալած—
վորս է անում յերգերում.
Բայց դառնում է պոետ նա մեծ
վո՛չ թե նետի մեծությամբ,
Այլ նշանի՛ ահագնությամբ,
վոր հանճարներն է սերում: —

—

Ժ

Յեղե՞լ է յերբ, վոր քո մտքում
հուրհուրացող խոհ մի խոր
Գրի առած՝ լինի այդքան
ինքնարավ ու այդքան նոր.—
Ա՜խ, բույր ունեն խոհերը մեր,
ունեն կշիռ, ունեն խորք,
Բայց գրքերում դառնում են լոկ—
ցոլք ու ցնորք հեռավոր։—

—

ԺԱ

Զգում ես, վոր՝ անհուն ու խոր՝
ինչպես մի հանք անսպառ,
Բացվում է հար, անհով, դժվար,
ու խորանում քո վոգին.
Դեռ ի՜նչ գանձեր — անհուն, անծիր —
պիտի հանես դու աշխարհ,
Յեթե անդուլ կյանքիդ վրա
անդուռ գիշեր չչոքեր։ —

—

ԺԲ

Առուներով, գետակներով,
վտակներով անհամար
Հորդում են հար ու կուտակվում
քո մեջ խոհեր ու զանձեր.—
Այդպես գետերն են գոյանում
վտակներից աննշմար,
Անհատնելի ու անդադար,
անկերպարանք ու անձեւ։—

—

ԺԳ

Խոհն անդադրում է կուտակվում,
անկշռելի ու անտես.
Չի յէնթարկվի նա հոկումի,
վորքան էլ հուսը բանտես.—
Բայց ինչքան էլ հախուռն զգաս
դու կուտակումը վոգուդ—
Ցերգերիդ բերքը հնձելիս
պետք է դու քեզ կաշկանդես։—

—

ԺԴ

Նրանք գալիս են միշտ լուռ,
    պատահաբար ու անձուկ.
Յեվ վո՛չ մի խոհ չի գալիս,
    յերբ տարաժամ ես կանչում.
Սիրուհիներն են այդպես
    այցի գալիս մեզ հաճախ —
Անակընկալ, ինչպես կայծ
    վոր թռչելով ե՜ խանձում։—

—

ԺԵ

Ո՞վ իմանա, յե՞րբ ե մարդ
    դառնում այսպես իմաստուն.
Հասակի՞ց ե արդյոք այդ,
    թե ճանապա՞րհդ ե ազդում.
Այդպես ցորենն ե լցվում
    հատիկներով վոսկեհատ.—
Ո՛, հանճարեղ ակընթարթ,
    դու ընթացք ես — ու վոստում։—

—

ԺԶ

Հե՜յ, անցյալի յերգասաններ,
վորքա՜ն եք դուք յերազել,
Վոր մարդկային կյանքը դառնա
յերգի պարտեզ մի լուսե.
Հասնում ենք մենք անա շքեղ
այդ օրերին յերազած, —
Չե՜նք մոռանում սակայն մենք ձեր
գործն ու վաստակը վսեմ։

—

ԺԷ

Արեւմուտքում, Գուտենբերգի
հայրենիքում հարազատ,
Խարույկներ են վառում այսոր,
այրում գրքեր բյուրհազար.
Այսպես՝ նրանք, վոր սրբազան
արշավանք են քարոզում
Ընդդեմ յերկրի մեր հոյաշեն —
դառնում են հոն ու գազան։

—

ԺԸ

Ո՜վ յերգիչներ մեր մեծ յերկրի,
յեղե՛ք զգաստ ու արթուն.
Տրված է ձեզ յերգել խինդը
և աշխատանքը մարդու.
Մեծ Հայնեյի հայրենիքից
յերգի վոգին վտարվեց —
Դո՛ւք պիտի արդ բոլբոք պահեք
քերթությունը զվարթուն։—

—

ԺԹ

Ո՜վ Արևմուտք, վոր դարերով
հայրենիքն ես յեղել մեծ
Հանճարների, — դարձել ես արդ
խժդժության մի կրկես.
Բայց տեսնում է հայացքը մեր
հրդեհներում այդ անեղ —
Այգաբացեր անեզրական,
վոր դու կրում ես քո մեջ։ —

—

Ի

Հորիզոնի վրա կրկին
ամպեր են մութ ծանրանում.
Մահն է կրկին վոխակալել՝
մռայլ նստած դարանում.
Պատրաստվում են անկում կարդալ
մեր աշխարհին հոյաշեն —
Չե՛ն հասկանում սակայն, վոր մեր
հաղթանակն է նորանում։

—

ԻԱ

Վերջին անգամ պատմությունը,
մի թուխչքով գեղեցիկ,
Մեր ձեռքերով փորձեց մի նոր
մարդկային կյանք կառուցի.
Կրկի՛ն ահա հավաքվում են,
վոր արյունով ու հրով
Կյանքը հրեն յետ՝ դեպի հին
ովկյանոսը սառուցի։

—

ԻԲ

Չէ՛ ընթանում սակայն յերբեք
պատմությունը դեպի յետ.
Ի՛նչ վոր կյանքում վեհ է ու լավ —
մեր մեջ է արդ ու մեզ հետ.
Գազանային վոհմակներով
ինչքան էլ գան՝ պիտի լոկ
Արագացնեն մահն իրենց սև —
ու չքանան առհավետ։

—

ԻԳ

Մենք քանդեցինք. կործանեցինք
աշխարհը հին իր հիմից,
Կամքը մարդու ստեղծագործ
կուտակեցինք մենք ի մի. —
Եվ ի՛նչ պատնեշ կարող է մեզ
մեր ընթացքից բաժանել,
Յերբ մեր վոգին բանտից անել
անդարձ հանել ենք հիմի։

—

ԻԴ

Պատմությունը տվել է մեզ
ուսուցիչներ յերեք մեծ.
Մեկը — դեռ հին կապանքներում
միտք ու ընթացք մեզ տվեց.
Մյուսն յեկավ ու կործանեց
կապանքները մեզ գերող,—
Կերտում է կյանք նրանց հունով
Ուսուցիչը մեր յերրորդ։

1934. II—IV.

ԴԻՍՏԻՔՈՍՆԵՐ

Auf, ihr Dichstichen, frisch...
Goethe

I

Մա՛րդ, բարձրախոհ դու յեղիր, պայքարի՛ր դարեդ առընթեր,
Բայց քնքշությունըդ յերբե՛ք քեզ առաջնորդ չկարգես։ —

II

Սի՛րտ, քնքշությո՜ւն, սանտիմե՜նտ, — յե՛րգ, և՛ ցընորք, և՛ թախիծ...
Վո՞նց ապրեցիր աշխարհում, այս ահեղ դարում դու, Տերյա՛ն։ —

III

Յերգդ թեթև եր, — ասում ես, — և կյանքդ միայն դժվարին եր.
Բայց — հավատա՛նք մենք արդյոք, վոր «թեթև եր արվեստդ՝ խնդում։» —

IV

Նուրբ էր արվեստը, չքնաղ, — բայց — մեր դա-
    րում հարկավոր էր
Վո՛չ թե սրտի քնքշություն, այլ — վոգու կռիվ
    ու պայքար: —

V

Կա Մեծարենց, կա Տերյան, — և բազում ուրիշ
    պոետներ կան,
Բայց — Թումանյա՛նն է անհաս Արարատը մեր
    նոր քերթության: —

VI

Մեր պատմության դառնաշունչ, չար ու խորշակ
    գիշերում
Վո՛նց է ծաղկել զվարթուն մեր քերթությունն
    հնամյա: —

VII

Վարժ ու հմուտ վարպետներ, ճարտ հանճարներ
    անանուն
Վառ և անմար են պահել մեր քերթությունն հա-
    վիտյան: —

VIII

Յերգը այնժամ է միայն քերթողի՛ց իր և դարի՛ց
    իր անցնում,
Յերբ առընչվում է կյանքին հուր միջուկով՝ իր
    անանց: —

IX

Ինձ զազրելի՛ յե ընդմիշտ այդ· խղճուկ, գավառցի
    վիպասանը,
Վոր տիեզերք է կարծում — իր գավառը խեղճ —
    և իրե՛ն: —

X

Վո՜չ ակունքները Դելփյան, վո՜չ կախարդանքը Պանի
Չեն հուշակի քեզ պոետ, յեթե խորթ ե վոգուդ—առորյան: —

XI

Այգը բացվեց աշխարհում, յերբ դու դեռ քերթող եյիր լոկ, —
Այժմ կեսոր ե արդեն, — ժամ ե դառնաս իմաստուն: —

XII

Վա՜ղ արթնացիր, սերմնացան, — այս պատվերը հնուց քեզ տրված ե.
Բայց ունե՞ս աչքեր սրատես, վոր մթնում հերկերը տեսնես: —

XIII

Դու այս մեծ այգում բարձրացար. — ունեցի՛ր աչքեր սրատես,
Վոր աճես այգին առընթեր — և կըդառնաս դու անմահ: —

XIV

«Փոխելն ե կյանքի կարևոր» — բարբառել ե մեր մեծ Ուսուցիչը·
Անսալով խորհուրդին նրա՝ պոետները... հանգերն են փոխում: —

XV

Ո՜վ միամիտ յերգիչներ· վոր կարծում եյիք, թե դո՜ւք եք
Մեր կյանքում ուղիներ հարթում — յերբ կյանքն եր ձեզ տաշում ու հարթում: —

XVI

Ո՛վ հանճարեղ Առաջնորդ, յես գիտեմ, վոր հատու
քո կամքը
Աշխարհում ուղի յե հարթում — նաև ինձ համար
և յերգիս։ —

XVII

Դու հասկացար, վոր անեղ այս պայքարը՝ կյանքը
փոխող —
Հանճարով է լցնում քո վոգին — և դարձար պոետ
իմաստուն։ —

XVIII

Այս պայքարում ստացար դու խոհեր, յեռանդ ու
կորով. —
Թե չլիներ այս ամենը — ի՞նչ եյիր կյանքում դու
հիմա։ —

XIX

Ձիրք՝ քեզ Իրանը տվեց, խոսք՝ Նայիրին հնա-
մյա, —
Բայց Հոկտեմբերը կոչեց քեզ հանճարեղ բանաս-
տեղծ։ —

XX

Դուք դարձրիք ինձ հարուստ, և լցրիք ավյունով
հեք վոգին իմ,
Կյանք, և՛ դաշինք, և՛ խոհեր, — գործ ու պայքար
ընդհանուր։

XXI

Ի՛նչ վոր գտնես այս գրքում, ինչ մտածմունք ու
խորհուրդ —
Վողջը հանած համարիր — քո որերի մատյանից։ —

XXII

Քո հանճարով բարձրացար դու դարից քո, կյան-
քից, քեզանից իսկ. —
Վա՜նց քո վոգին չմեռավ — յեղկ ու չնչին Վայ-
մարում: —

XXIII

Յերբ փոթորիկը պայթեց — ամպրոպից սարսեց
Իմաստունը. —
Զըմբռնեց, վոր քայլ է դա մի — դեպի դաշնու-
թյունն իր ուղած:

XXIV

Քո դարի մեծագույն առաջնորդը քեզ ասաց տես-
նելիս. — «Ահա Մարդը». —
Քեզ հասկացավ նա, սակայն — հասկացա՞ր ար-
դյոք դու նրան: —

XXV

Դեմ յելան իրար մի անգամ — հանճարեղ պոետն
ու ռազմիկը. —
Ճանաչեց մարդուն, հանճարին — հանճարեղ ռազ-
միկը միայն: —

XXVI

Հասկացա՞վ ռազմիկը, վոր դու — իր կոփած աշ-
խարհի մարգարեն ես.
Զըմբռնեց քո վոգին, վոր նա — ճանապարհ է
հարթում քեզ համար:

XXVII

«Վո՜չ կա միջուկ առանձին, վո՜չ կեղև — դրանք
միասին են». —
Դա՜շն եյին սակայն իրար հետ — քո կեղևն ու
միջուկը, Վարպետ: —

XXVIII

Դու ձգտում էյիր դաշնության, յերբ անդա՛շն էր
շուրջդ կյանքը. —
Ա՛յս է ահա, վոր հնում — սիզիֆյան աշխատանք
էին կոչել։ —

XXIX

Մեծ դաշնությունը վոգու — դու՛րսը, կյանքո՛ւմ է
կոփվում. —
Դաշն է վոգին աշխարհին — այդ մարտին մաս-
նակից ես յեթե։

XXX

Սեր, և՛ պայքար, և՛ քնար, — միասին եք դուք,
միասին եք. —
Դղյակներո՛ւմ է ապրում յերգը՝ սրից առանձին։—

XXXI

Կարո՞ղ ես քեզ կոփել այնպես, վոր քո մեջ ամ-
փոփես անցյալը,
Բայց և լինես ներկայում — նոր, քան նորերը
բոլոր։ —

XXXII

Ո՜վ հանճարներ վիթխարի, — Դա՛նթ, Հոմերո՛ս,
Ալեքսա՛նդր, —
Ձե՛րն էր արոտն յերեկվա, — ձե՛րն է և հունձքը
վաղվա։ —

XXXIII

Ուզո՞ւմ ես բարձրա՛նալ քո դարից. — ուրեմն վո-
գով դու պիտի
Թե՛ անցյալը զգաս հարազատ — և թե նոր լինես
ներկայո՛ւմ։ —

XXXIV

Ֆա՜վն, ու նիմֆեր, ու սրինգ, — յերգ և տավիղ
քաղցրաձայն...
Մի՞թե աղբյուրդ չունե՞ր — տխուր ու թախիծ, Ապո-
ղո՞ն: —

XXXV

Դա՛փնիս ու Քլոյա... Հիմա — մեզ համար մնացած
մի լեգենդ է
Սերն ու մորմոքը ձեր ջինջ, — ել ինչո՞ւ յե ձեր
վեպը հուզում:

XXXVI

Վո՞նց իմանար Հոմերոսը, վոր — կործանվի յերբ
Տրովա՛դան —
Քեզ է ավար մնալու վողջը, «Թշվա՛ռ Թերսիտես»: —

XXXVII

Դու արձագանքն ես լսում այսօրվա մարտերում
խոսքերի՛ այն,
Վոր — Թերսիտեսն է ասել զորքերի առաջ դեռ
հնում: —

XXXVIII

Վո՛չ Աքիլլեսը մարմար, վո՛չ լուսե Պատրոկլը, վո՛չ
Ուլիսը, —
«Բութ» Թերսիտեսն եր անմահ քո հերոսը միակ,
Հոմերո՛ս: —

XXXIX

Ա՜խ, արթնանում է հաճախ ձեր — մեռած հա-
մարվող. —
Կյանք, քո ծիլերը հաճախ — հին կերպարանք են
հագնում: —

XL

Դուք սավառնում եյիք վեր, կյանքը՝ տավիղ ան-
վանում, —
Բայց — ձեր կյանքում և յերգում կա՞ր դաշնու-
թյան արդյոք հետք։

XLI

Ո՞վ յերգասան այսօրվա, տենչիր հնին, թե
կարող ես
Պանթեոնը վողջ, բայց այնպես, վոր — չմթնի քո
վոգին։ —

XLII

Ո՛վ կամենում է, վոր իր ծնունդից սկսվի այս
կյանքը —
Թող իմանա, վոր իր հետ — այն կմեռնի հավի-
տյան։ —

XLIII

Մի՛շտ էլ կենարար է յեղել մարդը կյանքում — և
կարծել է,
Վոր — իր ներկան է տալիս միտք ու իմաստ
անցյալին։

XLIV

Լա՛վ իմացիր, վոր յեթե դու ուզում ես մի օր
չտեսել —
Քեզ լոկ ողջ համարիր, — և վո՛չ թե սկիզբ կամ
վախճան։ —

LXV

Շատ եր հարուստ խոհերով, հույզերով ու հրով
իմ դարը. —
Կույրն ու հիմարը միայն կարող եր մնալ ընչա-
զուրկ։ —

XLVI

Քո ժամանակը ուներ խոհ — ամենից ավելի, —
Բավ էր կապվել նրա հետ, որ դառնայիր իմաստուն։ —

XLVII

Շատ գաղտնիքներ բացվեցին, որ յերեկ դեռ մթին հանելուկ էր, —
Տաղտկալի՞ դարձավ արդյոք կյանքը. — ո՛չ, խորացավ ավելի։ —

XLVIII

Խոր ու խրթին խնդիրներ, որ յերկնում էին հանճարները —
Պարզ ու հատու լուծվեցին — բիրտ ու անհաշտ պայքարով։ —

XLIX

Ա՛յն, որ մտքով ձգտեցիք դուք հասկանալ ու հայել, —
Մենք պայքարով լուծեցինք — և տիրացանք աշխարհին։ —

L

Դու կարո՞ղ էյիր ըմբռնել, որ հարցը «եյության և ձևի» —
Հարց է հողի ու հացի — և լուծվում է անհաշտ պայքարով։ —

LI

Դարը մեզ մուրհակ է տալիս, — բայց այդ փակ մուրհակի հատուցումը
Սերունդներն են ճշտում ապագա — և շատերն են սնանկ հռչակվում։

1934. IV. 16—18.

Բեյթեր

Ա

Ո՜վ յերգասան, կյանքդ յեթե յերգ ու գինի յեր,—
Քանի՞ մարդու կյանք քո դարում — վերքի սինի յեր։ —

Բ

Դու ասացիր՝ հող կդառնան շա՛հ ու նոքար, Հաֆի՛զ, —
Ինչո՞ւ էլ դու կին սիրեցիր, ռանդ ու ռուքար, Հաֆի՛զ։ —

Գ

Կյանքի իմաստը գինու մեջ ու ջանի մեջ դու փնտրեցիր, —
Բայց, ո՜վ Խայամ, կինն ու գինին քյուլհանի մե՞ջ դու փնտրեցիր։ —

Դ

Վոսկեզոծել է բազում շահերի քո շահիրական ջանքը, Ֆիրդուսի՛,
Բայց չեղա՜վ մի շահ, վոր վոսկեզոծեր քո անօգնական կյանքը, Ֆիրդուսի՛։ —

Ե

Շահնշահերի արշավանքների գովասանքը բոլոր
Զրվոսկեզոծեց վո՞չ քո մահը՞ խեղճ, վո՞չ քո կյանքը վորբ։

Ձ

Խոսքդ յեղավ զառ ու զառբար, Սայաթ-Նովա, —
Բայց չունեցա՛ր յար ու շարբաթ, Սայաթ-Նովա։ —

Է

Վոսկե բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շա-
րել ես դու. —
Քեզ միայն քո յարն է վառել, — քանի՛ յարեր
վառել ես դու։ —

Ը

Վո՞ր շահն ունի այդքան վոսկի ու անգին քար,
Սայաթ-Նովա, —
Չի՛ ունեցել քեզ պես շռայլ խալխը՝ նոքար, Սա-
յաթ-Նովա։ —

1934. IV. 16—18.



ՏԱՂ ՍԻՐՈ

ՁՈՆՎԱԾ ԱՊԱԳԱՅԻ ՊԱՐՄԱՆԻՆԵՐԻՆ

Ա

Յուրաքանչյուր անգամ, երբ գարունը բաց-
վում է
Յեվ նոր կյանք է մտնում նոր մի սերունդ—
Արեգակը թվում է ծնծղա և երկիրը բուրում է
Անկրկնելի բույրով բոլոր պարմանի սրտերում։—

Յուրաքանչյուր անգամ և ամենայն ուրույնու-
թյամբ,
Յուրաքանչյուր անգամ տարբեր ու առանձին,
Յուրաքանչյուր անգամ անհո՜ւն մի թարմու-
թյամբ,
Յեվ յուրաքանչյուր անգամ — անծիր...

Ո՛վ դու, որ առաջին անգամ իբրև քեզ ընծա-
յած
Յեվ միայն քեզ համար սահմանած մի բարիք—
Ընդունելու ես կույսի խոստումնալից հայացքը
Քո օրերի դժնյա ճանապարհին, —

Որ երբ տոթ վողկույզ՝ ճմլելու յես շրթերը
Յեվ գգվանքները դեռ դաշն քո ընկերուհու —
Անհավասնկ յերգում եմ յես մեղսական քո սերը,
Իբրև հավերժական խորհուրդ…

Բ

Մեզ բոլորիս համար սահմանված է վերուստ
Մի քնքշաբույր գարուն անվերադարձ,
Յերբ յուրաքանչյուր վայրկյանը և՛ գյուտ է, և՛
կորուստ,
Յեվ դաշտ է արևանիստ, և՛ խավարով հղի մի
անտառ։ —

Յեվ դու, վոր մտնելու յես արևային քո դաշտը՝
Քաղելու վարդեր ու մանուշակներ —
Փառք քեզ, յեթե լինես քո որերի հետ դաշն
Յեվ որերից հանդեպ յերկաթյա քղանցք չհագ-
նես…

Յեթե յերիտասարդ լինես վո՛չ միայն սրտով քո,
Վո՛չ միայն մարմնով և վոգու անգիտությամբ,
Այլև յուրաքանչյուր քայլափոխից քո հետքով
Ժամանակը քայլե և վողջունե քո յերթը՝ խնդու-
թյամբ։ —

Վորովհետև վորքան էլ գարունքդ հուրհուրա
Յեվ դափնիներ ցանե ճանապարհիդ անցած —
Պարտավոր ես, ո՛վ յերիտասարդ, դու ինքդ նրան
Վոսկեզօծել սիրով անագորույն և ընթացքով
պայծառ…

Գ

Ուրեմն քայլի՛ր թեթևաքայլ քո դաշտով գարնա-
նային
Յեվ թո՛ղ գարունը քայլե քո հետքերով,
Յեվ անվախ դու, ո՛վ յերիտասարդ, ապագային
նայիր՝
Վայելելով պտուղը ռոշնական քո առաջին սիրո։

Յեվ վայելելով պտուղը ռոշնական քո առաջին
սիրո՝
Կարո՞ղ ես չզգալ դու, վոր հետզհետե
Հանձնվում է քեզ կյանքը — և դու
Պարտավոր ես քո հաղթ ուսերից այն գետին
չնետել։ —

Վորովհետև կամուրջ է քո սերը և վո՛չ յերբեք
յեզերք,
Յեվ վարդերը սիրույդ մարգագետնի խոստումներ
են ունայն —
Յեթե սերը հողե ընկերուհուդ չդառնա ցուլքը սեգ
Այն վիթխարի ու վսեմ ադամանդի, վոր տալիս
է մեզ կյանք…

1933. II. 24.

Տաղ Յեկվորներին Վողջունելու Համար

Վողջո՛ւյն ձեզ, վողջո՛ւյն ձեզ, ո՛վ անծանոթներ,
Վոր գալիս եք անվերջ ու անվերջ մտնելու այս
    հին դարբասներից,
Գալիս եք միշտ ու հավիտյան և բերում եք ձեզ
    հետ
Պարգևներ անհուն ու անհատնում և, ո՛վ գիտե,
    թե ի՛նչ բերքեր անտեսնելի...

Յուրաքանչյուր վայրկյան մտնում եք մեր տունը,
Մեր հինավուրց պարտեզը, վոր դեռ բազմաթիվ
Աներեր ճյուղքեր ունի, և ուր խնդությունը
Չի իջնում, իբրև ցող, կամ յերկնային բարիք,
    բոլորի ճակատին։ —

Այս հինավուրց պարտեզը դեռ խառն է ու խոլ,
Յեվ անգամ ծառը գիտության
Պահանջում է ջանք ու խոնջենք, վոր ճյուղքերը
    ծռի
Յեվ մատուցե պտուղներ վայելքի և վոստեր ի-
    մաստության։ —

Յեվ խոնջենքից անքուն, և ոգնությունից բացի
Արյամբ ու դժնությամբ է, վոր յուրաքանչյուր
    ճյուղքը
Հառնում է խավարից և նայում լուսաբացին՝
Ընծայելով կաթիլ առ կաթիլ իր դառնագին հա-
    ճույքը։ —

Յեվ վորքա՛ն դեռ, վորքա՛ն դեռ ջանքեր են հար-
    կավոր,
Յեվ վորքա՛ն ոգնություն ու անկարելի խոյանք,
Վոր պարտեզի յուրաքանչյուր բույս հողը դառնա
    արգասավոր
Յեվ յերջանիկ դառնա մեր կյանքը...

Քայլելով յերկաթյա և անդրդվելի յեկե՛ք ուրեմն,
    ո՛վ դուք,
Նե՛րս խուժեք գնդերով խուռներամ այս հին դար-
    բասներից,
Յեվ թող ձեր յերթը հսկի ապագայի Ղովտը,
Վոր յերբե՛ք դուք յետ չնայեք՝ ձեր լեռան կեսին
    հասնելիս...

Վոր անխախտ ու հաստատ ընթանաք այս ուղին
    անծայրածիր,
Այս ճանապարհը՝ ձեզ ի վերուստ սահմանած, —
Վոր այնքա՛ն հոգնությամբ ճաշակած ձեր հա-
    նապազորյա հացը
Ունայնության սաղմով չդառնանա...

1933. II. 25.

ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՂ ՅԵԿՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դուք գալիս էք աստղերի նման և ցորյանների նման,
Ալիքների նման անեզր ովկիանի,
Գալիս էք ճաշակելու ունայնություն ու մահ,
Յեվ տրտմություն, և՛ վիշտ, և՛ վոգու դառնություն աներջանիկ։ —

Բայց և գալիս էք դուք ընձեռելու այստեղ,
Իբրև բախտ անմահական և բեղմնավոր բարիք—
Այ՛ն, վոր չունի ցորյանը, և չունեն աստղերը —
Ստեղծելու հմայքը հոյակապ ի վերուստ մեզ տրված այս ճանապարհի...

Թեև գալիս էք դուք ալիքների նման և աստղերի՝
Ձեր ճանապարհին, ձեր կոչումին, ձեր ընթացքին անգետ —
Բայց լինելու յե ձեր յերթը այս դժնի ու լուրթ ափերին
Արևներից, աստղերից ավելի ուրույն ու բարձրականթեղ...

1933. II. 26.

ՏԱՂ ՁՈՆՎԱԾ ԽԻԶԱԽ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՆ

Ահավասիկ հագած ուղևորի զգեստ,
Յեվ ձեռքիդ ցուպ առած, և ուսիդ մաղախ —
Դու գնում ես դեպի հեռուները վսեմ,
Յեվ կորովի յե վոգիդ, և դեմքդ հանդիստ է, և հայացքդ՝ կապույտ ու խաղաղ։ —

Թե ինչ մաքառումի, կամ ինչ չտեսնված
Հեքիաթային ու բարձր մեծագործության
Ճանապարհ ես ընտրել, — մեզ կպատմես միայն
Վերադարձիդ, յեթե վերադառնաս և վոտքդ չդիպչի փորձության։ —

Յեթե վերադառնաս — հայացքներում քո լուրթ
Դու կբերես անհուն հորիզոններ,
Անհայտ հեռուների ովկիաններ կապույտ,
Յեվ գետերի ընթացք, և լեռների շղթա, և հողմերի պտույտ՝ բեղմնավոր ու զորեղ...

Քո վոտքերի վրա դու կբերես հետքեր
Ո՜վ գիտե, ինչպիսի՜ արահետների,
Ուր չի կոխել յերբեք ուղևորի վոտքը,
Ուր թերևս դու տեսել ես արևը՝ գիշերի մեջ՝
շռայլ ու անհատնելի…

Յեվ քո լեզվի վրա, ճաշակելիքի,
Դու կբերես, ո՜վ գիտե, ինչպիսի՜ քաղցրություն-
ներ…
Ի՜նչ հյութերով արդյոք դու կլինես լիքը,
Յեվ վորպիսի՜ թույներ կընդունես…

Քո ռունգերում անմահ բույրե՞ր դու կբերես,
Վոր թերևս և վոչ մի մահկանացու
Դեռ չի շնչել կյանքում, վոր թերևս
Կենսատու յեն, կամ, գուցե, մահացու։ —

Յեվ քո ուղևորի արթուն ականջներում
Դու կբերես ձայնե՞ր գերերկրային,
Անապատի ձայներ ու անտառների, ձայներ, վոր
թագնըվում են ու կանչում են հեռուն,
Յեվ սողունի ձայներ, և՛ կրիայի…

Այս յերգս քեզ եմ ձոնում, ո՜վ ճանապարհորդ,
Ո՜վ անհայտ հորիզոնների գտնիչ, —
Ընթացի՛ր, գնա քո ուղին, և լինի թող այն քար-
քարոտ,
Անվհատ թո՛ղ լինի վոգիդ և կարոտդ թո՛ղ լինի
աննինջ։ —

Հազար կարավանի բեռներից ավելի
Հարուստ կլինի վոգիդ վերադառնալիս,
Իբրև բարիք՝ կբերես բաղձանք անբավելի,
Կպարգևես նրանց, վոր ցանկացան քեզ մահ և
կորուստ դառնագին…

Իսկ յեթե ընկնես ճանապարհից և չվերադառ-
նաս, —
Ո՜, մեռնելուց առաջ, վերջին ժամին,
Քո ռունգերի՛ց, քո սրտի՛ց, քո հետքերի՛ց հառ-
նած՝
Քեզ կողջունեն որերդ — և՛ անցյալդ, և՛ ներկադ,
և՛ գալիքդ՝ միանգամի՛ց…

Յեվ կողերից ներքո շռայլությամբ վերջին
Արևը իր բույրը կվառե,
Իսկ ժամանակը, վորպես հավերժական յերգիչ —
Կշշնջա անմահական բառեր…

1933. II. 27.

ՏԱՂ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յեթե հիվանդ ես դու և տկար ե՛ վոգիդ,
Յեթե հոգնությունն ե՛ յերգում քո յերակնե-
րում —
Այս յերգս քեզ չի՛ ամոքի,
Բանդի ապրողներին և միայն յերգը բարիք բե-
րում։ —

Բայց դու կարող ես լինել անեզրությամբ տկար,
Յեվ տխրությունը, վոր բարիք ե բարձրագույն
և ծնվում ե վոգու կարոտից —
Կարող ե ծանր լինել քո ուսերի համար
Յեվ դժնի տենդ դառնալ, իբրև մշուշ իջնել, և
աչքերդ զրկել փարոսից...

Յեթե տխրությամբ ես տկար և վոգու անեզրու-
թյամբ,
Յեթե հիվանդ ես դու յերգի կարոտով —
Յես քեզ ապաքինում և ոգնություն կտամ,
Յեվ դու վոտքի՛ կելնես, և կողջունես այս յերգս
քո վիշտը փարատող։ —

Ապա կընկնես ինձ հետ ուղի աղետավոր,
Յեվ քեզ հետ միասին, ո՛վ կարոտի յեղբայր,
Մենք կընթանանք անխոնջ դեպի կարոտ մի նոր,
Յեվ դժնությունը մեր մեզ կթվա չնչալ...

Բեղմնավո՛ր ե այսոր մեր մարգագետինը,
Մեր հրկիզված արտը վորքա՜ն արգասավոր, —
Ո՞ւմ համար ե այսոր, վոր հորիզոնը մթին ե,
Ո՞ւմ համար ե արեգակը դժնի, ո՞ւմ տաղն ե
այսոր գիսավոր...

Նրանք շրջում են այսոր հիվանդ ու անբուժելի,
Յեվ մաքառումը նրանց ընդդեմ մահվան —
Մաքառում ե արդեն մահացող, ի վերուստ խեղ-
ված ուժերի. —
Ո՛, մահու պարտված հիվանդներ, մեր որերի գըր-
քում ձեզ համար միայն մա՛հ ե գրված...

Դուք դժվար եք մեռնում. և ձեզ համար այն ո՛վ ե,
Վո՞ր գուսանը թշվառ ու մահատիպ,
Վոր ունայն նվագների ավյունով
Պիտի կյանք սրսկե ձեր ցամաք յերակները, և
ձեր մեռյալ սրտերը — հուսո հատիկ...

Դուք դժվար եք մեռնում. մաքառումով, ահով,
Յեվ որերի այս բուռն ովկիանում
Յեթե հնար լիներ — սուզվողների նման չեյի՞ք
արդյոք
Մեր վոտքերից կախվել, վոր մեզ ել՝ ձեզ հետ
միասին՝ քաշեյիք անդունդը...

Բայց ձեզ համար ունենք մենք ձեռքերում մեր
պիրկ
Ո՜, դանակ պողպատյա, և վո՛չ յերգի հարված, —
Ո, անսացե՛ք ուրեմն այս կարոտի յերգիս,
Վոգինե՛ր ըմբոստ ու կարող, վաղվա հրով վառ-
ված...

Ձե՛զ եմ ձոնում այս յերգս, ո՛վ դուք, վոր այ-
սօրվա
Մեր խնդությա՛ն, մեր յերգի, մեր փառքի արշա-
լույսին,
Գալիք այգաբացի կարոտի տակ կորված՝
Ընթանում եք յերգիս հետ միասին, —

Յե՛վ թեկուզ լինում եք դուք յերբեմն ծանրա-
բեռնված
Կարոտով, վոր նման ե հիվանդության, —
Այս տողերով, վսեմ այս դեղով կազդուրված՝
Դիմեցե՛ք դեպի անհայտ հեռուները — և հեռու-
ները ձեզ անմահությո՛ւն կտան...

1933. II. 28.

ՏԱՂ ՁՈՆՎԱԾ ԳՐՔԵՐԻՆ

Ո՜, գրքերի աշխարհը — տիյեզերք ե անեզր: —

Արևների նման բազմապիսի,
Յե՛վ աստղերի նման, և՛ շողերի —
Յես սիրում եմ գրքերը, վոր աշխարհի մասին
Բարբառում են անձուկ ու մտերիմ:
Տարփանքով, ինչպես պատանին,
Վոր սիրում ե իր լույս ընկերուհուն փարվել —
Յես սիրում եմ գրքերը թե՛ նոր, թե՛ հին,
Թե արվեստով գրված, թե անարվեստ:
Բայց և կամքով անշեղ, ինչպես ղեկավարը,
Ինչպես այրն ե հասուն ձգտում սիրած գործին, —
Յես սիրում եմ գրքերի աշխարհը,
Իմ խոհերի վսեմ այրուձին: —

Նրանք շատ են ու բազմապիսի, տարբեր ու գու-
նագեղ,
Ծնված զանազան դարերում ու յերկրներում,
Յուրաքանչյուրը բերում ե մի առանձին պարգև,
Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ ե կրում: —

Մեր կյանքի յերկար ճանապարհին
Հանդիպում են նրանք հետըհետե,
Յեվ դառնում են ընկեր ու մտերիմ,
Կամ մնում են անցած տարիների յետևը։
Ուղեկից են դառնում մինչև ի մահ
Մի քանիսը միայն՝ անդավաճան հավետ, —
Յեվ այնպիսի՜ գրքեր կան, վոր չարքերի նման
Հալածում են մեզ մինչև վերջ։
Գրքեր կան, վոր կյանքում մի ակընթարթ միայն
Մեզ ժպտալով՝ անցնում են ու կորչում,
Բայց նրանցից մնում է մեր սրտերում մի բան,
Վոր տարինե՜ր ենք մենք անրջում։
Գրքեր կան, վոր խոժոռ են ու խստադեմ,
Ինչպես ուսուցիչը, կամ առաջնորդը, —
Յեվ այնպիսի՜ գրքեր յես գիտեմ,
Վոր հայրերի նման անհաղորդ են։
Աղջիկների նման սեթևեթ
Կան կարկաչուն գրքեր, վոր հանդիպում են մեզ,
Հրապուրում, գերում — և մոռացվում հավետ...

Ո՛, գրքերի աշխարհը — տիյեզերք է անեզր։ —

Նրանք շատ են ու բազմապիսի,
Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է ուրույն,
Յեվ պատմում են նրանք մեզ աշխարհի մասին
Խոսքերով անկրկնելի և անագորույն։ —
Կան անզգեստ գրքեր, կան պճնազարդ
Ֆոլիանտներ, վորոնք սնամեջ են, ինչպես
Ասորական արքա Բալթասարը,

Վոր պճնում էր իրեն պչրուհու պես։
Յեվ անարվեստ գրքեր կան, վոր բնության նման
Խառնիխուռն են թվում, խառնիճաղանճ,
Բայց գերում են, կապում մինչև ի մահ,
Յեթե անխոնջ վոգով և տքնությամբ ջանաս
Խորասուզվել, բանալ գաղտնիքները նոցա,
Նոցա ներքին դաշնությունն հասկանալ, —
Այդ գրքերը խոհի ամրոցներ են գոցած,
Յեվ կբացվեն քո դեմ, յեթե լինես անահ։ —
Գրքեր կան, վոր դրսից նման են հոյաշեն
Դղյակների, սակայն ներս ես մտնում դու յերբ —
Գաղջ՝ շնչում է դեմքիդ ամայության փոշին
Յեվ սեղմում է կոկորդդ մի մեռյալ ձեռք։
Անտառների նման գրքեր կան թանձր ու մութ,
Կան ովկիանի՜ նման անհուն գրքեր,
Կան զեփյուռի նման, նման քամու,
Կան, վոր գգվում են մեզ, ինչպես ձեռքեր։ —
Յե՜վ սրինգի ձայնով, և՛ շեփորի,
Յե՜վ վորոտի ձայնով կան գրքեր,
Յեվ կան անձայն գրքեր, վոր լուռ
Սրսկում են մեր սիրտը յեղերական կրքեր...

Ո՛, գրքերի աշխարհը — տիյեզերք է անեզր։ —

Յես սիրում եմ նրանց բազմախորհուրդ
Այս ինքնությունը դաշն, անկրկնելի,
Նրանց միջև յեղած տարբերությունն այս խոր, —
Յեվ բոլո՜րն են նրանք ինձ սիրելի։
Արեգակի բոլո՜ր յերանգների նման,

Տիյեզերքի նման բազմալեզու —
Յես սիրում եմ նրանց յերփներանգ
Այս հուրերը կիզուն։
Յեվ բնության բոլո՜ր ձայների,
Յեվ մարդկային կյանքի բուրմունքների բոլոր
Այս ճառագումն եմ յես սիրում վերին,
Այս բո՜ւյլը միշտահոլով։
Յեվ այս ամենը՝ մեծ մի դաշնություն կազմած,
Կազմած ուրույն մի կյանք, մի ինքնամփոփ աշ-
խարհ —
Մեր տների փայտյա դարակներում բազմած՝
Ապրում են լո՜ւռ կյանքով և կենդանի չեն հար։
Յես սիրում եմ նրանց լաբիրինթոսն այս լուռ,
Յերանգների՛, գույնի՛ շռայլությունն այս մեծ,
Ինձ սիրելի չե միշտ բազմազեղումն այս խոր…

Ո՛, գրքերի աշխարհը — տիյեզե՛րք և անեզր։ —

1933. VI. 2.

ՏԱՂ՝ ՁՈՆՎԱԾ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻՆ

Այս մատյանները հին, մագաղաթյա,
Այս հաստակող գրքերը՝ ձեռքով գրված, —
Վորքա՜ն, վորքա՜ն մեջքեր՝ ցավից կորված
Յեվ վորպիսի՜ կորով ու յերկաթյա
Համբերություն ու կամք են նոցա ծնել…
Ո՛, հանճարեղ ճորտե՛ր, վոր չեք քնել
Գիշերներով յերկար, ու կապարե, ու կույր,
Ինչպես դարերը ձեր, ինչպես անլույր
Տքնությունը ձեր խեղճ ու սրբազան…
Ո՛, բարբարոս բերքի հազարամյակ դաժան,
Անարշալույս խավար ու տքնություն,
Յեվ անպտուղ մտքի խոովք անդավաճան,
Յեվ կեղեքող վոգու հանճարեղ թո՜ւյն…

Անհավասի՜կ նստած են կորաքամակ՝
Արծաթյա միրուքներով և աչքերով բորբոք,
Յեվ գրում են վոգու սովկության համար
Մագաղաթյա գրքեր… Ո՛, անթափանց ցնորք,
Կույր դարերի ծնած ո, զառանցանք հալիտ —

Վոգու աղքատության ու տաժանքի գնով
Ո՜, անտենչանք վատնում ստեղծագործ մտքի…
Այսպես նստած դարեր՝ վոսկեղենիկ գրչով
Ճորտությունն են իրենց վոսկեզօծել, —
Ինչպես նստեր այսոր մի հանճարեղ աղջիկ
Յեվ գիշերվա խավարը ստեղնագործեր…

Անկարելի սիրով, տքնությունով անլուր,
Հաճախ անխոցելի ճարտարությամբ,
Մանրակրկիտ, ինչպես հանելուկ,
Հրաշալի, ինչպես հարություն
Զարմանալի լեգենդը — զարդարել են էջերը
Գրերով թռչնազարդ ու ծաղկապատկեր, —
Յեվ դարձել է մռայլ միջնադարյան գիշերը
Նրանց աչքին ցնորք մի լուսակերտ։
Յեվ տանջանքով իրենց ստեղծագործ վոգու
Կատարելով հրաշքը այդ սնամեջ —
Ճաշակել են նոքա բերկրությունը թագուն,
Վոր տալիս է խոնջենքը խոհերին մեր։ —
Յեվ վերացած վոգու հիացմունքով անհուն այն,
Բավարարված այդ խուլ յերջանկությամբ —
Թագցրել են նոքա իրենց նվաստ անունը՝
Հավատալով հոգու անմահության…

Ո՜, միամիտ ճորտեր, թեկուզ և հանճարեղ. —
Ահավասիկ ձեր հին ճարտարությամբ տարված՝
Մենք փորձում ենք ձեր հին անունները ճարել
Մատյաններում այս հին՝ ձեր ձեռքերով գրված.
Չենք հավատում մենք ձեր հոգու անմահության,

Բայց գիտենք՝ գրքերն այս մագաղաթյա,
Վոր գրել եք մի որ դուք խոնարհ տքնությամբ —
Դարձել են ձեզ համար — մահու պատյան։ —
Այս մատյանները հին, այս սնամեջ
Դամբարանները, վոր ձեր հանճարեղ ձեռքով
Զարդարել եք մի որ դուք արվեստով անմեռ
Միջնադարյան մռայլ կամարների ներքո…

1933. I. 28.

ՏԱՂ՝ ՁՈՆՎԱԾ ԲՆՈՒԹՅԱՆԸ

Ո՜, Բնությո՜ւն, ո՜, Մա՛յր, —

Մշտահոլով, մշտագո և մշտատև, —
Դո՛ւ, վոր փոխվում ես հար,
Բայց մնում ես և կաս բազմաձև, —

Ո՜, Բնությո՜ւն, ո՜, Մա՛յր։ —

Ահա՛ աստղերը քո և յերկինքներդ ահա՛,
Ահա՛ ընթացքը քո մշտահոլով, —
Յեվ արեգակդ ահա՛, և հորիզոնդ ահա՛,
Յե՛վ ովկիաններդ լուրթ, և՛ լեռներդ լազուր, և՛
    գետերդ բոլոր։ —

Ո՜, Բնությո՜ւն, ո՜, Մա՛յր։ —

Յեվ ուժերդ ահա՛ կենսապարար՝
Ինքնաբուղխ, մշտնջենական և հարափոփոխ, —
Յեվ վոգին իմ ահա՛, վոր տիրաբար
Դեպի քեզ է ձգտում՝ վողողված լույսերիդ տա-
    րափով։ —

Ո՜, Բնությո՜ւն, ո՜, Մա՛յր։ —

Խուժի՛ր, տեղա՛ իմ մեջ, սուզվի՛ր իմ մեջ բոլոր
Քո աստղերով, ծովերով և յերկինքներով,
Քո ընթացքով անկանգ ու մշտահոլով,
Քո ուժերով՝ թե՛ կյանք, թե՛ խնդություն բերող։ —

Ո՜, Բնությո՜ւն, ո՜, Մա՛յր։ —

Բայց չես սիրում դու մեզ, չես մերձենում դու,
    յերբ
Մենք հայեցող վոգով ենք ձգտում հասնել
Քո ընթացքին, քո վազքին, քո վեհությանը
    պերճ,
Քո խորհուրդին՝ բազմաշխարհ և բազմաստեղ։ —

Ո՜, Բնությո՜ւն, ո՜, Մա՛յր։ —

Դու դաժան ես ու բարի, դու հեզ ես և անողոք,
Դու սիրում ես շարժումը, զորությունը, ուժը, —
Ունայնությամբ ես լցնում ու հողով
Դու հայեցող սրտերը, վոր խեղճ են և քնքուշ
    են։ —

Ո՜, Բնությո՜ւն, ո՜, Մա՛յր։ —

Յեվ առաջին անգամ դու չե՞ս տվել արդյոք
Քո արևից, քո սրտից մի բեկոր —
Այն զարմանալի ճարտար և հանճարեղ մարդուն,
Վորը վո՛չ թե սրտի մորմոքով,

Այլ ձեռքերով կոպիտ վերցրել է քարը
Յեվ զարկել է մի ուրիշ քարի —
Յեվ արևի զատիրը իր խրճիթն է տարել,
Վոր գիշերի գրկում վոսկեվորիկ պարի...

Ո՛, Բնություն, ո՛, Մայր։ —

Յեվ չե՞ս տվել արդյոք դու ծովերիդ անեզրու-
թյունը
Յեվ բարիքներդ նրանց խորքերի, —
Այն ըմբոստին, այն խիզախ ճանապարհորդին,
Վոր ծառերի դալար ճյուղքերից
Հյուսել է մի առավոտ ուռկանն իր առաջին
Յեվ նետելով խորքը ծովերի —
Բռնել է ծովային մի վոսկեծամ աղջիկ
Յեվ իր խուղը տարել, իբրև գերի...

Ո՛, Բնություն, ո՛, Մայր։ —

Յեվ այսպես — սիրել ես դու խիզախներին միայն,
Յեվ մայրական անեզր համբերությամբ —
Քո գաղտնիքները, գանձերը, քո ուժերը նրան
Հանձնել ես ստեղծարար մի գերության...

Ո՛, Բնություն, ո՛, Մայր։ —

Բայց մարդը, տիրանալով քիչ-քիչ անեզրական
գանձերդ,
Այն շինել է շղթա ու կապանք,
Կեղեքելու համար ուրիշների անծիր,

Տքնջական, հանապազորյա աշխատանքը. —
Յեվ նրանք, վոր յեղել են դաժան ու ամեհի,
Վոր ճորտերից շորթել են քո բարիքներն անհուն —
Շղթայել են վոգին ընապաշտ և մատնել են
մահի՝
Պղծելով և նզովելով քո անունը...

Ո՛, Բնություն, ո՛, Մայր։ —

Յեվ հանճարին մարդու, նրա ստեղծարար
Յեվ անսահման կարող ձեռքերին,
Բաղձանքներին նրա և ըղձերին վարար,
Յեվ նրա հանդուգն կրքերին —
Կապանքներ են դրել նրանք բազմապիսի,
Որենքներ՝ ահով սահմանած —
Պատնեշներ են կանգնել արևներիդ լույսին,
Վորպեսզի սիրտը քո մեզ չբանաս...

Ո՛, Բնություն, ո՛, Մայր։ —

Բայց այժմ վիթխարի և զորավոր ուժեր
Պատերազմի յելած այդ բերդերի դեմ —
Դարձնում են նրանց պատնեշները փոշի՝
Հանուն հացի, լույսի, աշխատանքի վսեմ, —
Յեվ պատերազմը այդ դժնի ու անողոք,
Այդ մարտնչումն՝ ընդդեմ շահագործող մարդու —
Չե՞ արդյոք արշավանք դեպի լուսավորող
Քո գիրկը զվարթուն —

Ո՛, Բնություն, ո՛, Մայր...

Պայքարների դժնի ճանապարհով
Բազմություններ ահա բազմահազար,
Վոր դարերով գրկից ու գգվանքից կարոտ
Հնձել են, բայց չեն ճաշակել բերքերդ սրբազան,—
Դեպի քե՛զ են գալիս, դեպի անեզրական
Յերկինքնե՛րդ բազմաշխարհ ու բազմաստեղ,
Իբրև տե՛ր են գալիս, իբրև տիրակա՛ն,
Գալիս են, վոր աստղերիդ և ընթացքի՛դ անգամ
Իրենց ստեղծարար հանճարը պատվաստեն,—

Ո՛, Բնությո՛ւն, ո՛, Մա՛յր։—

Ընդունի՛ր ուրեմն նվաճողներիդ յերթը,
Իբրև արգանդդ հին բեղմնավորող բարիք,—
Ընդունի՛ր վորդիներիդ հաղթանակի յերգը,
Վոր հնչում ե ընդերքից աշխարհի։—
Ընդունի՛ր նաև այս յերգը գարնական,
Վոր քո չնչին հյուլեն մի գիշեր աստղալից
Մատուցեց քեզ սիրով ու վորդիաբար՝
Վողջույններով խորհուրդդ աստղային...

Ո՛, Բնությո՛ւն, ո՛, Մա՛յր։—

1933. II. 27.

Տաղ՝ Զոհված Մեռյալներին

Տխրությամբ ու դառնապատիր ցավով ենք ձեզ
    դնում ճանապարհ,
Ո՛վ անդարձ հեռացողներ, ո՛վ մեռյալներ,
Դո՛ւք, վոր չեք վերադառնալու այլևս և մնալու
    չեք հար
Տիեզերքի զարկին անհաղորդ, և չեք ճաշակելու
    բույրեր, և չեք լսելու ձայներ...

Դուք գնում եք մոխրանալու և դառնալու տա-
    րերք,
Խառնըվելու հողին ու ջրին,—
Եվ ի՛նչ ասեմ յես ձեզ.— անիմաստ են բառերը,
Գուցե այն միայն, վոր վախճանվելը վիճակված
    ե, ավա՜ղ, յուրաքանչյուրի՛ն...

Բայց յեթե միևնույնն ե վախճանը բոլորիս գե-
    րեզմանից անդին,
Յեթե նույնն ե մեր բախտը հեռանալուց հետո,—
Ապա տարբեր ե հուշը, հիշատակը, այն զրույցը
    անդին,

Որ մնում է սրտերում մարդկանց և լցնում է սրտերը կարոտով...

Բայց ի՞նչն է, ի՞նչն է արդյոք, որ մոխիրից հետո
Լուսազարդ ու շքեղ վե՛ր է հառնում,
Լցնում է օրերն ապագա անմարմին բույրով
Ու դառնում է յերգ ու զրույց, և հիշատակ է դառնում...

Ա՜խ, մոխրանում են օրերը, մոխրանում են աստղերը, արևնե՛րն են
Կապույտ յերկնքներում հանգչում հավերժաբար և մոխրանում, —
Մոխրանում է գարո՜ւնը, մոխրանում են կանաչ տերևները,
Մոխրանում են ծիլերը չծլած, և վարդերը վառման, և ծաղիկներն անգամ մոխրանում...

Բայց չի մոխրանում հիշատակը... Հիշատակը արդյոք լույսերի՞ց է,
Լույսերի՞ց է արդյոք նա սերում, թե հուրերից անշեջ. —
Հիշատակը սերում է գործերից. — հիշատակը մշուշ է,
Որ բարձրանում է յեփվող ջրերից, բայց մնում է ինքը — անմեռ։

Հիշատակը ձեր անցած օրերի արձագանքն է ու ցոլքը, ո՜վ հեռացողներ,

Նա ծլում է հաճախ ձեր անցած ճանապարհի փոշոտ յեզրերին,
Ցոլնելով ձեր շող կեսօրին՝ նա իջնում է հետո, ինչպես ցողը,
Բայց ուրի՜շ վարդերի վրա, իբրև պարգև վերին...

Ցոլնելով ձեզանից, ձեր սրտից, ձեր խոհերից անդուլ,
Ցոլնելով արյունի՛ց անգամ ձեր և ձեր շնչից վերջին —
Հիշատակը ձեզ չի՛ պատկանում, ինչպես որ տողերն իմ հանդուգն
Ո՜, ինձ չեն պատկանում, թեև յելնում են ահա իմ գրչից...

Այդպես էլ շողն է արևի ու ցոլքը մեռած աստղերի. —
Հասնում է լույսը նրանց մեզ, բայց վաղո՜ւց մոխրացած են նրանք։ —
Մոռացությո՜ւն ուրեմն բոլոր մեռյալներին,
Ու փա՜ռք նրանց ընդմիշտ ու հավիտյան, որ թողել են կյանքում հիշատակի կրակ...

1933. II. 27.

Ողջերթ Մեր Հանճարեղ Վարպետներին

Սիրելի Միքայել Մազմանյանին

Ա

Մեր վարպետները հնուց տուֆ են սիրել ու մարմար,
Շունչ ներշնչող են յեղել կարծր քարին ու հողին.—
Մեր վարպետները հնուց յերգ են սիրել ու պայքար,
Մահ են բերել անքանքար, բութ ու տխմար ախրողին.—
Յես խոնարհում եմ գլուխս հանճարի առջև ձեր անճառ,
Ո՛վ վարպետներ, վոր տվիք — ձև, կերպարանք մեր հողին։—

Բ

Քաղաքներ եյիք կառուցում, կամուրջներ, բերդեր ու տներ,
Հոյակապ շենքեր, վոր դրին հանճարեղ կնիքն իրենց վառ
Վողջ ճարտար արվեստի վրա՝ Մասիսից մինչև Միջագետք,
Մեր յերկրից մինչև Արևմուտք՝ անելով գոթականն անմար...
Ձեր ձիրքով թողիք աշխարհում դուք անանց և անջինջ մի հետք,
Յեվ մնացիք հավիտյան քերթության վարպետներ անմահ...

Գ

Աշխարհի ծայրերում բոլոր մենք գտնում ենք հիմա բեկորներ,
Վոր տաշած կողերի վրա աստղաձև խաչեր են կրում.—
Այդ՝ կորած անուններն են ձեր, ո՜վ անանուն վարպետներ,
Վոր կերտել եք լուռ ու անցել — և ձեր շունչը թողել դարերում.
Չի հաջողվում մեզ թեկուզ ձեր անունները գտնել,
Բայց գիտենք, վոր ապրել եք դուք — գետնաքարշ, խարխուլ խուցերում։

Դ

Ունեյիք դուք չափ ու կշիռ, ունեյիք ձիրք անհեղլի,
Վոր նյութին տալիս եր վսեմ կերպարանք ու ձև խորըզգա.
Թո՛ղ ձեզանից ուսանեմ յես այսօր գաղտնիքը գեղի,
Վոր արվեստս լինի դաշնավոր, ինչպես ձեր հըմտությունն հսկա.
Ո՛ւժ ներշնչեք իմ յերգին, վոր ընթացքը իր չշեղի,
Վոր ժառանգորդը դառնամ հանճարեղ արվեստի ձեր վոսկյա։

Է

Ուզում եմ աշակերտ լինել ձեզ և տիրել արվեստին ձեր անհուն,
Վոր տողերս լինեն մեջտեղից ձեր վոսկյա որենքով հատած,
Վոր հանգերըս լինեն հարդարած ձեր արդար, անխաբ թելադրով,
Յեվ ձեր նուրբ քարերի նման՝ բառերս լինեն սրբատաշ.
Թող ձեր հին շենքերի նման գործերս մնան անանուն,
Բայց լինեն դարի արևով և յերկրի յեղյամով պատատ...

Զ

Մինչև իմ մեջ և այսօր արթնացել հանճարը ձեր սեգ.
Յե՞ս եմ շառավիղն արդյոք ձեր, ո՜վ հանճարներ մեր մեռած.
Թո՛ղ հուրհուրա իմ գրքում ձեր վոգու ցոլքը լուսե,
Թո՛ղ յերգերում իմ այսօր, խոսքերում իմ — ձեր ջանքը յեռա։ —
Ո՛վ մեր մեռած վարպետներ, իմ թախանձանքը լսե՛ք. —
Ձեր անմահ կնիքը դրե՛ք — իմ անմար յերգերի վրա...

1934. VI. 6.

ՅՈԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱԼԻՔԻ ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԻՆ

Ո՜վ գալիքի սերմնացաններ, վոր լիաբուռ
Նետելու յեք ձեր սերմը մեր ձեռքերով հերկած
Այս դաշտերում, բերրի այս հերկերում՝
Մեր քրտինքով, յերգով և արյունով ներկած, —
Ո՛վ, վոր գալու յեք գվարթ ու թեթևաքայլ,
Արևի և վոգու ծնծղաներով ձեր լուրթ, —
Ահավասիկ գրում եմ, վորպես հեռու յեղբայր,
Ձեր ընթացքի համար յոթը խորհուրդ։ —

Յեվ առաջին խորհուրդս, վոր հղում եմ կարմիր
Մեր օրերից այս բորբ ու գալիրնարեր. —
Անդրանիկ բուռը ձեր անեզրական սերմի
Մեր դաշտերի վրա իբրև ցնո՜րք թափեք։

Փա՛ռք իբրև բարիք, վոր անհատնում է,
Մեր յերկրի թռչուններին ու հովերին, —
Թող անսահման լինի նրանց խնդությունը,
Անսահման եր ինչպես տառապանքը մեր հին։

Դեպի Հյուսիս հղեք ձեր շնորհը յերկրորդ,
Դեպի տափաստաններն ընդարձակ,

Ուր բռնկած Կարմիր Ուրագանը մի օր
Այս հերձեցյալ յերկրում և ամենուր
Գարնան անձրև՛ դարձավ։

Իսկ յերրորդ բուռը ձեր անհասանելի սերմի
Դեպի լյառը Մասիս սերմանեցե՛ք, —
Թող թանձրացյալ թաչի, իբրև ցնորք ջերմին,
Դեպի կուրծքը նրա ձյունածեծ։ —

Ապա մի բուռ ցորյան կամ ցնորք,
Ձեր խոհերի նման լուսափայլ ու աղնիվ
Սերմանեցե՛ք դեպի այս հին ավանը Նորք,
Վոր այնտեղ նո՛ր յերգի մի նո՛ր բողբոջ հասնի։

Հինգերորդ բուռը ձեր անհասանելի գանձի
Սերմանեցե՛ք փողո՛ւն մեր ի նվեր,
Վոր օրերում հեռու յերկնեց այս յերգն անծիր,
Այս յերազանքը վեհ։

Իսկ վեցերորդ ձեր բուռը, ո՛վ սերմնացաններ,
Հղեցե՛ք անցյալի՛ վոսկորներին, —
Ցեվ կլսեք հանկարծ հառաչանքի ձայներ
Մեր յերկրի բոլոր խորքերից։ —

Ցեվ նո՛ր ապա, այս վեց հղումներից հետո,
Լցրե՛ք դուք բուռը ձեր և, յոթերորդ անգամ —
Ձեր ապագա հունձքի անե՛զրը կարոտով
Սերմանեցե՛ք ձեր հերկը անեզրական…

1933. II. 11.

ՅՈԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱԼԻՔԻ ՅԵՐԳԱՍԱՆՆԵՐԻՆ

Բազում ուղիներով ու հերկերով անցած,
Ցեվ ճաշակած արդեն իմաստության
Դառնապատիր պտուղը, — ահա տալիս եմ այս
Խորհուրդները յես ձեզ, ո՛վ մեր վաղվա անհաս
Յերգասաններ փառքի ու վեհության։ —

Ահավասիկ, ո՛վ դուք, իմ առաջին
Խորհուրդը, վոր գալիս է կյանքից ու դարերից. —
Չմոռանա՛ք յերբեք, յերբ հյուսելու լինեք ձեր
յերգը շառաչուն,
Վոր յերգը յերկրի՛ց է աճում, և վո՛չ թե ձայնե-
րից կամ բառերից։

Յերկրորդ խորհուրդը, վոր տալիս եմ ձեզ ահա,
Ո՛, անհողդո՛ղդ պահեք իբրև պատգամ. —
Յերգը — ընթացք է ու հուն, և՛ տեղ է, և՛ վոգու
աղամանդյա վահան,
Ցեվ բարիք է, և՛ շնորհ անանձնապատկան։ —

Յերրո՛րդ խորհուրդը ձեզ, ո՛վ գալիքի
Յերգասաններ. — դարե՛րն են ձեզ հետևում. —

Թէկուզ դարն է ծնում և յերկիրն է տալիս յեր-
գին շունչ ու վոգի —
Բայց յերգը յերկրից ու դարից միշտ յերկար է
տևում:

Ուրեմն, ով գալիքի յերգասաններ,
Վորքան էլ վեհ լինի ձեր ներկան —
Չմոռանա՛ք, վոր դուք պիտի սերմեր ցանեք,
Վոր լինեն դարից ձեր — յերկար:

Յեվ իմացէ՛ք ուրեմն, վոր վո՛չ մի աշխատանք
Տքնաջան չէ այնքան, վորքան վոգու հերկը. —
Ի սկզբանն էր բանը, և բանն էր ճիգ ու ջա՜նք,
Յեվ ջանքին առընթեր էր — յերգը:

Ուրեմն, ով գալիքի յերգասաններ,
Ձեր վոգու տեգերով զրահավորված՝
Տքնեցե՛ք տքնաջան ու հնչյունները ցանեք՝
Հերկելով հերկերն անցյալի՝ հանուն գալիք որ-
վա: —

Յեվ ասում եմ ահա — ձե՛զ, վոր պիտի յերգեք՝
Կարդալով մատյանն այս խորախորհուրդ —
Խորհուրդ չի ընդունում ապագայի յերգը, —
Յեվ այս է իմ խորհուրդը յոթերորդ...

1933. II. 16.

ՉՀԱՎԱՔԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատգամ

Նոր լույս ծագեց աշխարհին.
Ո՞վ այդ արևը բերեց։ —

Ահա վոսկյա մի արև՝
Ճառագումով իր հրե՝
Այգաբացի պուրպուրե
Նժույգների վրա հեց՝
Նոր աշխարհին ու մարդուն
Հղում է լույս զվարթուն։
Նոր աշխարհին ու մարդուն
Ո՞վ բերեց լույսն այս արթուն,
Ո՞, ո՞ւմ ձեռքով վառվեց, ո՞ւմ
Հրակարմիր, հրավառ,
Ադամանդյա լույսը այս։ —

Կքած կյանքի բեռի տակ.
Խոր գերության ընդերքում,
Իմաստության մի գետակ
Հիմարության համերգում —
Քանի՜ տարի, քանի՜ դար
Վկայեցիր անհերքում...

Ափերին այն խավարոտին,
Ուր հայրենիքն էր մեր հին, —

Չկա՞ր արդյոք գետ մի հորդ,
Վըղր գերության անհաղորդ՝
Լուրթ՝ հոսելով դարից-դար՝
Մթության մեջ այն համառ
Այս այգաբացն էր կրում,
Հո՜ւր այգաբացն այս հեռու՝
Հնուց պահած իր ջրում
Ո՜, ըղձակա՛ն այս հեռուն...
Կքած կյանքի բեռի տակ՝
Հոգի՜ անկոր, հո՜ւր գետակ...

Ահա վառվում է մեր նոր
Հաղթանակի լույսը բորբ.
Լվանում է նա հիմա
Վառվող հոգին մեր անմահ,
Զքնաղ արև՛ն այդ արի,
Վառված հրով աշխարհի...
Չկա՜ ուրիշ արև էլ.
Նա՛ չէ միայն, որ դարեր
Անմար՝ պիտի արևե...

Լույսով վառված սակայն այդ՝
Նժարներից հիմա մենք
Հիմարությամբ չթափենք
Իմաստությունն այն արար.—
Մեր անցյալի խորամիտ
Ե՞ջն այն արդար ու ռամիկ՝
Մեծահանճար ու վարար...

1933. V. 9.

Մեր Լեզուն

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս,
Վառված հրով անշեջ դարերում հին։—

Յեվ վարպետներ, խոնարհ ու հանճարեղ,
Հղկել են այն դարեր, որպես մարմար,
Յեվ փայլել է նա մերթ, ինչպես բյուրեղ,
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար։

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,—
Յեվ յեթե մենք այսօր կոտրատում ենք այն
մերթ—
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր խոհերի վրա ժանգ չչոգի։—

Այդ նրանից է, որ մեր այսօրվա ոգուն
Այլևս չի կարող լինել պատյան
Վո՛չ Տերյանի բարբառը նվագուն,
Վո՛չ Նարեկի մրմունջը մագաղաթյա։—

Յեվ վո՛չ անգամ Լոռու պայծառ յերգիչ
Թումանյանի բարբառը գեղջկական, —
Բայց նա կգա — լեզուն այս յերկաթյա բերքի
Յեվ խոհերի այս խո՛ր ու յերկրակամ...

1933. I. 28.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Յես սիրում եմ նրանց, յուրաքանչյուր անգամ
Յերբ թերթում եմ եջերը բազմալիսի.
Մեկը լալիս է ջերմ, կամ աղերսում անկամ,
Մեկը նզո՛վք նետում մեր ավերիչ յեսին։ —

Ա՜խ, տողերում նրանց յուրաքանչյուր
Ինձ համար կյանք կա, կամ — կա մահվան սերմ. —
Ա՜խ, միևնույն թափով դեպի մահ է մղում,
Յեվ դեպի կյանք — մյուսը՝ կարոտով ջերմ...

1933. I. 27.

Անվերնագիր

Նրանք գալիս են անտես ու աննշմար,
Ինչպես արյունն է հոսում յերակներում,
Բերում են մեզ բոլորիս թե կյանք, թե մահ,
Նետում են բախտը մեր անեզրական հեռուն։ —

Յեվ ի՞նչն է սահմանում նրանց ղեկավար,
Յեվ ի՞նչն է նրանց բեղմնավորում —
Հավետ անհայտ է մեզ, ինչպես սրտի համար
Արյան ընթացքը, որ ամոքում է բերում։ —

1933. I 27.

Հ. Թ.

Յես կարդում եմ նրան ու ասում. — Այս հմուտ,
հանճարեղ Լոռեցին
Հոմերի, Գյոթեյի հետ մի որ՝ հավասար՝ նստել է
քեֆի,
Յեվ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տվել
ու առել,
Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ խրն-
ճույքի նստելիս։ —

1933. IV. 15.

Լ. Թ.

Նա մեծ եր հողով, արյունով։ — Արմատնե՛ր ուներ
Նա հողում։
Իր յերգերը — գեղջուկ նայիրցու քրտինքով եր
նա վողողում։
Հանճարեղ յերգերում նրա — իր յերկրի արև՛ն եր
շողում։ —
Նա մեծ եր հողով, արյունով։ — Արմատնե՛ր ուներ
նա հողում։ —

1933. IV. 17.

Լ. Թ.

Նա մեծ չեր ավելի, քան յեղավ։ — Յերկընքի
նման ընդարձակ,
Ովկիանի նման՝ իր վոգին ընդգրկել եր կյանքը
անեզր։ —
Յեվ վոգու ափերին նստած՝ նա նայում եր հա-
յացքով պայծառ —
Յեվ վորսում եր յերգեր ու խոհեր, և տեսնում
եր չքնաղ յերազներ…

1933. IV. 15.

* * *

Նա չեկավ Հյուսիսից։ — Ծովերի փրկության փառքով էր նա մեծ։ —
Բայց հեծում էյինք մենք դարեր — կրկնակի գերության ներքո։
Մեզ ճնշում էր բռունցքն հայրենի։ — Նա կտրեց այն իր ձեռքով։
Չունեյինք մենք դարեր — հայրենիք։ — Եվ նա մեզ հայրենիք տվեց։ —

1933. IV. 16.

Ա. Մ.

Նայիրյան արև՛ն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած.
Կործանվող մեր յերկրի համար դու յեղար փրկության առագաստ։ —
Դու տվիր ընթացք և ուղի մեզ մինչև դարերն հեռակա. —
Նայիրյան արև՛ն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած։ —

1933. IV. 16.

Վ. Մ.

Նա սիրում էր մեռնող քաղաքների տենդը
Յեվ պատկերներ զարհուր և հոնդուն յերգեր։ —
Նա — պայքարող մարտիկ։ — Դա լեգենդ է,
Վոր իր մռայլ մահով նա հավիտյան հերքեց։

1930. 14. III.

Մ. Մ.

Արյուն է յեղել աշխարհում։ — Յեղել է յեղեռն
ու կռիվ։
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի յելած
իրար դեմ։
Աշխարհից հեռու մի գյուղում, յեղեգնյա մի
սրինգ կտրած,
Արև՛ է յերգել ու գարուն այս հիվանդ, հանճա-
րեղ պատանին։ —

1929. X. Լենինգրադ

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Մեծ է մեր դարն, ինչպես ովկիան, և ովկիանում այդ անհուն,
Վորպես արև անեզրական — քո անունն է բարձրանում։
Յեվ մղում ՚է մեր դարն առաջ քո անունը հրավառ,
Ո՛, հանճարեղ մեր Ղեկավար՝ բարձրախոհ ու բարձրանուն...

1933. V. 16.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՁԱՆԻՆ

(Յերևան, Աբովյան հրապարակ)

Քո պատվանդանը փոքր է չափազանց։ —
Բայց մեծ էր արդյոք հերկը հայրենի,
Վորի բարգավաճ գալիքին ընծա
Դու հանճարը քո և կյանքը բերիր։ —

1933. V. 30.

ԳՅՈԹԵՅԻՑ

Բարեկա՛մ, անխախտ հասկացի՛ր դու սա.—
Դարում, ուր Վոգին ու Միտքն են հորդում —
Լոկ առաջնորդվել կարող է Մուսան,
Բայց ինքը արդեն չի՛ առաջնորդում։ —

1932. X.

ՊԱՏԱՍԽԱՆ ԳՅՈԹԵՅԻՆ

Ո՜, Վայմարցի՛, այս աշխարհում յերբ
Չեն լինի Վոգու տերեր ու ճորտեր —
Կհնձե կրկի՛ն բազմաբեղուն բերք,
Յեվ կրկի՛ն, կրկի՛ն ուղիներում մեր
Յերգի դիցուհի՛ն մեզ կառաջնորդե։ —

1933· IV· 14·

Ակրոստիքոս

Արեգա՛կ, ովկիան զորության,
Րոպե առ րոպե
Փայփայի՛ր, տո՛ւր զորություն
Էակին այս, թո՛ղ բորբ տրոփե
Նրա սիրտը դեռ մաքուր ու թույլ.
Իմաստուն ու բարի՛ դու.—
Կյա՛նք, լո՛ւյս, աճում ու բարիք։—

Չհերկած դաշտերում աշխարհի,
Արեգա՛կ, դեռ ինչքա՜ն չարիք.
Րաբբի՛ դու, ուսուցիչ բարի.
Էությամբ քո լցվի՛ր նրա մեջ.
Նվիրի՛ր քո կորովն անշեջ—
Ցոլքդ թող յերբե՛ք չմարի։

1938. IV. 18.

Ակրոստիքոս

Արևի նման բոցվում է,
Րոպե առ րոպե բացվում է
Փոքրի՛կ իմ, սիրո՛ւն իմ մանկիկը.
Էությամբ ամբողջ նա հո՛ւր է,
Նա չքնա՛ղ է, քնքո՛ւշ է, մաքո՛ւր է.
Իմ մանկիկը փա՛յլ է, փրփո՛ւր է.
Կա՞ արդյոք նրա պես անգինը...

Չարե՛նց, քո գովքը գո՛ւր է.
Արեգակը, որ բարձրանում է —
Րոպե առ րոպե սնում է,
Է՜յ, նայի՛ր, — նրա պես հարյուրը...
Ներբողի՛ր քո յերգով նրա հուրը,
Ցրելով մտքիդ մրուրը...

1933. V. 8.

Ակրոստիքոս

Արևի նման փայլում է,
Րոպե առ րոպե քայլում է
Փոքրիկ իմ, քնքուշ իմ մանկիկը.
Եվոլյան քնար է նրա ձայնը.
Նա անբիծ է, ինչպես վաղորդայնը.
Իմ մանկիկը լուսատու իմ ջահն է.
Կա՞ արդյոք նրա պես անգինը...

Չե՛ս գտնի նրա պես մի հուրը.
Արևի նման նա կիզում է.
Րոպե առ րոպե մեծանում է.
Ե՜յ, նայիր. նա արդեն խոսում է...
Նայես ի՞նչ է նրա անունը.
Ցանկացողը կգտնի, թե ուզում է։ —

1933. V. 8.

Անվերնագիր

Չկա՛ քեզ պես սիրուն մանկիկ, —
Ասում եմ քեզ, իմ դուստր անգին.
Բայց վաղը, երբ դու մեծանաս,
Աշխույժ վազես, փողոց գնաս, —
Գալու չես ինձ ասես, անգի՛ն.
— Դուրսը ինձ պես այնքա՛ն մանկիկ...

1933. IV. 19.

N. N.

Դու մեր մեջ ամենից կրտսերն ես,—
Յեվ մոխիրի վրա մեր անցյալի
Ուռճանում է քո մեջ ապագայի սերմը՝
Մեր դպրության գալիքը պանծալի։—

1933. IV. 18.

Մակագրություն Մի Գրքի Վրա

Յերգերդ աղբյուր են զուլալ՝
Մեր յերկրի սրտից բղխած։
Դո՛ւ, մեր յերկրի՛ պես շռայլ,
Մեր յերկրի՛ պես հորդառատ ու բաց։

Կարդալով քո գիրքը անհուն՝
Հավատում եմ Գալիքին մեր վեհ։—
Ո, վորքա՜ն է սիրտը վեհանում,
Վոր նման յերգեր է տվել։

Պայծառ է մեր յերկրի գալիքը,
Ո՛, բերրի հերկերի գուսան։—
Թող հավետ ապրի այս ծաղիկը
Մեր դաշտերում բուսած։—

1933. III.

N. N.

Ա՛յր խեղճամիտ, վոր հասած որ ծերության, մի
կտոր
Հացն է չինել սկզբունք, և ծառայում է համեստ
Ով վոր փշրանք խոստանա — ու, նրա՛ն լոկ, դեմ-
քին քաշելով
Բո՛ղ թափանցիկ, վոր ծածկե մորթն իր՝ անչափ
հաստաբեստ...

1933. VI. 3.

HEINRICH HEINE

Յես սիրում եմ քեզ, Հա՛յնրիխ Հա՛յնե,
Դու մոտիկ ես ինձ չափազանց։
Յերգերիդ միջից քո ձայնը
Հնչում է ինձ հա՛ր հարազատ։

Դու մոտիկ ես ինձ, Հա՛յնրիխ Հա՛յնե,
Թմբկահար, մարտիկ ու պոետ։
Յերբ բացվեց հոգուս վաղորդյանը —
Սիրեցի նվագները քո յես։

Սիրեցի յերգերիդ քնքշությունը,
Յերազներդ չքնաղ ու նրբին,
Տխրադեմ, դու մտար իմ տունը՝
Վոսկելար քնարը ձեռքիդ։

Բայց հետո, յերբ մի քիչ մեծացա յես —
Սիրեցի թմբուկըդ հնչեղ,
Սիրեցի շեփորող քո ձայնը,
Վոր գիտե պայքարի կոչել։

Իսկ ապա, յերբ ճամբիս ծաղիկները
Փոխվեցին փշերի ու խոցի —
Սիրեցի յերկմիտ շշուկներդ
Յեվ հեգնանքդ, վոր նման է բոցի։

Ինչպես դու — յես ել աշխարհում այս
Ապրում եմ դարում հողմաշունչ,
Յեվ յերգերս խնդուն, յես խրում եմ
Հնի սիրտը, ինչպես մի դաշույն։

Ինչպես դու — յես ել մաքրով իմ
Ապրում եմ գալիքում դեռ չեկած,
Յեվ գնում եմ առաջ յերգերո՛վ իմ՝
Դեռ գլուխս ներքև չթեքած։

Բայց ուղում իմ, վորով ընթանում եմ —
Յերջանիկ եմ ավելի, քան դու.
Ո, իմ դա՛րն ե այսոր, վոր տանում ե
Ինձ դեպի խոյանք մի անդուլ։

Յեվ գալիքը այն, վոր, Հա՛յնե,
Մի ցնորք եր հեռու քեզ համար, —
Շողշողում ե, ինչպես վաղորդյանը,
Յեվ թնդում ե շուրջս հիմա։

Բայց ելի ուղին իմ դժվար ե
Յեվ նման ե ուղուն քո վերին…
Ինձ հետ ե թեկուզ իմ դարը,
Բայց իմ դեմ ե մարդը դեռ հին։ —

Նա դեռ կա։ — Այսոր ել նա նստել ե
Ինքնագոհ, կառչած իր բույնին, —
Յեվ նա նո՛ւյնն ե, նո՛ւյն ֆիլիստերը՝
Չնայած դիմակի գույնին։

Ո, պաշտում ե այսոր նա գույնը,
Իսկ միջուկը — ատում ե հոգով։
Նա ատում ե սերը, քնքշությունը,
Իր հույզերը կապում ե թոկով։

Նա մոլի ձաղկող ե, ուղղափառ ե,
Խուզարկու չե հոգու ու սրտի,
Նա սիրում ե միայն գաղափարը,
Պայմանով վոր… չլինի խրթին։

Ամենից առաջ քննադատ ե
Նա այսոր, — յես ծանոթ եմ նրան.
Նա սիրում ե դնել իր թաթը
Իմ գրքերի վրա։

(Քո մասին ե միայն իմ խոսքը,
Ո, կարմիր հագած ֆիլիստե՛ր,
Յեվ վոչ թե նրանց, վոր իրոք
Մեզ ասում են լենինյան խոսքեր)։

Նա լսել ե, վոր այսոր պոետը
Նախ մարտիկ ե, քաղաքացի, —
Թե վարդի մասին խոսես հետը —
Նա քեզ կտա քացի։

Բայց, չնայած սրան,
Նա ինքը կյանքում
Սանտիմենտալ ե այնքան,
Վոր սիրուց տնքում ե անքուն։

Նրա շուրջը չեռանդով անդուլ
Կառուցում են մարդիկ կոմունիզմ, —
Գիշերները նա Կրեմլին է կարդում,
Ցերեկները — հայհոյում է ինձ։

Դեռ նա կա այսօր, դեռ նա կա,
Յեվ հոդված կամ ռեցենզ գրելիս
Նա սիրում է բառը «հակա»․
Չափից ավելի…

Իր փառքով—չափազանց նա անսանձ է,
Կհաներ նա ինձ կախաղան,
Թե չզսպեր նրան — ղեկավարի սանձը,
Վոր միակ զսպիչն է նրա։

Այդ նա չէ միայն, վոր նստել է
Կոկորդին իմ ու թքում է թույն, —
Այդ կարմրազգեստ Ֆիլիստերը,
Իմ դահիճը այդ մշտարթուն։

Իհարկե, ունեմ մեղքեր յես,
Ուրանալն այդ — անշուշտ անհեթեթ է, —
Բայց գիտեմ, վոր թեթև են մեղքերս,
Քանզի յես — պոետ եմ։

Յեվ ինչպես ուսուցիչը մեր մեծ
Ներում եր քո բոլոր մեղքերը, —
Գիտեմ, վոր ինձ էլ կների
Դասակարգը—իմ փոքրիկ հանցանքները։

Նա հաղթող է այսօր, նա մեծ է,
Ովկիանն է նա մի ընդարձակ, —
Նրանով է, վոր յես մնացել եմ
Դեռ դահճիս ձեռքով չհնձած։

Զլիներ թե նրա հաղթությունը —
Իմ դահիճն ինձ վաղուց եր կերել,
Յեվ դարձել եր արդեն իմ անունը
Վոտնակոխ արված մի տերև։

Բայց կարո՞ղ է նա այդ անել։
Վո՛չ։ Նա չէ այսօր կյանքի հիմը։
Բարձրանում է աշխարհ մի անեզր,
Վոր քո՛նն է անշուշտ և իմը։

Իսկ խխունջը այն, վոր նստել է
Տզրուկի նման մեր քթին, —
Նա կանցնի, ինչպես ստվերը,
Յերբ արևը հասնի զենիթին։

Այս արևը, վոր հար բարձրանում է,
Կխանձե նրան իր հրով, —
Բայց նրա ցոլքերում մեր անունը
Կհիշեն գգվանքով ու սիրով…

1933. V. 25.

ՀԱՅՆԵՅԻՆ

Ո, Հայնրիխ Հայնե,
Ո, Հայնրիխ Հայնե, —
Հնչում էր քո ձայնը,
Կանչում էր քո ձայնը,
Ինչպես փողորդայնը…
Ո, Հայնրիխ Հայնե,
Ո, Հայնրիխ Հայնե…

Խիզախ թմբկահար դու,
Մարտիկ ու պոետ,
Աշխարհը ու մարդը
Երգում էր քո հետ.
Գալիքն ու աշխարհը,
Քո որն ու քո դարը —
Երկինքը օտար էր
Երգին քո հավետ…

Ո, Հայնրիխ Հայնե,
Մարտիկ ու պոետ։ —

1933։ V. 23.

FROH EMPFIND' ICH MICH NUN...

(Գյոթեյից)

Զգում եմ խնդուն՝ դասական հողով եմ կրկին
ներշնչվել ես։
Հին և նոր կյանքը ինձ հետ բարձր են խոսում
ավելի։
Ա՛ստ եմ լսում խորհուրդներ, թերթում եմ նոցա
վաստակները
Վարժ ու հմուտ իմ ձեռքով, նոր հրճվանքով
շարունակ։

1933։ V. 17.

ANAKREONS GRAB

ԱՆԱԿՐԵՈՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

(Գյոթեյից)

Աստ, ուր վարդն է ծաղկում, ուր վորթն է փար-
վում դափնենուն այն,
Ուր տատրակն է ճախրում, ուր միշտ ծղրիտն է
յերգում,
Ո՞ւմ գերեզմանն է այստեղ, վոր փռել են վրան
աստվածները
Վողջ ճոխությունը կյանքի։—Անակրեոնն է հանգ-
չում։
Գարուն, և՛ ամառ, և՛ աշուն — վողջը կյանքում
ճաշակեց նա,
Բայց ձմռանից նրան ցուրտ թումբն այս ծածկեց
վերջապես։

1933. V. 17.

WANDRERS NACHTLIED

ԹԱՓԱՌԱԿԱՆԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՅԵՐԳԸ

(Գյոթե՛յից)

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԻԱՆՏ

Գագաթները ննջում են
Անդորր։
Լռություն է քո շուրջը
Խոր։
Թռչունները անտառում, հանդում
Քնել են՝ պարուրված մութով.
Սպասի՛ր մի փոքր՝ շուտով
Կքնես և դու։

WANDRERS NACHTLIED

ԹԱՓԱՌԱԿԱՆԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԳԸ

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԻԱՆՏ

Գագաթներին իջել է
Անդորր։
Կատարների միջև այն
Չես զգում դու
Անգամ թեթև մի շունչ։
Անտառում թռչունները լռել են.
Կաց միայն՝ դու և՛ս
Կքնես անշուշտ։

WANDRERS NACHTLIED

ԹԱՓԱՌԱԿԱՆԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԳԸ

ԵՐՐՈՐԴ ՎԱՐԻԱՆՏ

Գագաթներին իջել է
Անդորր։
Կատարների միջև այն
Չես զգում դու
Վո՛չ մի շարժում դեռևս։
Թռչունները քնել են մութով.
Կաց միայն՝ շուտով
Կքնես դու և՛ս։

1933. V. 17—20.

ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ԵՊԻԳՐԱՄՆԵՐԻՑ

IN DER GONDEL LAG ICH...

(Գյոթեյից)

Յես պառկեցի գոնդոլում, — և սահեց նա կողքով
նավերի այն,
Ծանր նստած են վորոնք Մեծ Ջրանցքի ջրերում։
Շատ ապրանքներ կգտնես նրանց մեջ, վոր մեզ
միշտ պետքական են՝
Հաց, պտուղներ և գինի, չոր, յեղեգնյա վառելիք։
Մենք սահեցինք անշշուկ։ — Յեվ հանկարծ դափ-
նենու մի չոր ճյուղքը
Դեմքս չանգռեց։ — Ասացի. — «Դա՛փնե, խփում ես
դու ինձ.
Յես հատուցում եմ ուզում»։ — Բայց նիմփը,
խնդուն, շշնջաց ինձ.
«Ծանր չե՞ն մեղանչում պոետները։ Թեթև՛ է ձեր
տուրքը։ — Վողջո՛ւյն»։ —

1933. V. 21.

SCHENKE

ՄԱՏՌՎԱԿ

(Գյոթեյից)

Անվանում են պոետ մի մեծ
Բոլորը քեզ շուկաներում։
Յերգում ես դու — ուրախ եմ յես,
Լռում ես — ջերմ ունկ եմ դնում։

Բայց սիրելի յե ինձ անշուշտ
Համբույրը քո անխոս, անբառ.
Զի՞ վոր բառերն անցնում են շուտ,
Այնինչ համբույրն զգում ես հար։

Լավ է յերգը, բայց հայեցումն
Ավելի յե ոգտակար մեզ.
Ուրիշներին յերգեր դու տուր,
Մատռվակին — լռությունն վես։

1933. V. 21.

LIED UND GEBILDE

Յերգ յեվ Քանդակ

(Գյոթեյից)

Հույնը մարմին կերտելիս
Տրորի թող կավը։
Ո, հրճվի թող մարդը միշտ,
Յերբ կերտում է լավը։

Բայց մենք սիրում ենք խառնել
Յեփրատի հորդ հունը,
Յեվ ձեռքերով մեր բռնել
Հոսուն բնությունը։

Ջուրը կարծր կդառնա,
Կհնչեն յերգերը,
Յեթե մաքուր են միայն
Պոետի ձեռքերը։

1933. V. 21.

DERB UND TÜCHTIG

Պինդ յեվ Ամուր

(Գյոթեյից)

Աշխատանքը պոետի,
Ո, խիզախ է հար։
Եվ ինչ եք ինձ հայհոյում
Անվերջ, անդադար։

Յեթե պահը տանջանքի
Դառը թվար մեզ —
Կլինեյինք կրկնակի
Մենք համեստ ու հեզ։

Համեստությունը թողնենք
Կույսերին բողբոջ,
Վոր քնքշությունն են սիրում,
Կոպտությունը — վոչ։

Համեստությունը, — ո, նա
Հարկավոր է, յերբ
Իմաստությունն է խոսում
Խորիմաստ, մեզ հետ։

Աշխատանքը պոետի
Ո, խիզախ է հար.
Յերգիր, — քեզ հետ կլինեն
Սրտերն հրավառ։

Ո, անշուրջառ տերտերնե՛ր,
Լեզու չքերեք.
Միևնույնն եմ յես — թեկուզ
Դուք ինձ մահ բերեք։

Ձեր խոսքերը սնամեջ,
Վոր ասում եք դեռ —
Կոշիկների նման յես
Մաշել եմ արդեն։

Թող ջրաղացը յերգչի
Իր աղունն աղա. —
Հասկացողը կների
Մինչև վերջ նրան։

1933. V. 21.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

(Պուշկինից)

Վորթատունկի աստվածն ուրախ
Թույլ է տալիս յերեք բաժակ
Ըմպել քեֆին յերեկոյան։
Առաջինը՝ Շնորհների
Կենացն անբիծ ու ամոթխած,
Յերկրորդ բաժակը՝ կարմրադեմ
Յեվ կարմրաշուրթ առողջության,
Յերրորդն՝ ազնիվ մտերմության։
Իմաստունը յերրորդից վերջ
Վայր է առնում դափնին գլխից
Յեվ ուղերձ է արդեն հղում
Հանգստավետ Մորփեոսին։

1933. V. 18.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

(Պուշկինից)

Ապրում էր մի աղքատ ասպետ
Յեվ լռակյաց, և բարի,
Տեսքով՝ գունատ ու խստադեմ,
Վոգով՝ խիզախ ու արի:

Տեսել էր նա տեսիլ մի վառ,
Մտքի համար անքննին,
Յեվ տեսիլն այդ հավիտյան — հար
Դրոշմվել էր իր սրտին:

Այդ օրվանից հոգով անխոնջ
Նա կանանց չէր նայում էլ,
Նա մինչև մահ վոչ մի կնոջ
Չկամեցավ խոսք ասել:

Պարանոցին, շալի տեղ, մի
Չոր վարդարան նա կապեց,
Յեվ պողպատե քողը դեմքի
Վոչ-վոքի դեմ չբացեց:

Սիրտը լցրած սիրով անեղծ
Յեվ ցնորքով այն անահ՝
A. M. D. *իր արնով գրեց*
Իր վահանի վրա նա:

Յեվ հեռավոր Պաղեստինում,
Պալադիններն ուր ուրիշ
Իրենց տիկնանց եյին դիմում
Դեպի կռիվ թռչելիս —

Lumen coelum, Sancta Rosa,
Բացականչում էր նա խենթ,
Յեվ վորոտի նման կոչն այս
Սփռում էր մահ ու աղետ:

Դառնալով իր ամրոցն հեռու
Փակ մենակյաց նա դառավ,
Միշտ անբարբառ և միշտ տխուր,
Իբրև մի խենթ, նա մեռավ:

1933. V. 18.

Арм.ССР им. А. Мясникяна

ԱՇԽԱՏԱՆՔ

(Պուշկինից)

Ժամն ըղձական արդ հասավ. ավարտված է յեր-
կար աշխատանքը։
Ի՞նչ է թախիծն եվ անհայտ սիրտս կրծում ան-
դադար։
Գո՞ւցե վաստակս ավարտած՝ յես կանգնել եմ,
ինչպես բեռնակիրը՝
Վա՛րձն իր արդեն ստացած, ա՛յլ վաստակի ան-
ընտել։
Կամ տքնությա՞նս եմ ցավում, գիշերվա լռակյաց
ուղեկցի՞ն իմ,
Վոր մտերիմն եր իմ տան, քույրը Այգի վոս-
կեղեն։

1933. V. 17.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՎ

Եջ

Սասունցի Դավիթը 6
Պատմության քառուղիներով 41
Դեպի լյառը Մասիս 54
Մահվան տեսիլ 64
Զրահապատ «Վարդան Զորավար» 121
Գալիքի վորմնադիրները 128
Համայնական դաշտերի սերմնացաններ 135
Գովք Խաղողի, Գինու և Գեղեցիկ Դպրության 147
Նորք 162

ԱՐՎԵՍՏ ՔԵՐԹՈՒԹՅԱՆ

Սոնետ 175
Nostalgia I 176
» II 177
Թումանյանի յերգերը 178
Գիշերային պահերն այս քո 179
Կարծում են նոքա 180
Յեթե փակվեն հավիտյան 181
Ինչ ունեցել է 182
Դու գիտես, վոր քո 183
Մոնումենտ 184

ԳԻՐՔ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ

Էջ

Ռուբայիներ 187
Դիստիքոններ 211
Բեյթեր 228

ՏԱՂԵՐ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Տաղ սիրո ձոնված ապագայի պարմանիներին 233
Տաղ յեկվորներին վողջունելու համար 236
Յերկրորդ տաղ յեկվորների համար 238
Տաղ՝ ձոնված խիզախ ճանապարհորդին 239
Տաղ հիվանդների համար 242
Տաղ՝ ձոնված գրքերին 245
Տաղ՝ ձոնված մանրանկարիչներին 249
Տաղ՝ ձոնված բնությանը 252
Տաղ՝ ձոնված մեռյալներին 257
Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին 260
Յոթը խորհուրդ գալիքի սերմնացաններին 263
Յոթը խորհուրդ գալիքի յերգասացներին 265

ԶԱՆԱԶԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատգամ 269
Մեր լեզուն 271
Անվերնագիր 273
Անվերնագիր 274
Հ. Թ. 275
Հ. Թ. 276
Հ. Թ. 277
Նա յեկավ Հյուսիսից 278

Էջ

.. .. 279
Ա. Մ. 280
Վ. Մ. 281
Մ. Մ. 282
Անվերնագիր 283
Խաչատուր Աբովյանի արձանին 284
Գյոթեյից 285
Պատասխան Գյոթեյին 286
Ակրոստիքոս 287
Ակրոստիքոս 288
Ակրոստիքոս 289
Անվերնագիր 290
N. N. 291
Մակագրություն մի գրքի վրա 292
N. N. 293
Heinrich Heine 298
Հայնեյին 299
Froh empfind' ich mich nun 300
Անակրեոնի գերեզմանը 301
Թափառականի գիշերային յերգը (ա. վարիանտ) 302
Թափառականի գիշերային յերգը (բ. վարիանտ) 303
Թափառականի գիշերային յերգը (գ. վարիանտ) 304
Վենետիկյան եպիգրամներից 305
Մատրոսակ 306
Յերգ և քանդակ 307
Պինդ և ամուր 309
Անվերնագիր 310
Անվերնագիր 312
Աշխատանք .. ..

տպված է պետհրատի տպարանում յե-
րևանում ■ հազար ինը հարյուր յերե-
սուն յերեք թվին ■ յերեք հազար որի-
նակ վերժե թղթի վրա և յերկու հազար
որինակ հասարակ թղթի վրա, ■ սրբա-
գրությունը կատարել են սոս հակոբյանը
և վահրամ մանուկյանը ■ էջերը կապել է
ավետիս կողարաշյանը ■ գլավլիտ № 8130
հրատարակ. № 2560 ■ պատվեր № 1140

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՀՀ Ազգային գրադարան
NL0358859

48889